Դիպուած չեն ասոնք, այլ նախախնամուր թեան ձեռաց մէջ մարդիկ առաջնորդող միշոցներ:

ԱՆՁԱՋՍՊՈՒԹԻՒՆ

4. Ամենամեծ մարդը, «անձ», «ես» կոչուած՝ կայսրութեան վրայ տիրողն կամ անձը զապողն է:

2. Խսահակ նեւասնի շնիկը դրասեցանին վլրայ ցատկելով լամբարը շրջած, եւ տարիներէ իվեր ի գիր առած հաշիւներն այլ բած էր: Առանց բարկանալու, նեւասնի ըստաւ, ո՛վ Տայմինա (շնիկին անսւնը) չես գիւտեր թէ որքան մեծ վնաս տուիր ինծիւ:

3. Սոկրատ երբ զգար թէ բարկութեան պիտի զրգառուի, իսկոյն ցած ձայնին խօսիլ կը սկսէր. Գոյցէ բերանդ, որ բարկութիւնու չսաստկանոյ: Մարդիկ բուռն բարկութեան մէջ յանկարծամահն են եղած:

4. Խնչակս կընսա տանիլ ուրիշն նոր լատութիւնը, հարցուցին մէկուն: «Ես ըստ

մարդը, ի ընէ ձեղ նման դիւրագրգիր եւ բարկացող եմ. գիտեցի որ մարդիկ երբ բարկանան բարձրածայն կը խօսին, ուստի կանոն ըրի ինծիւ որ ձայնո ըստրձրացնեմ, ձայնա վաղեմ որ կիրքիս յաղթեմ և յաջողեցայ:

5. Միիմայէլ Անճէլո յարձակում կրեց մարդէ մը որ զարնելով քիթը, վիրաւորեց: Աշխարհահռչակ նկատեալն ասկայն քիթին պրիւնը բանելով ըստ մարդուն. «Քու անունդ պատութեան մէջ միայն իմ քիթս պրիւնող պիտի մնայ:

6. Բարկութիւնը զտպելն է քաջութիւն. նու որ չէ կարող չբարկանալ միմորմէն, իսկ ա'յն է իմաստուն որ չբարկանար կըսէ մատենագիր մը:

7. Ոերիկիւսի մօտ մարդ մը եկաւ ա'յնքան բարկացած, որ իսկոյն սկսու ճչել, ազաղակել, յանդիմանել, հայհայել: Վերջապէս յոգնելով լուեց: Տուն վերադառնալու, համբայ ելլելով տեսաւ որ դուքը միջներ էր: Լապտերը վառէ եւ այս մարդը տունը տար ըստ բերիկէս ծառային որ կատարեալ

լըսութեամբմարդուննախատանացտարափին
համբերածէր Աթէնքի իշխան ըլլալով
հանդերձ:

8. Երեւելի զինուորականի մը տարապանաքարին վրայ այսպէս գրուածէ. Այստեղ կը հանգչի մեծ զինուոր մը քաջ, որ չընկրկեցու թշնամոյն առաջ. բայց էն մեծ մարտը այն ատեն մղեց, երբ բարկուրեան մեջ իր ամձին յաղբեց:

9. Պիտառն կ'ըսէ, առաջին և ամենամեծ յաղթութիւնն է իր անձն նուածել, իսկ իր անձէն յաղթուիլը ամենէն ամօթալի և խայտառակ բանն է:

10. Իմաստունը կ'ըսէ. Այն որ, զորաւոր կիրքի տէր ըլլալով հանդերձ անարատ եւ պարկեցա կը մնայ, եւ յետին ծայր զգայուն ըլլալով հանդերձ, գրգռուած ատեն կրնայ ինքունքը զսպել զօրաւոր է նա, չերսու մը դիւցազուն մ'է նա:

Ա. Կ. Ա.

ԱՐՈՂՉԱԿԱՆ

Պիթօն կը պնդէր թէ, եթէ լու զննէին մարդիկ, պիտի տեսնէին թէ շտամեր վիշտէ կը մեռնին. և Գերման իմաստասէր մը կը յաւելու թէ, «շատ աւելի մարդիկ կը մեռնին մարդի աղդեցութեամբ քան թէ մարմին»: Ասով հանդերձ, եթէ ուղելին յիշել այն հրաշալի Դարմանները ծիծաղին ազգեցութեան մասին, վերջը պիտի չգար անոնց լուարկութեան:

Տօդ. Լուան ժուպէռ հիւանդ մը ունէր, որմէ յայու այլեւ կտրած էր, և իրը դեղաման մը խաւալծիլ տուած էր, միայն բան մը տուած ըլլալու համար: Այս գեղը հիւանդին մօտի սեղանին վրայ դրուած էր: Հոգեվարքին սերական կապիկը մագլցելով յանկարծ սեղանին վրայ ելլելով կ'սկսի ամանին պարունակութենէն ճաշակել: Ականջները կը ցնցէ, քիթը, բերանը կը ծումալով է, բայց ամենով գեղը կը կլլէ: Բնականաբար դեղին արդիւնքը երանալու ըսւանարա Կապիկը վշտալի կերպով փորը կը շիէ, կը տապալովի, չըսդին կը դառնայ այնպիսի ծաղրաշարժ մնջկատակութեամբ:

մըսր հիւանդը կը մարփենդալէն, ջուարթու-
թեան այս թափը կը հազացնէ, թքնել կու-
տայ, խնչել կուտայանոր, աղփը և առւուշով
կը ցնցէ պյափիսի կերպով մը որ շատով կը գդայ
ան, ընդհանուր թեթեւացում մը իր ցաւե-
րուն Եւահա պյափէս մեր մարդուկը կ'ազտափ
մոհուանէ, իր կապիկը մաքրողական մը ա-
ռած ըլլալուն . . . :

ՈՐԿՐԱՄԱՂԻՆ. — Գինեմղին սիրոք մեկ
վայրկեանի մէջ 70 կծկում ունի: Ուովհետեւ
իւրաքանչիւր կծկում՝ 200 կրամ արիւն կը
մզէ շնչերակներուն մէջ, և արեան ամիսով՝
կշիռն 6000 կրամ կէս վայրկեան կը բաւէ որ
արիւնը կատարէ մարմինին ամրողջ շրջանը
Շնչերակներու բարսախումը սրտիններուն հա-
մազատափանելով չափահաններուն յովիկա-
նոնաւոր բազկերակը 70 զարկ կրւնենայ մեկ
վայրկեանի մէջ: Բազկերակին զարկը՝ մինչեւ
քսաներբարդ տարին հետզհետէ կը նուազի:
Ծննդի տաեն 130 զարկ կը հաշուուին, եր-
բորդ տարբուան մէջ՝ 100, իսկ տասներբարդին
մէջ 90: — Եթէ սնունդը կամ օդն անբա-
ւական ըլլան, սիրտնուերակները շատ նիհար
կըլլան, հետեւաբար քիչ դիմացկուն:

Խիստ տառաւ սնունդը կը բերէ հսա, ինչ-
պէս ամէն կողմէ չափազանց նարպ: Շատակեր-
եւու շնչերակները կը թանձրանան, կը կարծ-
րանան, գրերէ ցարու կը լլան: Այս պատճա-
ռաւ արդեօք աւելի՞ դիմացկուն կը լլան: Բո-
լորզին հակառակը, որովհետեւ մկանային
նեարդներուն տեղը բանոծ է, շատ քիչ հաս-
տառուն չիւսուած մը Ալիովը, արիւնիլ այս
րոյնը, յանախ եւ խիս արագօրէն կը պա-
ճառէ Ամասոյինակ վնասներ: Այս խանգա-
րանները, որ շնչերակներուն պատճառա-
կան եղաղ օգնութիւնը կը նուազեցնին, այս
արդիւնքը կունենան, որ սիրտը կը ստիպուի
աւելի աշխատիլ աւելի ուժով կծկուիլ, որով
եր միջնամաշկերը նախ ծաւալնին կ'աւելցնին
սրտի ընդարձակում, իր բարիսումները (արո-
փում) աւելի ուժգին, աւելի արագ և գլժ-
ուար կ'ըլլան, յաճափ նոյն իսկ ցաւագին: —
Ժամանակէ մը յետայ, սիրտը չկրնար այլես
կպնանաւոր կերպով գործել աշխատութեան
ունեադառուած է, հետեւապէս կը օկարանայ
նիչաբնալով սրտի ընդարձակում, այն տաեն
արեան շրջանը գէշ կը կատարուի ամէն ու-
րեւի: Վերջապէս ընդարձակումը, փոխանակ
ընդհանուր ըլլալու կրնայ կատարուիլ պատիկ

քսակներու ձեւով որ պատռելով յանկար-
ծական մահ առաջ կը բերեն: Շնչերակներու
տոկունութեան նուազումը շատակերներու
եւ մասնաւանդ ալքոլամոլներու մօտ, նոյնպէս
շնչերակներու վրայ պատառումկրնոյ պատ-
ճառել յանկարծական մահ:

Գլուխը զով, իսկ սաքը տաք,
Գլուխը բաց, սաքը մուճակ,
Ոչ թէ գլուխը փաթթոց, գդակ,
Յէս ու գալփագ եւ կամ մուշակ.
Այս սոկեղէն և պարզ կանոն
Պահէ ճշգիւ և օրն ի բուն,
Դու կունենաս առողջութիւն:

Սոսողապահական շատ կարեւոր
ինդիր մ'է թէ մարդ անկողնոյ մէջ ի՞նչ
դիրքով պէտք է պառկի Յժշկական հանդե-
սի մէջ վերջերս հրատարակուած է թէ, ան-
կողնոյ մէջ պէտք է հօրիզոնական դիրքով
պառկիլ: Գլուխը մարմնոյն դիրքէն քիչ մը
բարձր դիրքով: Հետեւաբար պէտք չէ մէկ
գանի գլխու բարձր դիրքել, վասնդի գլուխն
ոյդչափ բարձր բռնելը կը խանդարէ արեան
շրջանը, կը նեղէ սիրտը և կը ճնշէ թռքերը

Կուրծքի տկարութիւն ունեցողներուն միայն
ներելի է գլուխը բարձր դիրքի մէջ պահել
միշտ: Ոտքերն ու բազուկները պէտք է տա-
րածել, շատ կարեւոր է այս բանը՝ արեան
շրջանին դիւրընթացութեանը համար: Բա-
զուկները պէտք չեն կուրծքին վրայ կամ
գլխուն ետին դնել, այս վերջինը շատ վսա-
ստկար է, զանազան հիւսնդութեանց ու
չորեաց պատճառ կ'լլայ: Լաւագոյն է միշտ
աջ կողմին, և մերթ կոնակի վրայ պառկիլ:
(բնաւ չպառկիլ ձախ կողմին վրայ) Այդպէս
սիրտը աղատ կը մնայ: Նարունակ կոնակի
վրայ պառկիլն ալ խորդալու պատճառ կ'լլ-
լայ: — Բարձերը բամպակէ կամ ձիու մա-
զերով լեցուած ըլլալու են, բնաւ փետուր
կամ բուրդ գործածելու չէ բարձի համար:
վասնդի տասնք տաքութիւն յառաջ կը բերեն
և արիւնը գլուխը կը հանեն, եւ այս է պատ-
ճառը որ առաւօտուն գլխու ցաւով կ'ար-
թնան մարդկիկ: Մարմինը չափազանց կեր-
պով ծածկելու չէ: Վերմակն ալ բաւական
լայն ըլլալու է, որպէսզի կարելի լլայ մար-
մինը ծածկել պատշաճօրէն: Անկողինը պէտք
չէ պատուհանին շատ մօտ կամ՝ պատին կից
դնել:

Աստի Պօրհամո անուամբ խտալոցի
մը որ 400 տարեկան մեռաւ 1566 ին՝ գիրք մը
ձգած է Սակաւակեր կիանի անունով, որուն
մէջ երկար խրատներ տուած է ամէն անոնց՝
որք կուղեն իրեն չափ ապրիլ։ Ինքն՝ մինչև
35 տարեկան եղած ատեն՝ այնչափ ցոփ կեանք
մը վարսած էր որ բժիշկները կ'ըսէին թէ ալ
երկու տարիէն աւելի չկրնար ապրիլ։ Գոր-
նասո վախցաւ եւ բալոր սովորոյթները փոխե-
լով՝ սկսաւ ժուժկալ ապրիլ։ Մինչեւ կե-
նացը վերջին օրերը 360 կրամ անչեղուկ որ-
նունդ կ'առանուը եւ 400 կրամ ալ գինի կը
խմէր, չորս անդամուան մէջ, որպէսզի ստա-
մոքար չձանրանայ։ Իր կերակուրները միշտ
կը փոփէր, միս ալ կուտէր։ Միայն վերջին
տարիներն հաւակիթին դեղնուցը սկսաւ ուտել
եւ աւելի վերջն ալ դեղնուցին միայն կէսը
կուտէր։ Աս երատն ալ աւելցուցած է ·
«Կ'աշխատիմ թէ՛ շատ ցուրտէ եւ թէ շատ
տաքէ ինքղինքս պահէլ։ բուռն մարզանքներ
չեմ ըներ, անքուն չեմ մնար ... չեմ կենար
նաեւ այն տեղերն ուր օդն ապականուած է,
և միշտ հսդ կը տանիմ'չ սաստիկ հովին գէմ
կենալ և ոչ արեւուն գէմ»։

Շնչերակներով կ'ապրի մարդու, ուստի
պէտք է շնչերակներն արգիլել որ չժերանան:
Արգէն գիտենք որ սոսի շնչերակներու մէջ
կրային աղեր կը գոյանան, որք արեան շըր-
ջանը եւ հետևեաբար սնունդն ալ կը դադրի.
ուստի մարդո՞ւ որչափ տարիքն առնէ այնչափ
ոլ պէտք է աշխատի որ իր կազմութեան
մէջ մոտած կրային աղերը նուազեցնէ։ Ասոր
համար պէտք է քիչ հաց ուտել, կովու կամ
շխարի միս չուտելընաւ, այլ տուատ պատող,
ձուկ, հաւ, որթի եւ գառնուկի միս ուտել։
Զտուած ջուր խմել մէն մի գտուաթին 40—
45 կաթիլ ֆոսֆոր ային թթու խառնելով,
ոսկորներու կրային գէղերն արգիլելու համար։
Բնթերցողն աղստ է այս կտրէն ուղամին
հետեւելու։ Բայց բուռն հիմք սակաւակեաց
վլալն է։

Ամրան սկզբնաւորութեան հետ շատե-
րուն ալ ստքերը մանաւանդ մասները քըր-
ոմինքէ յաւաջ եկած սպնդանման այտուց-
ներով կը լեցուին, և մաքրութեան պակառ-
թեան պատճառաւ ոտքի քրտինքի գարելի
հատ մը կ'ընկերանայ ատոնց։ Տեսուկ մը աբա-
և այդ, որուն գարմանն է ամէն օր ոտքերը

լուալ, և այնպիսի գուլպաներ կրել, որոնց
հիւսուածքը ցանցաւ ըլլան և լաւ ծծեն: Ու-
քենա առաստ քրտնող անձեր կարելի եղածին
չափ, մանաւանդ տան մէջ թեթեւ ու ծա-
կոտիկն կիսակօշիկներ հագնելու են:

Թուբախսի նոր դարմանն կը կռչուի
Սահօդիմ, որ հազն ու տենդը կը կառեցնէ,
քրտինքը կը կարէ, և մարմնոյն ծանրութիւնը
կ'աւելցնէ: Քանի մը հիւանդներ այս գեղին
շնորհիւ ոյժ առած ըլլալով, կարող կ'ըլլան
նորէն աշխատիլ առաջուան պէօ, եւ իրենց
օրտպահիկը շահիլ նոյն իսկ յառաջացած
վիճակի մէջ գտնուող թոքախտաւորներ
կ'օգտուին այս գեղէն, կ'ըսեն երկու գերման
դիտունք:

Տնիքօր Շվարց վիճակագրութեամբ
ապացուցած է թէ երկար ապրելու համար
անպատճառ կարգուիլ պէտք է: 40 տարե-
կան 200 հոգիէ 125 հոգին կարգուած են, և
75 ը ամուրի. 60 տարեկաններուն մէջ 48
կարգուած կայ եւ 22 ամուրի. 90 տարեկան
12 հոգիէն 9 կարգուած են: Ուրեմն ամուրի
մը 400 տարեկան ըլլալու թող չյուսայ բնաւ:

100 տարեկան 50 հոգիէն 49 կարգուած են
կամ այրիցած: Եթէ երկար ապրիլ կուղէք,
պէտք էք կարգուիլ. եթէ կարգուած չէք
շուտով ճարը նայեցէք:

Կանոններ

ԱՌՈՂԶ, ԵՐՋԱՆԻԿ ԵՒ ԵՐԿԱՐ ԿԵԱՆՔԻ

«Մարմնամարգէ» Թաղուած

- Արմնցածիդիդ պէս անկողնէդ ելիր.
- Ճաշերէ ետև բերանդ ցողուէ.
- Օրը գոնէ երկու ժամ բաց օդի մէջ
անցուր.
- Առանց ճաշի մի՛ պառկիր.
- Աշխատութիւն, ժուժկալութիւն և հան-
գիստ երեք լաւագոյն բժիշկներ են:
- Փափուկ անկողինները վնասակար են.
- Հաստ մի՛ ծածկուիր.
- Բարձր շատ բարձր ըլլայ.
- Զեռքերդ վերմակին տակ մի՛ պահէր.
- Ննջարանին օդը մաքուր ըլլայ.
- Օդ և լցոն հիւանդութիւններն կը վանեն.
- Սեղմող հագաւստ չհագնիլ.
- Կօշիկներն ճիշտ սաքին յարմարելու են.

14. Գլուխ և վիզ միշտ զով պահել:
15. Ամառ չեկած անմիջապէս հագուստ
ներդ մի՛թեթեցներ:
16. Ոտքերը միշտ տաք պահել.
17. Չափազանց մի՛ռւտեր, լաւ ծամէ:
18. Որոշեալ ժամերուն միայն ճաշէ.
19. Շատ տաք եւ շատ պաղ ըմբելիք վնաս
սակար են:
20. Հում կերակուր, ահաս պտուղ վնաս
սակար են:
21. Պատշները լաւ սարգէ:
22. Պատշներուն կուտերը մի՛ կլներ:
23. Ասեղ, կոճակ, գամ ևն. բերանդ մի՛
դներ:
24. Զմելիդ, գանակիդ շեղը բերնիդ մի՛
դպցներ:
25. Ուրիշին գործածած գաւաթէն մի՛ խմեր
լու մը չլուցացած:
26. Ապականած ջուրերէն զգուշացիր:
27. Գօլէրայի եւ ժանտափափ ժամանակ
եռացած ջուրի մէջ լեմնի հիւթ դիր:
28. Մարմինդ տաք եղած ատեն պաղ ջռւր
մի՛ խմեր:
29. Ճաշի ատեն քիչ խմէ:
30. Թէյ և սուրճ զօրաւոր չըլլան:

31. Միայն ըժեշիլին պատուելով գործածէ
դինի, քօնեաք են, ոգելից ընկելեաց
մէջ մորդիկ աւելի կը խեղդուին քան
ծովու մէջ:
32. Կեր և խմէ չափաւորութեամբ, առողջ
կը մնաս և խոր ծերութեան կը հասնիս:
33. Օղին և ծխախոտը կը յիմարացնէ զմորդ:
34. Կակուղ վրձինով ակատներդ խնամով
լուս:
35. Կարծր բաներ կտրելու եւ պատռելու
համար ակատներդ չարաչար մի՛ գոր-
ծածեր:
36. Քիթովդ շնչէ և ոչ բերանովդ:
37. Խօրունկ շնչէ կուրծքը լսոյցնելու համար:
38. Ապականած օդ և փոշի բնաւ մի՛ շնչեր:
39. Տախտակամածին վրայ մի՛ թքներ:
40. Տուն մուած ատենդ կօշիկներդ մաքըրէ:
41. Քրտնած ատենդ օդի հոստիքին մէջ
կամ զով առեղ մի՛ նստիր:
42. Ռաւշէն գոնէ երկու ժամ ետքը լսդանք
ըրէ, 18 աստիճան ջրով 40—45 վայր-
եեան միայն:
43. Լոգունքէ ետե քալէ որ տաքնաւ:
44. Փորհարութեւն, հազ ևայլն ունեցած
ատենդ մի՛ լողանար:

45. Պատկելէ առաջ գաղջ ջրով և աճառով
ձեռքերդ, վիզդ և երեսդ լուսու
46. Հոգ տար աչքերուդ, մի կարգար կամ
մի գործեր արեկին մէջ, վերջալոյսին
պղտոր կամ գողդոչուն արուեստական
լցոնվ, նաև ճաշերու միջոցին, խօսք
մէջ և անկողինին մէջ:
47. Երբ աչքիդ մէջ բան մը մտնէ, աչքի
մի շփեր, սպասէ որ աչքիդ անկիւնը քը
զայն. հակառակ պարագային բժշկին
դիմէ:
48. Առանց ակնարուժին ակնոց մի՛ գոր
ծածեր:
49. Փոքը մատիդ վրայ մաքուր թաց լութ
մը անցնելով ակռաներդ մոքրէ. երբեք
սրածայր բան չդործածես:
50. Երբ ողջ միջատ մը մտնէ ականջդ քանի
մը կամիլ ձեթ դիր մէջը:
51. Եթէ ականջդ ուրիշ առարկայ մը մտնէ
իսկոյն բժշկին դիմէ:
52. Տարսփոխիկ հիւանդաւթիւն եղած
տուն մը ուտք մի՛ կոփեր:
53. Գիբք կամ տետր թթմատած տաենդ
մատդ մի՛ թքոտեր:
54. Ուրիշին թաշկինակը մի՛ գործածեր:

55. Անծանօթները մի համբուրեր:
56. Հազացողներէն հեռու կեցեր:
57. Անստանները մի՛ շցիեր:
58. Մատերդ վէրքիդ մէջ մի՛ խոթեր:
59. Եղոսնդներդ կարճ պահէ և բնաւ մի՛
խածներ:

ԱՄԱՌՈՒԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԻ
ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ 10 ԿԱՆՈՆՆԵՐ

ՏՕԹ. Մ. Ա. ԳԱՅՐԵՒԷՆԱՆ

1. Կերակուր եւ պտուղ թարմ ըլլալու
են, սառնաբան գնելու է ամէն տուն:
2. Պաղ չառնելու պայմանաւ թեթեւ
զկատ գործածել. ասք ոգերը երբ ընդհատ-
ուին, հագւաստը փոքր ինչ թանձր ըլլալու է
կամ հագնիլ վերարկու մը:
3. Կերակուրիք քանակը պակսեցնել
հարկ է, տեսակն այ պէտք է կարգադրել:
4. Ոչ միայն նուազ ուտելու ենք ամա-
ռը, այլ միս, ձուկ, հաւկիթ քիչ ուտելու է.
եսկ կանանչեղէն եւ պտուղ աւելի ուտելու
ենք:
5. Յորեկը հնար եղածին չափ դուլ օդի

մէջ անցնել պէտք է: Բանալ պատուհանները
որ օդ շրջադայէ. գիշերները թեթև վերմակ
գործածել պաղ չառնելու պայմանաւ:

6. Զուրի միջոցով մարմինը զբլացել և
կաղդուրիլ:

7. Երեսը եւ անդամները յաճախ պաղ
ջրով լուալ, նաև մարմինը պաղ ջրով ոքել
եթէ կրնաք:

8. Զուրի լոգանքը կարծատե ըլլալու
է փափուկներու, նիհարներու եւ մանկիկ
ներու հսկուր:

9. Մաելու աստիճան ջուրին մէջ մնալու
չենք, գողալ չկասած ջուրէն դուրս եւ:

10. Ոմանք առատուն, իսկ ոմանք երեւ
կոյին կը յանձնորարեն լոգանք, երկուքն
մին ընտրէ, բայց ոչ երբեք կերակուրէ վերջ՝

Ս. ուղղաքնոյ համար պէտք են, նախ նըն
ջարանի չերմութիւնը 45 աստիճանէ աւելի
ըլլալու չէ: 2. Ննջարանը լուս օդաւորեալ
ըլլալու է: 3. Անկողնոյ ծածկոցը թեթև եւ
բայց բաւական տաքութիւն տուող ըլլալու
է, և պէտք չէ քնացողին վրայ ճնշէ: 4. Գլ
լուխը փաքը ինչ բարձր պէտք է ըլլայ, եւ յ
շատ լոյս պէտք չէ ներս թափանձէ:

Լ. իմոնաքը կարեսրութիւն կ'ըստանայ.
մտերս Տօք. Ռիկը հաստատեց որ իտար մը
ջուրի մէջ 6 կրոմ' լիմոնի աղ (ասիս սիթրիք,
լիմոն թուզ) դրուելով շինուած լիմոնատի
մէջ քոլերայի պասիլ կը ժամէն կը սատկի,
և թիֆօինը 24 ժամէն: Երբ այդ լիմոնատը
որեին ճառագայթներուն հնթարկուի, քո-
լերային միքրոպը օ վլյորկեանէն եւ թիֆօինը
երկու ժամէն կը սատկին:

Տօք. ՏԱՐԱԽԱՐԵԱՆ

4. Մարգոց կենաց միջին տեսղութիւնը
40 տարի է:

2. Երկրի բնակչաց երկանակեցութիւնը
կախեալ է գաստիարակութեան ծաւալու-
մէն, բարոյականի բարձրացումէն եւ դիւրա-
կեցութենէն:

3. Փաքը հսասակի մէջ մեռնողները 7
տարեկանէ վար 1/10 ն է բոլոր ապրօղներուն,
մինչ կեսը կը մեռնի 17 տարեկան չեղած:

4. Հիւանդութիւնները կրնան բանակի
մը 1/4 ը ջնջել, մինչ պատերազմի մէջ հազիւ
40 էն մէկ:

5. Աւելի այրեր կը մեռնին քան կիներ,

քանզիք անոնք չարքաշ կենաց մատնուած են:

6. Յուրա երկրներու բնակելք աւելի
երկայնակեաց են. հոն շատ հիւանդութիւն-
ներ անծանօթ. են, բնակիչներն ալ պազարիւն
են և ոչ այնքան գդայուն:

7. Քաղաքացիք գիւղացիներէ կանութ
կը մեռնին, քանզիք քաղաքը նուտով առող-
ջապահիկ վիճակ ունի եւ բարոյականն ալ
շատ առարկելի է:

8. Աղքատներն աւելի երկայնակեաց
են քան հարուստները, քանզիք անոնք միշտ
աշխատիլ ատիպուած են, որ առողջութեան
պայմաններէն մին է. մինչ հարուստք գոր-
տարկակեաց են որ չարեաց աղբիւրն է:

9. Արշեստ եւ զբաղվում ալ մեծ գեր
կը խաղան երկայնակեցութեան մէջ. հան-
գիստ եւ կանոնաւոր կեանք անցնողներն
աւելի երկար կ'ապրին, հակառակ վիճակ ու-
նեցողներն կարճ կ'ապրին:

10. Եկեղեցականք կըլլան 65 տարեկան
(միջին ակողութիւն), վաճառականք 64 $\frac{1}{2}$,
պաշտօնեայք 64 $\frac{7}{10}$, երկրագործք 64 $\frac{1}{2}$, զին-
ուորականք 59 $\frac{1}{2}$, փաստաֆանք 59, արշես-
տաւորք 57 $\frac{3}{10}$, ուսուցիչք 56 $\frac{9}{10}$, և բժիշկք
56 $\frac{1}{2}$:

ԵՐԿԱՅՆԱԿԵՑՈՒԹԵԱՆ 10 ՊԱՅՄԱՆԵՐ

1. Առողջ ծնողքէ ծնանիլ.
2. Սակաւասպետ ըլլալ.
3. Մաքուր օդ և լցու վայելել.
4. Մարմոլ, մաքոլ, մաքուր.
5. Միշտ ուրախ, զուարթ.
6. Կանուխ և յարմոր ամուսնութիւն.
7. Ոյժերն խնայել յերիտասարդութեան.
8. Նախանձ, վիշտ, ձանձրոյթ, փառասի-
րութիւն մերժել.
9. Բարեպաշտ և կրօնասէր ըլլալ:


ՔԸՆԵՐԻ — գուլագ թօզու — բնու հար-
ուած մի տար. հոն ոսկը նուրբ է, եւ կրնայ
կոտրիլ և մահ պատճառել:

ԿԵՐՈՒՑԻ վրաց մի ցաթկեր. ողնասիւնը
կրնայ գանկին մէջ մտնել, եւ անմիջական
մահ պատճառել, ոտից մատներուն վրաց
դատկէ:


ՌԱՄԱՆԻ աղաքը դրուիւն կը կախեն. վաս-
տակար է, և մերթ մահարթ:

Երբ ոսկորները կոտրին կամ խախտին,
մինչև գոյք բժիշկ, պաղ ջուրի մէջ թաթ-
խուած թաց լաթ դիր կոտրածին վրան:

Ուր որ մանե օդ և լոյս,
Անկէ կուտան խոկոյն խոյս,
Բժիշկ եւ հիւանդութիւն,
Հոն տիրէ առողջութիւն:



ՀԱՐՑԱՐԱՆ



Հաւկիթ պահելու էն պարզ կերպը ո՞րնէ:
Պահուելիք հաւկիթներն եթէ թարմ
են բաւ է ձէթով, ճարպով կամ քօլոտիսնով
օծել, չորցնել և սնտուկի մէջ զետեղել:

Դաստիարակութեան վահմագոյնը ո՞րնէ:

Մասաւոր դաստիարակութենէ զատ աւելի
բարոյական դաստիարակութիւն, այսինքն
մարդուս սիրով կրթել, ազնիւ, վեհ զգու-
ցուցեր. նպատակներ, բաղձանքներ արթեն-

ցնել: Արտի մշակութիւնը մոքինէն շատ գե-
րազանց է, եւ ուստի նախամիծար պէտք է
համարել: Ապացոյցի կարօս չէ. մոքենին
լցուն բոյց սրտերնին դասարկ մորդկանց
կենցաղը որո՞ւ զզուանք չը պատճառեր:

Արդարացրի պարզ կանոն մը յանձ-
նաբարեցէք:

Հանգերձներնիրդաշնակ ըլլալու հնահա-
պարզ կանոն. ալ գնա' եւ ընտրութիւնը
գուն ըրէ. բաց գոյնով շրջազգեստ, սև գըլ-
խարկ, գոյնզգոյն փետուրներ, վրան գեղձանիկ
կարմիր հովանոց, ձերմակ ձեռնոց, ասանկ
հագուած կին մը ճաշակի տէր եղաղներուն
ծաղուտ առարկայ կ'ըլլօյ:

Աւանցգործիքի առարկայի մը բարձրու-
թիւնը ի՞նչպէս կրնաք չափել:

Աւարկային քովլէն կը չեռանան այնքան
մինչեւ որ անոր գաղաթը տեսնեն. երբ ծովին
և երկու ծունդին մեջէն նային դիտած տե-
ղերնին նշան կը գնեն, եւ անկից առարկային
մինչեւ խարիսքը կը չտիեն, որ է անոր բարձ-
րութիւնը: Եթէ կ'ուզես, երկրաչափ բարե-
կամիդ փորձն ընել տուր:

Դիցուք թէ ախոռս այրի, հոն գանուսղ
ձիերս ի՞նչպէս աղատեմ:

Միշտ աչքերնին կապելով չես յաջողիր
զանոնք դուրս հանել. կազմածնին վրանին
գիր, և իբրև թէ սովորական աշխատութեան
կ'երթան վարէ զանոնք ախոռէն դուրս

Կ'ըսեն թէ երբ հրացանէ կապար գունտ
մը ջրայ մէջ արձակուի, կարծր նիւթի մը
զարնուածի պէս հարթ հաւասար կ'ըլլայ.
մինչ երբ ճարպէ մամբ հրացանի մէջ դրուե-
լով դրան մը վրայ արձակուի, դուռը կըծակէ
կ'անցնի, առանց ինք ո'եւէ վնաս կըելու:
Երած է այս:

Ահնացս մէջ ձեռքս հրացան չեմառած,
հաճէ որսորդներուն հարցնել, և շնորհակալ
կ'ըլլամ՝ եթէ տրուած պատասխանն ինձ եւս
հազորդես ի հրատարակութիւն, իրաւ որ իմ
եւս հետաքրքրութիւնն արթնցուց. պարզ
ըսեմ. ես ատոր չեմ հաւատար:

Ընտանի անտառներուն ոջիլն ինչով
կը մաքրուի:

Քարիւղով. լաւ մը օծէ զանոնք բայց
չըլլայ որ կըակի քով երթան, ան ատեն

գիտես ի՞նչ կը պատահի, ոչ թէ անսառնդ
այլ նաև տունը կայրի, միխիթ կը դառնայ:
Սամփառն Փղատացւոց արտերը բռնկցուց, աղ-
ուէսներ անոնց մէջ արձակելով որոնց պո-
չերնուն ջահեր կապած էր: Այս միտքդ ըլ-
լոյ և գգոյշ եղիր, վերջը աղետին պատճառը
օրացյցն եղած չըլլայ, որոյ միակ նպատակ
օգուտ և ոչ թէ վնաս ընել է:

Սանտրերս մտքելը շատ գժուար
կուզայ ինձ, գիւրին կերպ մը կը յանձնարա-
նեցք:

Վախինամ շատ քիչ բաղնիք կ'երթաք.
երբ ամիսն մի անգամ գոնէ երթաք, սանտրեր
սյնքան չեն աղատուիք: — Գլուխդ չսանսրած
սանտրին մեծութեամբ ֆանէլայի կտոր մը
առ և սանտրին ակւաներն անոր մէկուն ան-
ցնելով անոնց տակը քաշէ. սանտրէ հիմակ
զլուխդ, երբ լմինայ յայնժամ ֆանէլան կտ-
մաց մը չմնէ, որով սանտրին ակւաներուն
մէջ տեղ մնացած աղտն ալ դուրս կ'ելլէ:
Սանտրը պյուղէս միշտ մաքուր կը մնայ:

Սոխ ուտելէ կ'ախորժիմ, եթէ հոտը
չըլլար, ի՞նչ պէտք է ընել այս հոտէն աղա-
տելու հսմոր:

Բարեկամ, սովը սովէ, և սովը հստ պի՛
տի ունենայ, առանց հստի սով չ'ըլլար Եթէ
սակայն այդ հստը եղէ է փոխանցուեր, առ
քիչ մը մաղտանոս — հայերէնը ամանք ա-
զատքեղ կ'ըսեն, այլք չեմ դիտեր ինչ կ'ըսեն
— վրան լեցուք քացախ և երբ այնքան սիրած
սովոր կերպ, լնցաւ, այս մազատանսէն կեր
և սովին գարշահստութիւնը կ'անցնի, Եթէ
սակայն քացախով մազատանս ուտեն քու-
փափուկ ճաշակիդ չյարմարիր, կը չաւիմ
ըսել, որ այն սիրելի սովիդ հրաժարելու եստ

Փոխանցիկ հիւանդութեամբ ապսկան-
եալ սենեակ մը, ի՞նչպէս կրնամ անվանդ
մանել:

Փայտի ածուխի փոշին քսակի մը մէջ լից
և բերնիդ վրայ և քիթիդ տակը բռնէ, թու-
նուոր օդը առ ածուխի փոշիէն անցած տաեն
կը մաքրուի վնաս չապ:

Տան գարշահստ տեղերն ի՞նչպէս չեղոս
քացնենք:

Աւելի աղէկ է գարշահստութիւն բնաւ
չունենալ, քան թէ զայն չեղոսքացնեու մի-
ջնցներ գանել, պարզ գարմանն է չարտած

կեր. անօթներով գիր տակէ գարշահստ տեղ-
ուանք, շատ ալ տժան է:

Նաքարը կրնա՞յ իրը դեղ գործածուիլ:
Եթէ շաքարը ինքնինիրը դեղ չգործածուի
ուլ, նո շատ դեղերու կը խառնեն: Փտառծ
վէրքերու համար, սակայն, լաւ դեղ է, վրա-
նին փոշիացած շաքար ցանէ եւ փառւթիւնը
կ'անցնի եւ շարաւալից վէրքերն իսկ կը բու-
ժին, մանաւանդ երբ կաղնիի տերեներն շա-
քարով եփենք և վէրքը անով լուսնանք:

Տղայոց որդ — ուղղ ճան — ունենալուն
սասյդ նշաններ կա՞ն:

Այս՝ երեսի տժունութիւն, մարտծ
աչք, շարունակ քիթին հետ զբաղել,
Եզուի պղտորութիւն, գարշահստ շնչառու-
թիւն, քիթէն արիւնահստութիւն, ախորժակի
պակասութիւն, կամ նաև շատակերութիւն,
քննանալու մեծ հակում, անհանգիսա քուն,
քնայ մէջ ակառայի կրճտում, մարմնոյ ընդ-
հանուր ծիւրութիւն: Ին սասյդ նշանը սա-
կայն որդ մը տեսնելն է, ասոր պէտք է զգաշ
ըլլայ եւ տեսնելէ ետեւ գարմանել:

Ստումնքսի անզօրութիւն ունիմ, կրնա՞ք պարզ գալիսն մը յահանարարել, քանզի, դեղ չեմ ուղեր առնել:

Ամէն առաւօտ 40—42 հատ սև պղպեղ կլլէ, նախաճաշէդ առաջ, եթէ օգուտ տեսնես, հաճէ իմաց տալ:

Հնար կո՞յ ծաղիկ հիւանդութեան սպիներէն աղասիլ:

Ո՞չ, անհնար է այդ, բայց կրնանք սպիներ գոյանալէ արգիլել: Մեր հին օրացոյցներուն մէջ խօսած ենք այս մասին: Հոսութիւն կիրա մ'ալ յիշենք: Առ 3 մաս ձեթ, Տեսր խառնէ 4 մաս ձերմակ մեղրամնմ, եւ դիր կրտկին վրայ որ հալի, դեռ բաւական տաք եղած տաեն, փափուկ վրձինով մը ծաղկախտի իւրաքանչիւր վէրքին վրայ քուէ, օդը արտաքսուելով քերուսին կ'արգիլութ, քանզի քերելով այն սպիներ կը գոյանան: Բժիշկիդ եթէ դիմես, այսպիսի պարագայի մէջ, նա եւս ունի միջոցներ արգիլելու ծաղկախտի սպիներն:

Կրնա՞մ կանխաւ գիտնալ թէ հիւանդութիւն մը մօտալուս է:

Այս, կրնաս զգալ, երբ վրադ թուլւթիւն մը կը տիրէ, եւ երեսդ կը տաքնայ ու սիսորժակդ կը պակսի, ժամ է որ բժիշկի կանչես, նախաղգուշաւթիւն լաւ եւ ա՛ւելի աժան է քան դարմանում:

Տիկ. Փերուզ. — Մայօնէզ սասպէս կը մինեն. հաւկիթի երկու գեղինի, հետը աղջարկ պնակին մէջ պղպեղ եւ դգալ մը քացակի գնելով, երբ լաւ մը զարնուի, գաւաթ մը ձեթ քիչ վրան աւեցուր եւ յետոյ քամէ:

Ա. Պ. — Սառը՝ ըրդէ նիւթի մէջ պէտք է փաթթել որպէսզի շաւասով ջութիւնիւն:

Մայր. — Երբ փոքր տղայք սրտի բարախտում կ'ունենան, պատճառը պնդութիւն է: Կոտասատի սերմը թեթև կիրապով եռացնուր եւ ջրովք գրեխ ըրէ:

Գրիգոր. — Փոքրիկ արձաններ ձուլելու համար սոսինձի լուծոյնթի հետ խառնէ աղիւնի, կաւիճի, գաճի փոշի կամ ատաղճի ղղոցուկ:


Պատիր. — Բժիշկները կ'ըսեն թէ սիլ՝
առ ամէն երկու բարախումի միջև, շատ կարծ
գագար մը կ'ընէ, այդ գագարին կամ հան
գսաեան շնորհիւ կարող կ'ըլլայ այն իր գործը
այնքան տարիներ շարունակել։

Գարշահսոս սոքեր անբուժելի չեն. գաւով
մը կաթի մէջ դիր գգալ մը փոշիացած ծըր
ծումբ, եւ անկողին երթալէ տառջ սոքերը
կարելի եղածին չափ տաք ջրավ լուալ, եւ
յետոյ վրան պարագսի փոշի ցանել — այս
ալ օգտակար է. գարշահսոս սոքեր ունեցող՝
ները պէտք է ամէն պարագայի մէջ զանոնք
մաքուր պահեն, և տան մէջ բոկոտն քալելու
են. մաքրութիւնը ամենէն ազդու գեղն է
գարշահսոտութեան դէմ։

Մուկերէ աղասելու համար ի՞նչ միջոց
կայ։

Առ լարակ, խիստ ճերմակ գաճ (մէրմէ՛
րի փոշի) և խառնէ քիչ մը աղեւրի չետ, լից
խոր սկաւառակի մէջ և դիր մուկերուն ան-
ցած աեղեր, քոյն ալ ջրավ լցուուն աման մը
դիր։ Մուկը կուտէ ալիւրը, կը խմէ ջուրը եւ
— կը ստակի։

ԸՆՏԱՆԵԿԱՆ



Մարդկային կենաց բաժանութելն են,
մանկութիւն 1—10 տարին, պատանեկու-
թիւն 10—20, տառաջին երիսասարդութիւն
20—30, երկրորդ երիսասարդութիւն 30—40,
տառաջին այրութիւն 40—55, երկրորդ այ-
րութիւն 55—70, տառաջին ծերութիւն 70—
95, վերջին ծերութիւն 95 է ետեւ։

Նստողական կեանքը թէ արանց և թէ
կանանց համար խիստ վնասակար է. մանա-
ւանդ ստամոքսի սկարութիւն կը պատճառէ։
Հարժումը, լնդհակառակը, կը կազդուրէ
մարմինը, հոգիի նոր կենդանութիւն կուտայ,
և շատ հիւանդութիւններէ զերծ եւ աղատ
կը կացուցանէ զմարդ։

Ոսկիէ զարդ և շղթաները մաքրելու
համար, պէտք է քիչ մը աճառախառն գազզ
ջուր լեցնել սրուակի մը մէջ, և շղթան անոր
մէջ ձգելով ուժով մը շարժել սրուակը։

Ապա շղթան դուրս հանելով կտաւով չորցնելու և փափուկ մորթով մը շփելու է զայն։ Մաքրութեան համար յանձնաբարուած փոշիոտ, իւզոտ, կամ հեղուկ ո՞ւ նիւթով շփուած առեն թէ այդ նիւթէն մաս մը և թէ շղթային աղար անար բարակ հիւստուած քներուն մէջ կը աեղաւորուին, և շղթան հարեւանցի կերպով մտքրուած կ'ըլլայ։

Թուրդէ գուլպաները լուալէ ետք պաղ չուրէ անցնելու չէ երբէք, այլ ձեռք դիմոնալու աստիճան տաք ջուրէ մը անցնելու է զմաննք։ Գուլպաներու համար օդտակար է քիչ մը անուշադրի սպիտելցնել ջուրին մէջ։ Դոյլ մը ջուրին դդալ մը անուշադր կը բաւէ։

Երկրազնիս ուրիշ եւ ոչ մէկ մտախն մէջ կին արարածը այնքան անարդ նկատուած է որչափ Զինու մէջ։ Այս մտախն լաւ գաղափար մը կրնայ ընծայել չինական սա առածը «Լաւագոյն է գէշ մանչը խելացի աղջիկէն»։ Այս մտածումով է որ չինացիները աղջկան մը ծնունդը լսաւանեկան աղէտ կը համարին։ Հասնակալից է չինէն վերադարձող Ոտու ծովային սպայի մը կողմէ վերջերս Ոտու

մագրի մը մէջ հրատարակած յօդուած մը, որուն մէջ կ'ըսէ — «Օր մը պատոյի ելուծ էի ֆու-Չառ-Ֆու հարտապյին Զինու մեծ քաղաքին շուրջը, երբ մեծ լիճի մը մտակն անցած ատենս աեսոյ որ չինարէն արձանագրութեամբ աստիպակ մը կանգնուած էր. չէի գիտեր թէ ինչ գրուած է. չինացի առաջնորդու բացարրեց ինձ ասոր նշանակութիւնը որ էր. — « Արգիլուած է աղջիկ խեղդել այս լիճին մէջ »։ Առաջնորդես իմացայ նաև թէ չինու հարտապյին այդ մտախն մէջ իդական սեռէ աղաքը ձեռքէ հանելու համար ուրիշ զանազան միջնուներ ալ կը գործադրուէին։ Ընդհանրացած սովորութիւն մ'է հօն, փոքրիկ աղջիկները ծափել։ Իմացայ թէ չափահաս աղջիկներ ալ խմբավին կը ծափաւէին, մանկամարդներուն համար քիչ մը սուզ գին կայ։ Առաջնորդիս պատուած էն իմացայ թէ այդ գժբախտ արարածները ո բաի ի թշուառութեանց կը մտանուէին, եթէ անդում մը այդ շարժուն ապրանքը ծափաւ տանողը անար օրինաւոր տերը ըլլար եւ ուզածին պէս վարուելու ինքոյնքը իրաւունքի տէր Ճանչար»։

Քորէայի կիները անուն չունին, միայն
բարձրագյն ազնուականները, ինչպէս նաև
Քանկիներն (երգչուհիք) եւ Շօկիները (ցնծու-
հիք) անուն ունին: Քորէացի ընտանիքներու
մէջ ծնողքն ու մահնչ զուտակները՝ թուանը-
շանով կը կոչեն իրենց աղջիկներն ու քյորերը:
Ամուսնացեալ կիներն ալ իրենց ընտանեկան
անունները կը կրեն, եւ ոչ միայն այլքրէն
այլև կիներէն ալ անջաս կ'սպարին: Քորէայի
մէջ տղու մը ծնունդն իրը ուրախառիթ
դէպք չչամորուիր եւ չծանուցուիր: Հետե-
ւապէս մարդահամարը շատ անվասահելի ար-
դիւնք մը կուտապի:

—

Հանճածուխը աւելի տաքութիւն կու-
տայ, եթէ վառարանին մէջ նոր ածուխ դըր-
ուելու ատեն, նորը՝ փախանակ վառարանին
արդէն գտնուածին վրայ դնելու, ինչպէս սո-
վորութիւն է ընել, սպասել որ ատոնք լու-
մը բոցավառին ետին քշելով, նոր ածուխը
առջել դնելու է վառ ածուխին քովք, այն-
պէս որ նորը քավընափ սկսի վառել:

Ասանճէնդէները եփելու կամ սեղան
չանելու վոյրկեանին պէտք է լուալ:

Փաթաթէսը, շղգամը, սոսեպղինը, կա-
րոսը ևոյլն երբ լուացուին կը կորնցնեն իրենց
համն ու հոսք: Զուրը ալ աւելի կը վսակէ
աղցանին (սալաթա): Աղցանը՝ ուտելէ անմի-
ջապէս աւածջ լուալով, վրայի ջուրն ալ
թօֆուելով, պարզուափ մը կամ անձնուցի
մը մէջ դնելով վրայի ջուրը ցամքեցնելէ
ետքը պատրաստելու է: Աղցանը ո'քչափ
թարմ ըլլայ: այսինքն հողէն նոր հանուած
ըլլայ, այնչափ համեղ է: Աղցանը շտո կ'ան-
համեայ երբ վրան ջուր գոնուի: Եթէ աղ-
ցանը մաքուր ըլլայ, լուագոյն է առանց
լուալու պատրաստել զայն: բայց լուալ հարկ
եղած ատեն ալ պէտք է արագապէս լուալ
զայն եւ մաքուր ու սպիտակ լոթով
մը չօրցնել անմիջապէս անոր թերթերը: Աղ-
ցանը մի քանի վայրկեանէ աւելի ձգելու չէ
ջուրին մէջ:

Ասաւարելապէս սխալ է այն կարծիքը
թէ վառարանավ առաքուած սենեակէն պա-
տուհան բանալը կը պաղեցնէ սենեակը եւ վա-
ռելանիթն ալ աւելի կը սպասի: Ոենեակին
խային կաղալ, եւ կամ սենեակը շորոշակ

փակ պահելով, վառարանին ջերմութիւնը
փոխանակ սենեակին մէջ տարածուելու
ծխնելուցէն կը թռի կ'երթայ, Օդը մաք-
րուած սենեակն աւելի շատ կը տաք-
նայ, քան թէ ապականուած օդով սեն-
եակը: Հետեաբար տաքուած սենեակէ մը
օրուան մէջ մէկ քանի անդամներ պատուհան
բանալով (4. 2. վայրկեան) մաքուր օդ ներթ
աւնելը թէ առողջարար է և թէ խնայողական:

Եիզակոցի Տիկին Փողէքին Խըսէլ ա-
մուսնալուծում կը պահանջէր, որովհետեւ իր
ամուսինը ծեծած է զինքը: Գեղանի արկինը,
որուն յայտաբարութիւնները խնդալէն կը
ճաթէցնէին բազմաթիւ ունկնդիրները, վկա-
յեց թէ իր ստքերը երբեմն պաղ կ'ըլլային,
եւ ասիկայ էր գլխուոր պատճառը էրկանը
հետ ունեցած կոփեներուն: Երկանը փաստա-
բանը ջանաց ցոյց տալ թէ տիկնոջ ստքերը
ո՛չ թէ երբեմն, ոյլ միշտ պաղ էին, բայց
տիկինը պնդեց իր ըստծին վրայ թէ երբեմն
միայն պաղ էին, երբ անոնց բնական ջերմու-
թիւնը կը նուտպէր պաղ տախտակամածին
վրայ քայելով: Կինը երկարօրէն եւ լրջու-
թեամբ յայտաբարեց որ այն գիշերը երբ իր

ամսւսինը տուաջին անգամ իր վրայ յարձա-
կեցաւ՝ իր պաղ ստքերը բնաւ գոցուցած
չըր, այսու հանդերձ, ըստաւ, անբան կենդա-
նին զիս անկողնէն գուրս նետեց եւ ծեծեց:
Ամէն անգամ որ կը ծեծեր զինքը, ստքերուն
պաղութիւնը փաստ կը բռներ: Այս պաղ
ստքի կագերը քրօնիկ եղան: Ուստի կը ինդրէ
դատարանէն որ զինքը բաժնեն իր ամսւսինէն,
որպէսզի, ստ վերջինը տաք ստքով կնիկ մը
գտնէ:

Հանդերձիոց Վրայ երբ մելան թափի,
գուաթիթ մը կաթի մէջ փոքր գգալ մը աղ
դիր, և այն լուծոյիթ ով շփէ բիծը լաթով մը:
Երբ բիծը չըրցեր է, 4—2 ժամ հանդերձին
այն մասը այս լուծոյիթին մէջ դիր:

Սանտրը ջրով մի մաքրեր կը լսաստի,
կարծր վրձինով մը մաքրէ:

Ա. Եկողինի մէջ ճանճերէն աղաս ըլ-
լալու համար՝ սպունդը հստաւէտ ջուրի,
լալանատի մէջ թաթիւէ և անկողնիդ վրայ
կախէ:

Նեղ կօշիկը կը լայնաց երբ լաթ մը

Եռացած ջուրի մէջ թամբ խելով և քամելով
կոշիկն ճնշող մասին վրայ դնես. կրկնե քա-
նի մը անգամ

Երբ կարե այրի, կամի առն շուտավ պաղ
ջուրի մէջ նստեցուր, և կամին մէջ աղ նե-
տելով խառնէ, այրածի համը կ'անհետանայ:

Մրջիւներն ջնջելու համար. էն ազ-
գեցիկ միջոցն է փոշիացեալ մեխակ ցանել-
մըջիւներան հողակայտերուն վրայ:

Չուկ եփած առենդ դիր ջուրին մէջը
դդալ մը աղ, Յ դդալ քացախ, փոքր սփս մը
և քիչ մը աղատքեղ, այս՝ ձուկին համը
խխս կը բարւոքէ:

Թարմընկուդի բիծերը մատներէն հա-
նելու համար, պէտքէ ընկուղիներքին բարսկ
կերկները դաւամծ մը ջուրի մէջ դնել, եւ
այդ ջրով մատները լուալ:

Ճանեներուաղտը սոկեղոծ շրջանակներէ
կը մաքրուի, կէս սփս սփիրթ զյի մէջ թամբ-
խելով և բիծերուն քսելով:

Տախտակէ մելոնի բիծեր կը հանուին
ջրախտան թուղ րուհի քսելով, տաեն մը
թող մնայ, յետոյ տաք օճառ ջրով լուա:
Զդոյշ ըլլալ, քանդի թուղ րուհին թղն է:

Գիճիփի բիծերը լոմի վրայէն հանելու
համար, պէտք է անմիջապէս պաղ ջրով
թրջել, ու վրան պարու աղ ցանել, և լոմի ը
դալարեաց վրայ փուել, կամ պարզապէս
հովի տալ:

Միրզի բիծերը ճերմակ լոմի վրայէն
ամրան մէջ կարելի է հանել տաք ջուրի
մէջ լուալով: Խակ ճմիան մէջ սառած ջուրի
մէջ թողուլ կը բաւէ: Բիծերուն տեղերը
ասով ամրապէս շինել և 5 օժամ ետքը լուալ.
ապս ըիծերը աճառասել և դարձեալ լուալ:

Փայտակեր ննիները. — Փայտէ կա-
րսաիներու մէջ դանսւած եղծանաղ որդերը
ջնջելու աղդ եցիկ միջոցն է 100 կրամ ջուրի
մէջ 5 կրամ ասխա ֆէնիք, կամ ասխա դար-
պօնիք լուծելով, բարակ վրձինավ մը մէկ
կերուն:

Գորգերը մաքրելու ամենագործնական
միջոցն է, ասուեակի կտօր մը վարակի ար-
լիւրի մէջ թաթենելով շփել, մաքրել: Եթէ
տաք ջուրի մէջ քիչ մը պաղեղ լուծելով
սենեակի գորգերուն շուրջը քսուի, ցեցերը
կ'անհետանան, վասնզի այս հեղուկը ցեցին
դպչելուն պէս կ'ոչնչացնէ զայն Այս հեղուկը
աղդեցիկ է նաև մը ջիւներու եւ ուրիշ մի՛-
ջատներու ջնջման դէմ: Եթէ վրձինով մը
պատերուն և կարստիներու ճեղքերու քսուի
միայն թէ այդ կարստիները արծաթէ է զարդ
ունենալու չեն, վասնզի այդ հեղուկը կը կա-
նաչնէ արծաթը:

Մելանի բիծերը մարենի. — Գորգերէ
եւ բամպակեայ ճերմակեղէններու վրայէն
մելանի բիծը հանելու համար պէտք է բիծին
վրայ քիչ մը թալմ կալմ կաթեցնել, եւ
ուրիշ բամպակեղէն կտօրով մը շփել: Ասի-
կայ քանի մը անգամ կրկնելու է: Ամենէն
ետք՝ արաւոր մաքուր աճառաջուրով պէտք
է լուալ, և լաթով մը լաւ մը չորցնել Եթէ
բիծը հին է, այն առեն կալմ երկար ժամա-
նակ մնալու է բիծին վրայ :

Ճերմակեղինաց վրայէն ժանդի բի-
ծերը հանելու համար, պէտք է տաք ջուրի
մէջ 5 առ 100 մազը լուծելով բիծերուն տե-
ղերը ատով ամրապէս շփել և 5 — 6 ժամ
ետքը լուալ: ապա բիծերը աճառաջուր և
դարձեալ լուալ:

Սելանի այն սպասները զարս տարին
մէկ քանի անգամ գործածել հազիւ պէտք
կ'ըլլայ, ժանգէ զերծ պահելու համար պէտք
է թէթեւ մը իւղանել, և ֆանէլայի մը մէջ
փաթթելով պահել:

Թանակի վրայ գոյացած ժանդերը հա-
նելու համար, պէտք է քարիւղով թրջել,
և շփել զանոնք տաք, բարակ ու ճերմակ
աւազով, կամ հանգածուխի տաք մոխիրով:

Փայտորդները ջնջելու համար միակ
միջոցն է՝ քառուչուէ գնդակաձեւ գրեխով մը
փայտեղէնին վրայ որդին բացած ծակին մէջ
փէլ մինչև որ այդ ծակին մէջ գտնուած
փոշին ամիսողապէս դուրս ելլէ: ապա փոքր
վրձինով մը պէնզին ներարկելու է:

Կաթեցնելու է ծակին մէջ։ Եթէ փոշին դուրս
հանուած չըլլայ, որդերը չեն ջնջուիր։

Եռացած ջրոյ մէջ տասը վայրկեանի
չափ ափսէնթի (փէլին) տերեւներ եփելով,
վրձնապլ մը սցդ հեղուկէն քսելու է, անկող-
նոյ երկաթին կամ փայտին և պատերուն ա՛յն
տեղուանքը, ուր մլուկներուն շամներ կը գըտ-
նուին։ Այս գործողութիւնը մէկ երկու ան-
գամ կրկնելով մլուկները բնաջինջ կ'ըլլան։

Եիօերու մաթրուքիւնը. — Իւզոտշի-
շերը պէտք է մաքրել պէնդինով կամ լսու և ս
տիտ մանկանիքով, որուն մէջ քիչ մը տիտ
միւրիագիք աւելցնելու է։ յետոյ շիշերը
լուալու է ջրով։ Այս շիշերը որոնց մէջ ինե-
ժային հեղուկներ լցուած էին, կը մաքրուին
պորտաքառվ կամ փոթասով։ բոյց յետոյ
պէտք է ցողուել զանոնք ալքուով։ Զուրի շի-
շերը, որոնց յատակը կամ ներքին մասին քո-
վերը տեսակ մը կրային չորցած մրուր կը գըտ-
նուի, կը մաքրուին փաթաթէսով։ Հումը
փաթաթէսը պէտք է բարակ և սրանկիւն ձե-
ւերով մանրել, և անկէ տփ մը լէցնել շիշին
մէջ, և զայն ծածկելու չափ ալ ջուր աւել-

ցնելով, ուժով մը շիշը շարժել, մինչև որ
քակուին այդ մրուրները ։ Հոտաւոր խկու-
թիւններ պարունակող շիշերն ալ կը մաք-
րուին փոթասով և ջուրով։

—————

ԿԱՆԱՑ ԴԵՐԸ

Փամանակաւ Անգղիոյ թագուհին, Վիգթորիա, իր ամուսինին, Ալպէրթ իշխա-
նին հանդէպ հպարտ, տիրապետող ընթացք
մը ունենալուն պատճառաւ իշխանը վշտա-
նալով սենեակը առանձնացաւ և գուռը ե-
աեւէն կղպեց։ Քիչ տտեն ետքը թագուհին
իշխանին ուժգին դուռը զարկաւ։ Ո՞վ է նա,
հարցուց իշխանը։ «Ե՞ս, Անգղիոյ Վիգթորիա
թագուհին», պատասխանեց թագուհին խը-
րսիստ ձայնով մը։ Իշխանը բնաւ կարեւորու-
թիւն չառաւ, և տեղէն իսկ չշարժեցաւ։
«Սորէն դուռը զարնուեցաւ մեղմիւ։ այս ան-
գամ թագուհին մեղմ՝ ձայնով կ'ըսէր, օհա՛ց
քու կնոջդ Վիգթորիային։ Խսկոյն բացուե-
ցաւ դուռը և խաղաղութիւնը կնքուեցաւ

—

Ո՞րչափ պատուաւոր դիբք ունենան
կանայք, ա'յնքան իմաստուն կըլլանք մենք,
որչափ առաթինի ըլլան, ա'յնքան երջանիկ
կ'ըլլանք մենք, այր մարդիկո: Կինը նուաստա-
ցնողն՝ ինքը նուաստ է, իսկ կինը բարձրացը-
նողն՝ իր վիճակ կը բարձրացնէ: Այն ժողո-
վուրդ՝ որ կինը կը նուաստացնէ, անքան ա-
նասունի տատիճան կիշնէ: Կինը բարձրացնե-
լով է որ ժողովուրդ մը քաղաքակիրթ կ'ըլ-
լոյ: Արեւելք՝ կինը գերի կը նկատէ և յայտ-
նի է ժողովրեան վիճակը, արեւմուտք՝ կինը
ազատ կը նկատէ և կը պատուէ, այսպէս քա-
ղաքակիրթ կ'ըլլոյ:

Քաղաքակրութիւնը միայն ամուս-
նութեան մէջ պէտք է փնտռել. ասոր մէջ
կանանց մասուր և բարոյական կարողու-
թիւններն կրնան կրթութել: Ամուսնութեան
մէջ, կինը այրին վրայ իրը ամուսին ազդե-
ցութիւն ունի, զաւակաց վրայ՝ իրը մայր.
այս է ծամրիս ընկերական վիճակ քաղա-
քակիրթ ազդաց: Արարիչը մէկ այր ու մէկ
կին ստեղծեց, ուստի ամէն այր մէկ ընկեր
ունենալու է. այս է օրենքը բնութեան և
Աստուածային, ուրիշ ամէն որդեգրեալ կեր-

պեր տպակոնութիւն և բարբարոսութիւն են
միայն:

Անոք աղդեցութիւնը կը տիրէ ամբողջ
կենաց մէջ: Իրը ամուսին՝ կինը այրին խոր-
հրդականն է. իրը մայր կը հրամացէ մեզի և
մենք կը հնազանդինք անոր. անոր յիշասակը
շատ անգամ մէր կիրքերուն սանձ և սահման
կը դնէ: «Հանգչէ մոյր իմ խաղաղութեամբ,
որդիթ միշտ պիտի հնազանդի քեզի»: այս-
պէս գրուած էր տապանաբարի մը վրայ:

Կինը նուաստացնողը ինքը կը տուժէ:
Բունականներ կը խորհին թէ իրենց հպատակ-
ները տղէտ, անբան և անիմաստ պահելով,
հանգիստ պիտի տիրապետեն, բայց չարտար
կը սիստին, այսպիսի հպատակներէ միայն ո-
ճիր և արիւնհեղութիւն պէտք է ակնկալել:
Ամէն եղեռն ու նախճիր այնպիսիններ կը կո-
տարեն, և անգամ մը սկսէլէ ետև այլ եւս
չդադարիր այսպիսի տիրամար ժողովուրդ. մը
ոճիրէ և արիւնհեղութիւննէ, և ո'լքան տղէտ
է ժողովուրդ մը, ա'յնքան կ'ախորդի գործած
վայրագութիւններէն. ոչ իմացականութիւն
և ոչ ակնածութիւն կընայ կասեցնել, զըս-

պել սորաննիւ գործիք մ'է այնպիսին, դիմոկե
դիմոկ անցնելով ի վերջոյ զի՞նքը գործածով
անձին իսկ կը հասնի զի՞նքը փողոսելու, թըու-
նտկալ մը որ իր շահնը մարդու միսով կը
անուցանէր, օր մը իր շահնը կեր եղաւ:

ԱՌՈՂՋ ԵՐԱԽԱՆ

1. Ծնածին պէս կուլայ.
2. Մօրը ստինքին կը Փակչի սառաջին օրը.
3. Մինչև վեցերորդ օրը ձեռքը գլխուն կը
առնի.
4. Աչքերը կ'աբցունքուին 8րդ օրը երր լոյ.
5. Առաջին ամառ մէջ կը խնդայ.
6. Երկրորդ ամառ մէջ կը վախնայ և կը
խրտչի.
7. Երրորդին մէջ կը բարկանայ.
8. Զորբորդին մէջ գլուխը վեր կը հանէ.
9. Հինգերորդին մէջ մայրը կը ճանչնայ.
10. Վեցերորդին մէջ ընկերակցութիւնը կը
դռայ.
11. Եօթներորդին մէջ առաջեւի սառաջին
ակուան կը բուռնի.
12. Ութերորդին մէջ կը նստի.
13. Խններորդին մէջ հոս կառնէ.

14. Տասներորդին մէջ խօսիլ կը սկսի.
15. Տասնեւմենկերորդին մէջ սարի վրայ
կը կայնի.
16. Տասներկուերրորդին մէջ կը քալէ.
17. Նորածինին բազկերակը 130 կը զարնէ.
18. Երկրորդ օրը 120ի կիջնէ բաղկերակը.
19. Նորածինը ցերեկը հանդարս եղած ա-
տեն 45 անգամ կը շնչէ վայրկեանը.
20. Պառկած ատենը վայրկեանը 50 անգամ
կը շնչէ.
21. Քանցած միջոցին 35 անգամ կը շնչէ.
22. Նորածին մանչը սովորաբար 3250 կրամ
կը կշռէ, աղջիկը 3150.
23. Այն երախան որ 2000 կրամ կը կշռէ,
չազբեր սովորաբար.
24. Ուսնք կ'ապրին որ 2500—3000 կը կրշ-
ռին, սմանկը սակայն կը մասնին: 3500
— 4000 եղաղներն կ'ապրին.
25. Առողջ երախային գլխուն լրջուպատը
43 մասնաչափ կ'ըլլայ, կուրծքինը 12
և փարինը 44.
26. Առողջ երախան սառաջին ամիսը 4^{3/4}
մասնաչափ կը մեծնայ, երկրորդ ամի-
սը 4^{1/2}, մէկ ատրուան միջոցին 8 մաս-
նաչափ.

27. Երկրորդ տարրւան միջոցին 3^{1/2} մատնաշափ.
28. Երրորդ տարրւայ միջոցին 3 մատնաշափ.
29. Չորրորդէն մինչև տասներրորդ տարրին 2 մատնաշափ.
30. Առաջնէն մինչև չորրորդ ամիսը ամէնք օր 30 կրամ կ'առելնայ. չորրորդէն մինչև 42րդ ամիսը միջին հաշուով ամէն ամիս 8 կրամ կ'առելնայ.
31. Ծնննելէն մինչև 8րդ ամիսը ծանրութիւնը կը կրնապատկուի, իսկ մինչև տարրւայն վերջը կ'եռապատկի.
32. Առաջին տարրւայ ծանրութիւնը ինչ ո՞ւ է, 7րդ տարրին անոր կրնապատկի կ'ըլլայ:
33. Պէտք է երախան ամէն ամիս կշռել:

ԶԼՈՒՆ

ՏՐԻԲ. ԼԵՒՆԱ ՄԵՂԻՏՈՎԱԿԱ



ԱՌՏՆԻՆ ԴԵՂԱՐԱՆ

Գլխու մաղերը երբեմն հիւանդագին վիճակ մը կ'առնեն, այսինքն մաղերուն ծայրերը երկուքէն երեք ճիւղերու կը բաժնուին թէպէտ այս վիճակը մաղի լուրջ հիւանդութիւն մը չէ, բայց կրնայ վերջ ի վերջոյ հերսիմ ափութիւն յառաջ բերել: Ճիւղաւորման այս վիճակը շատ անգամ առաջ մաղերու վրայ կը տեսնուի. Այս վիճակը կանչեանայ շուտով երբ մաղերուն ծայրերը յատնախ կտրուին Առկէ զատ մաքուր պահելու և մերիմ լնդ մերիմ իւղասելու է մաղերը: Մաղերուն ծայրը ճիւղաւորման տաենն ալ կարելի եղածին չափ փափկութեամբ սանտրելու և խողանակելու է զանոնք:

Հարբուխը նեղացուցիչ վիճակ մ'է, ամէն անձի համար Միանգամ ընդ միշտ առար առաջքը առնելու միջոցն է ամէն առար առաջքը առնելու ափի գողին մէջ և գիթն ի վեր քաշել զայն, բայց ոչ ուժգին կերպով: Առով ռունգերուն մէջի թաղանթները կը զօրանան և կը գիւմադրեն

օդի ցրառութեան ու խոնաւութեան ժամանակ մը ետքն ալ, փսխանակ գաղջ ջուրի պէտք է պաղ ջուր գործածել, բայց քիչ մը հանգչոտ ջուր:

Ակրաներու ու բերնի մաքրութիւնը
կենսական պայման մ'է, Երեկոյին ալ պէտք է բերանը լուսալ, Ոն որ միայն առառուները կը լուսայ իր բերանը, կը նմանի անոր՝ որ փարավին գուռալ կը փակե գոյլերուն դէմ այն ատեն, երբ հօար արածել առարութ է:

Ոզելից ըմպելիք գինի, օղի, պիրու, լիքէօր և սուրճ ու զօրսւոր միսի ջուր, սիրտն ու ջիղերը կը գրգռեն, որոյ վախճանը կը լլոյ ուղեղի հիւանդութիւն և որտի գործողութեանց խանդարում:

Սեամոնսի խոնգարում 24 ժամ ծամով
կը բուժուի Այս պարզ, բայց օդակար միշոցը յանձնաբարելի է անոնց՝ որոնց ստամոքսը կանոնաւոր չաշխատիր և միշտ կը լիստանայ, գլխաւորապէս անոնց, որոնք անմօրէն շատ ջուր կը խմեն ճաշերու միջեւ: Ծանր չարբուխի ատեն ջրալից ուտելիք և ո և է չե-

շուկ սննդեղենէ հեռու մնալը շատ հազար դէպէ է, որ ենթակոյ եղողին օդակար չըլլոյ:

Աս հետեւեալ անկարգութիւնները
մարդուս ստամոքսը կը տկարացնեն:

1. Արագ ուտելլով, առանց լու մը ծամելու:
2. Շատ ուտելլով, պէտք եղածէն աւելի:
3. Միշտ մէկ տեսակ կերակուր ուտելլով:
4. Անկանոն կերպով ուտելլով ուղած պահուն:
5. Կերակուրի միջոցին կամ վերջը ստամոքսը կերպելիքներ գործածելլով:
6. Ախորժակ գրգռող կերակուր ուտելլով:
7. Խօսիլ ու խորհիլ անհամայ նիւթերու վրայ կերակուրի ատեն:
8. Ծանր աշխատանք կամ սւսմանք կերպաւրէ վերջ:
9. Անշարժութիւն, մարմնամարզի պակասութիւն:
10. Գեղերու անխափիր գործածութիւն:
Պ. Յ. Փիլիպոսեան

Ցաւած ակռան տաք ջուրի մէջ թաթենաւած բամպակով կամ կտաւէ լաթի կտո-

բով մը ծածկուի և այս գործողութիւնը կրկնուի մէկ քանի անգամներ Յաւը շուտով կը դադրի որչափ տաք ըլլայ ջուրը և որչափ կարենայ տակալ մորդ, այնչափ լու և շուտ աղդեցութիւն կրնէ այդ միջոցը

Հարբուխի նորագոյն դարմանն է մանելու ու քլորոփորմ։ Հաւասար չափով դեղագործին խոռնել տալու է, ու 2-3 կտիլ միայն թաշկինակին վրայ կաթեցնել ու հստոտել։

Քիրէն արիւն հսող անձը եթէ բերանի ամսոր մը գոցելով խորունկ շունչ առնէ քիթէն և անմիջապէս մատներովը քիթը սեղմել էն ետքը, սկսի բերնէն շունչ առնել, քիթին արիւնը կը դադրի հսուելն, Պատճառը ընառիսական է, Պէտք ունեցողը այս միջոցը թու փորձէ։

Կանանց գլխու ջղային ցաւին դէմ զօր կը զգան առաւօտուն, երբ առջի գիշերը երեկոյթի առթիւ ծուխոտ ու ապտկանեալ օդով սենեակներու մէջ անցնեն, կամ թէ սւըիշ ո՛ւ է պատճառաւ անհանգիստ գիշեր

մը անցուցած են յանձնարարելի է կռնաւկի ստորին մասը պաղ ջրով սրբել և հաստ անձեռոցով մը շփել։ Այս գործողութիւնը կրկնուելու է կէտ ժամ եաքը

Փռնզտալը անվայել բան մը կարծելով, ընկերութեան մէջ ինքզինքնին կը զսպեն փը-անգաւալու ատեն։ Գիտութիւնը ցուցուց ստեկայն թէ, վայելչութեան հակառակ հանգա-մանք մը վերադրելու չէ անոր, մանաւանդ որ փանգտալն արգիլելը կրնայ անհաճոյ հետեւանքներ ունենալ, կրնայ ըլլալ որ փոքրիկ երակ մը պայթի գլխուն մէջ, և կրնայ ըլլալ ո՞նոյն իսկ կաթուած յառաջ գայ տակէ։

Յուրա օգերուն պէտք է որ ննջատենեանի 40 աստիճան բարիքառնութիւն ունենայ։ Փորձառութեամբ հաստատուած է որ օգը իսնաւ եղած ատեն պաղ սենեակին մէջ ա-պառզջ օդ կը տիրէ։ Թէև յանձնարարելի է ամսութ բաց թօղուն ննջատենեակին պատու-հանը, բայց ձմբան մէջ շատ զգուշաւոր ըլ-լալու և այդ մասին։

Եաեւր կաթ առւսղ կիներուն կը յանձ-

Նարարեն գարեջուր խմել, վասն զի, մտնու
ւանդ վերջին տարիներու, ընդհանրացաւ այն
կարծիքը թէ՝ գարեջուրը կը շատցնէ կնոջ
կաթը: Դիտական փորձով հաստատուեցաւ
սակայն թէ այդ կարծիքը միալ է: Ընդհա-
կառակը, շատ քիչ գարեջուր խմող կամ
ընան չխմող կիներուն կաթը աւելի առատ
է, շատ խմողներու կաթէն: Լաւագոյն է գա-
րեջուրին տեղ կաթ, լու ջուր ելն. խմել:



ԴԵՌԱՀԱՍՈՆԵՐՈՒՆ

— .

ԵՐԶԱԿԱԿԱՆ ԿԵՆԱՅ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԻՆ

Երջանիկ կեանք եթէ կ'ուզես վայե-
լէլ, նախ և առաջ ճանաչէ ունեցած բա-
րիքներու գարժեքը, ապա շափառու բաշ-
ձանքներդ, քանզի, ո'րքան աճին փափաք-
ներդ եւ բազմանան, ա'յնքան կը շատնան
կարօսութիւններդ: Պէտք եղածովն բաւա-
կանացիր. շափառութիւնը մեծամեծ գան-
ձերէն լաւագոյն է: «Ի՞նչ լաւ է» ըստ մին
փիլիսոփայի մը, «ի՞նչ լաւ է ամէն փափա-

քածն ստանալ ու ձեռք ձգել: «Լաւագոյնն
է» ըստ փիլիսոփան «ունեցած ովլքոնց ըլլալ»:
«Յօս սորվեցայ գոհ ըլլալ», կ'ըսէ Պօղոս Ա-
ռաքեալ:

ՃԵՄԱՐՏԱՎԻԿԱ հարուստ ըլլալու հա-
մար, կ'ըսէ իմաստունը, ոչ թէ սասցուածք
աւելցնելու ետեւէ ըլլալու է, այլ ցանկու-
թիւններն, փափաքներն ու բաղձանքներն շա-
փառուելու, զսպելու եւ սանձահարելու է.
այս է ՃԵՄԱՐԻՍ հարստութիւնը:

ԱՐԲԱՉԱ ապրիլ չունեցածովդ առանց
զգալու եւ վրդովուելու, տագնապելու եւ
յուզուելու անոր պակասութիւնովը. ա'հ,
ա'ն ատեն երջանիկ ես գունի:

ՇՈՒԱՋՈՒՐԵԲԻԿ եւ ագահովթինէ խոյս
տուր, երկուքն ալ մոլութիւն են: Խնայող
եղիք տիեն օր, իսկ առատառեռն երբեմն
Շուայլ մը տրատունջ կ'ընէր թէ գրամ չունի,
ափոխ տա», ըստ անոր Սոկրատ «Ճախերդ
շափառուելով»:

ԳԻՒՂԻԲԻԿԱ տեսնելով որ տարեց մարդ

մը ձիթասկառւզով ընթրիք կ'ընէ ըստաւ։ Մարդունքնեւ, եթէ ճաշդ այսպէս ըրած ըլլայիր, հիմա պիտի չսափոռեիր այսպիսի ընթրիք ընելը

Տղայ մը հարցուց իր հօրը թէ ի՞նչպէս այնքան ստացուածքի տէր է եղէր. «Ունկէ դիւրին բան չկաց, տղա՛ս», բառ հայրը, տղուն վառած ճրագներուն մին մարելով, «պէտք եղածավը բաւականալով եւ երբ մէկ ճրագ կը բաւէ, երկուքը չվառելով»։

«Փամանակը,» կ'ըսէ թէսովը բառուսու, «այնքան թանկադին բան մ'է, որ զայն ի զուր վատնողը շոսյը էն աւելի դատապարտելի է»։

Ծուլութիւնը թպյն, ժանգ մ'է, որ կ'սպականէ բոլոր պատուական ձիբերն, առաքինութեան սերմերն կը ջնջէ, այլ և ոյլ մոլութեանց ծնունդ կուտայ, նմոն անմշակ արտերու, որք մի միայն փուշ ու տաստակ կ'արտադրեն։ «Ստատանան ծոյլին համար ունի անթիւ, անհամար ծուղակ եւ որոդայիթներ, հոն ձգելու խեղձ ծոյլեր»։

Երեւակայութիւնը թունաւորող, ա-

պականեալ գրքեր ընաւ մի կարդաք, մանաւանդ գիշերային համախմբութերէ, ուր արք եւ կանացք կը խոնին, խոյս առւր, առոնք հեշտամոլութեան կ'առ աջնորդեն. մարէ կը բակը. լաւ չմարտծ կրակը նորէն կը բոցավառի. Խնդրէ վերին օգնութիւն բարի, մաքուր և առաքինի ըլլալու և մնալու համար։

Խաղամօլութեան սէր տալէ շատ զգոյշ պէտք է ըլլալ, սէրէն կը ծնի կիրք, և կիրքը ունակութիւն կ'ըլլաց։ Պղասոն տեսնելով որ իր աշակերտաց մին չափազանց հետեւող մ'էր խաղի, յանդիմանեց զնաւ. Աշակերտը արդարացնել կը ջանար ինքզինք ըսելով թէ չնչին բանի համար է խաղը։ «Խաղի կիրքը ի վերջոյ ունակութեան կը փօխուի» թիւնը ի իմաստ ունակութեան պահանջուց. «Խակ ունակութիւնը իմաստ վատնդաւոր կը դառնայ»։

Սպարթացիք մարդու գինովութենէ փրկելու համար իրենց գերիներն կ'արքեցընէին, եւ ի տես կը հանեկին հրապարակաւ, որպէսզի տեսներն գինովութեան դառնազէա հետեւանքներն որ մարդուս խելքը առնելով չհամեստ անքան կենդանիէ մը աւելի կը նուազյն անքան կենդանիէ մը աւելի կը նուա-

տացնէ, եւ հրաժարէին այդ սոսկալի մոլութենէն, Զարդիս գինովն սթափեցնելու համար գինովին լուսանկարն կը հանեն և իրեն կը նույիրեն:

Ներոն կայորը ցորչափ Աննեկոյի խորհուրդներուն կը հետեւէր, ընդհանուր յարդանք կը վայելէր, սակայն երբ շողոքորդութեանց ականջ տուաւ, ան ատեն իր անկումն սկսաւ, Որքան գիտուն և կարող ըւլսց մարդ, ի՞նչ հասակի, գիրքի և վիճակի մշջ ալ գտնուի, ուրիշին իմաստուն խորհուրդէն կ'օգտուի: Ապեղէս, անուանի նկարիչը, իր նկարներն հասարակութեան աչաց տոջին կը դնէր և ինք մօտը ծածկուելով ականջ կը դնէր անոնց գիտողութեանց, ու այսպէս կը բարեւզէր իր թերութիւններն:

Առաջինի և բարեպաշտ անձ մը քեզի խորհրդատու ըրէ և հետեւէ անոր առաջնորդութեան, խոյս տուր անոնցմէ որք քեզի խորհուրդ տալով իրենց շահերը նկատողութեան կ'առնեն:

Տ2 ԳԻՏԵԼԻՐՅ ԾԽԵԼՈՒ ՎՐԱՅ

4. Տղայոց անվայել է ծիւել, իրենք ալ գիտեն, ուստի գաղտնի կը ծիւեն: Ումանք չստիահաներէն կը բարկանան, այլք կը խնդան երբ տեսնեն տղայոց ծիւելը Տեսնենք թէ գիտութիւնը ի՞նչ կըտէ:

2. Տօֆ. Սիվը՝ Ամերիկայի Եւյլ Համալսարանի հազարաւոր ուսանողներուն վրայ հետազոտութիւններ ընելով՝ երեք կարգի բաժնած է բոլոր ուսանողները:

3. Ա. թեաւ չծխողներ. Բ. երբեմն ծլենովներ. Գ. կանոնաւոր ծխողներ:

4. Երեմ ու կես ամրուան լնթացքի մշջ գտաւ որ Ա. գասակարգի ուսանողներն, այն է չծխողներն, երկրորդ գասակարգէն 6⁶/10 առ հարիւր և 40⁴/10 առ հարիւր Գ. գասակարգէն աւելի աճուծ էին:

5. Աւելին կոյ. Ա. գասակարգը 3^{1/2} տարի ետքը Բ. գասակարգէն և առ հարիւր աւելի բարձր էր, և 2^{1/2} առ հարիւր աւելի քանի Գ. գասակարգը:

6. Առւրծի լոյնութիւնը լլ. գտասա-
կարգին վերաբերողներուն մէջ 22 առ. հար-
իւր Բ. գտասակարգէն, և 26^{7/10} Գ. գտասակար-
գէն առելի էր:

7. Տօֆ. Լօմպարտ, Միջիկանի համար
լսարանին փրօֆէսօրը, հաստատեց թէ ծխա-
խուր մատներու վրայ կ'ադգէ, ծխելէ 5—10
րոպէ ետքը մատնին զջրութեան 1/4 կ'ապառու:

8. Շարունակ թքնելն ալ վնասակար-
է, կորուսա է թուքին, որ կարեւոր է մարտո-
ղութեան համար:

9. Վիխելը բազկերակին կը վնասէ և կը
տկրացնէ սիրաբը Տօֆ. Պրատութըն կ'ըսէ թէ
42 տարեկան աղու մը սիրաբ 1/5 աւելի արագ
կը բարախէ սիկար մը ծխելէ ետեւ:

10. Վիխող աղան ծոյլ, թուլամորթ և
մոռացկօտ կ'ըլլայ, ապուշ կ'ըլլայ: Հարվըրտ
համալսարոնի Տօբթօրը կ'ըսէ թէ 5/6 ծխող
ուստանողներին և ոչ մին կարգին գլուխը
անցաւ: Քալիփորնիոյ մէջ աղջիկներն գե-
րազանցեցին մանչելն ամեն գտաերու մէջ:

11. Նամակատան մէջ պաշտօն ըն-
դունելու համար պայման է չծեռղ ըլլալ:

12. Վիխելը բարոյապէս կը վնասէ, աը-
լոյց ծնողքներէ գաղանի ծխելնին արդէն
նկարագիրն կ'ապականէ, խարդախութիւն,
կեղծիք յառաջ կը բերէ, սիկար, թուղթ,
ծխախոտ և լուցկի ձեռք բերելու համար դո-
ղլոթիւն կ'ընեն 603 աղայոց, որ սատիկանու-
թիւնը պատժոյ ենթարկած էր, 51 առ. հար-
եւըլ 7—16 տարեկան աղայը էին, և 3/4 թո-
ղլոթիւն էին ըրած: Նսյոնպէս 87 առ. հարիւր
չսիահաս ոճրագործներն ծխողներ էին:
Իժեշիներ կ'ըսէն որ ծխող աղայը արբեցոյլ ալ
կ'ըլլան, և մօրֆինամոլ: Վիխելը բերնին մաշկը
կը չորցնէ, ուստի կը սահպուի ալքոհոլ պա-
րունակող ըմպելիներ փնտուել ծարաւը ան-
ցընելու համար: Ուստի լուսագոյն է ծխել
չսկսիլ:



ՊԱՏՄԱԿԱՆ

ՍՈՒՏ ՄԵՌԵԱԼՆԵՐ

Հնատիտի կոմք քոլերայի համաճար
բակի տաք ատենին, 1884, Արդան կոմի-
չուեցաւ մեռնելու մօտ եղազ 60 տարեկան
կնոջ մը մօտ, և անոր տուաւ վերջին հազոր
դութիւնը, Անկէ ետքը ի՞նչ սնցաւ, Պ. Ար-
քս Կիկուն չի գիտեր, Բայց բժիշկը սասրագ
րեց մահուան վկայագիր մը, որուն վրայ Ար-
քան ձրի թաղումի տոմսակ տուաւ, որով չե-
տե կինը աղքատ էր, Բոլոր այս ձեւակեր-
պութիւնները շուտով կատարուեցան հի-
ւանդութեան տարափոխիկ ըլլալուն պատ-
ճառով, Յաջորդ տուաւուան, կը պատմէ
Պ. Կիկուն, կրկին նոյն տունէն կանչուեցայ
նախորդ իրիկունը հաղորդած հիւանդիս տղ
ջըկանը քով որ իր կարգին քոլերային վա-
րակուած էր, Արդ՝ մտնելով այն սենեակի
ուր նախորդ իրիկուան մեռնելը կը գտնուեր
որ բքան մեծ եղաւ առկումն տեսնելով որ մե-
ռելը շարժումներ կ'ընէր, Ան՝ որուն մահը

վկայուած էր, կ'ապրէր տակաւին, և իմ դրա-
սեղանիս վրայ էր, կ'ըսէ Պ. Արքա Կիկուն,
թաղումին արտօնագիրը, որը արուած էր տ-
ռաւուսեան ժամը 9ին համար:

Ցունուար 47ին, 1903, առաւօտեան
ժամը 9ի մօակերը, Պ. Տաբօթ. Կիկուն Մարսի-
լիայի ամէնէն բանուակներէն մէկուն
մէջ կ'կանչուի, հաստատելու համար մահը
պանդոկի ճերմակեղէններու վրայ հսկող 29
տարեկան և ընկի Կոգուենցի Խնկլարի անուն
կնոջ մը Գիշերը մեռած էր, ժամէ մը ի վեր
կնոջ մը Գիշերը մեռած էր, Արդ՝ երբ Պ. Կի-
կուն իր այցելութիւնը կատարեց, մարմինը
տաք ու ճկուն էր, բաղկերակը տակաւին
նշմորելի Ուժեղ միջոցներու աղդեցութեան
առաջ սուսակ կ'ետանքի եկաւ և
առաջ, սուս մեռնելը շուտով կ'ետանքի մէջ
խօսեցաւ իր բժիշկին հետո Պանդոկի մէջ
մահ մը միշտ պանդոկապետին համար տաղտո-
կալի իրողութիւն մըն է, գործը շուտով վեր-
ջացնել պէտք է, մեռեալը շուտով հեռա-
ջացնել պէտք է, Խնչ պիտի պատահէր, եթէ բժիշ-
կը պանդոկապետին նկատմամբ չափազանց
հաճոյակատարութիւն ցցց տալով, առանց
քննութեան մահուան վկայագիրը ստորագ-
քննութեան մահուան վկայագիրը ստորագ-

չութենէն վկայագիր պահանջուած չըլլար, ինչպէս կը պատահէի շատ մը քաղաքներու մէջ։ Դժբաղդ կինը գյոււրաւ պիտի ազատէր ողջ թաղուելու զարհութերի հեռանկարէն։

Ուրիշ օրինակ մատանանիշ եղած Պ. Տօբթ. Կուտարի կողմէն Պ. Իկարի և 1885ի առաջները, գիշերով, առաւառեան ժամը 4ին առենիները կանչուեցայ 60 տարեկաննոց հիւանդի մը մօտ, որը կը դարմանէի կրկնակի թօքատապէ մը։ Երբ հասայ, ինձ ծանուցին որ իմ հիւանդու քիչ առաջ հոգին աւանդած էր։ Մօտ ժամը մը կարելին ըրբ զայն կեանքի բերելու համար, և բոլըովին յոյա կարած, մահուան վկայագիրը խմբագրելէ վերջ մեկնեցայ։ Երբ սանդուղին վարի ծայրը հասայ, դառնակուիծ յուզումով մը սիրտս ուղմնեցաւ մատածելով մեռեալին կնոջ խղճակի վիճակին վրայ, այդ քաջարի կնոջ, զոր իր ամուսինը լքած էր եօթը զաւակներով։ և իր երկու բազուկներով իբրև ապրուատի միակ միջոց։ Վեր ելայ կրկին անդամ և գործածեցի Մայեօրի գեղը, սրտին վերին մորթը խոր կերպով այրելու աստիճանի Յանկարծ կոպէրու շարժումը մը նշա-

րեցի և շարունակեցի գրգռումի ու կազդութումի բոլը տեսակիները, մինչև որ ան՝ որը գիտկ մը կը նկատէի, վերակենդանացաւ և վերջ և վերջը առողջացաւ։ Այս մարդը իր կեանքը շարունակեց ինչպէս անցեալին մէջ, ու ապրեցաւ տակաւին երկոր տարիներ : Եւ անոր մահուան վկայագիրը ստորագրուած էր»

Կայուրութեան ծերակուտական կարդինալ Տօնէի պարագան շատ ծանօթէ։ Կանխադասութափութեան համար մէկ համարին մէջ հաս թագումներու վրայ իր մէկ համարին մէջ պատմած է թէ ի՞նչպէս քիչէ մնաց ողջ ողջ պատմած է թէ թագումներու թագման հանդէսին պիտի պարագան Մօնս. Կիդասի, որ իր բժիշկէն պարագան Մօնս. Կիդասի, որ իր բժիշկէն մեռած յայտարարուելէ վերջ, ինքնարերամառած վերջ, ինքնարերամառած է, իր քավ աղօթող բար վերակենդանացած է, իր քավ աղօթող բար համայներուն և հաւատացեալներուն մէջ քահանայներուն և հաւատացեալներուն մէջ առեղջութիւնը սայդգ է, որովհետեւ ոլուեղ։ Իրողութիւնը սայդգ է, որովհետեւ ոլուեղ։ Իրողութիւնը սայդգ է, որովհետեւ ոլուեղ։ Իրողութիւնը բժիշկը ինքը պատմած է Պ. Իկարին. Մօնս. Կիդաս 45 օր ալ ապրեցաւ։

Աթէնքի համալսարանէն Տօբթ. Քարանձիտէն Պ. Իկարի պատուած է նոյն հա-

մալսարանի բնախօսութեան բրօֆէսօրին, Պ. Ֆ. Բուտարիսի դիտած պարագան Ստ 4851 ին, Աթէնքի մէջ ուրիշ բժիշկներու հետ ականատես եղաւ մեռելի մը կենդանանաւ- լուն, երբ հանդիսաւոր կերպով անոր թաղ- ման հանդէսը կը կատարէին:

ՆԱԽԱԲԵԿՈՒԽԹԻՒՆ «ԲՈՒՆԻԱ» ՇՈԳ. ԽԱԽԻ

Սեւ ծովի Ա. Տարուա նաւահանգիստէն երկու մզոն հեռու փոքր նաւահանգիստէ մը ածութ առինք և ուրբաթ օր մեկնեցանք հոն- կէց՝ Երէլլի երթալու համար Շաբաթ օր ալ մեկնեցանք Երէլլի և կէս գիշերին հասանք Ելիթի փարոսին առջեւ: Օդը արդէն մոտահա- գութիւն կ'առթէր, բայց վարժուած մար- դիկ՝ Սեւ Ծովի քմահաճ ալիքներուն, ան- տարըեր շարունակեցինք մեր ընթացքը, Յան- կարծ սակայն ամոնքերը կուտակուեցան գլուխ- ներուս վերեւ և պայթեցաւ միրիկը: Ալիք ները սոսկալի խառնակութեամբ մը կը յար- ձակէին մեր վրայ:

Նաւազեառը հովին ուղղութեան մէջ դրաւ շոգենաւը, և այսպէս կրցու դէմ դը- նել փոթորիկին սաստկութեան: Մինչև առ-

տու, շոգենաւը խաղալիք եղաւ ալիքներուն ձեռքը, և ընկայի կեղեւի մը պէս կը տա- տանէր: Ալիքները նաւեին ամէն կողմէին խոռ- ժելով, անդադրում կը որբէին, կ'աւելէին ու ծով կը քշէին ինչ որ կար վերնայար- կին վրայ: Առաւեօտուն կը շարունակէր փո- թորիկը: Նաւապետը շոգենաւը դէպի ի նեղուց ուղեց, բայց երեք ժամուան ճիգեր անօ- դուա եղան նաւել քիչ մը առաջացնելու: Նաւապետը վերջապէս նորէն յաջողեցաւ հովին փշած ուղղութեան մէջ դնել շոգե- նաւը, և ժամը կին սատենները ցամաքը տես- նուեցաւ: Բայց չկրցանք հասկնալ թէ ուր էինք, կարծեցինք թէ Սեւ Ծովի Բումէլիի եղերին մօտերը կը գտնուէինք: Փոթորիկը կը շարունակէր ամենայն սաստկութեամբ: Կատարելու ամէնքն ալ կատարեալ պա- շտրինաւթեամբ և քաջասրտութեամբ կ'աշ- խատէին, և նաւապետն ու մեքենավարը սիրտ կուտային: Ժամանակ մը վերջը, ժամը 8 ին սատենները, հեռուեն հեռու աեսանք Օսմ. առաջապատճեալ մը, բայց ան ալ անհետ ե- ղաւ քիչ ետք մեր աչքերէն: Մինչև այն ա- մէն յայսի նշուն մը ունեինք դեռ, բայց ալ սկսանք վհատիլ, և յուսահատութիւնը կա-

տարեալ էր, Երկու աղաքներ կային նաւուն
մէջ, որ սկսան պոռալ, պոռչուալ և լացու-
կածել, Անոնց, այս եղերերգը ընդհանուր շփո-
թութիւն մը պատճառաւեցին, նաւապետն ա'լ
յաւահատեցաւ նաւը հովին հակառակ ուղ-
ղութեամբ վարելէ, իր բոլոր ջանքերը ի գե-
րեւ ելած էին. փորձ մըն ալ ըրաւ որ շոգե-
նաւին ցուուկը գէպի Վոսփորի նեղուցը դար-
ձնէ, բայց նայն պահուն ամենի ալիք մը ե-
կաւ ծով քշեց նաւակները, կողմացոյցն եւ
վերնայարկը գտնուող ամեն ինչ, Այն առեն
նաւապեար հրամայեց որ բոլոր նաւազները
պազարիւնութեամբ շարունակին իրենց պաշ-
տօնները, մեծ կարմին առագաստը պարզուի
և նաւը գէպի նեղուց առաջ տարուի, Մեր
ընկերներէն, Ասնիա, կոցաւ զեկը վարել, և
նաւը գարձնել նեղուցին կողմը: Բայց նա-
ւազներէն շատերը այլայլած և ինքզինքնին
կորուսած էին, Վերջապէս, իր մօտեցանք
Գրսը Գոյցահն, այս կողմ սկսանք նաւել,
որպէսի եղերքը խեցնենք: Նոդենաւը երր
ժայռի մը կը մօտենար, նաւապետը հրամա-
յեց նաւազներուն որ պատրաստ գտնուին:
Դաւը թէւ նատաւ ժպախին վրայ, բայց փո-
թորիկը այն աստիճան ստատիկ էր որ նորէն

ետ մղուեցաւ և ատար վայրկեան վերջ ուրիշ
ժայռի մը վրայ նատելով հոն կանգ առաւ:
Հսու լեռնանման ալիքները նաւը կը խեղդէին
իրենց մէջ, բոլորս ալ շուարեցանք, յաւա-
հատութիւնը պաշարեց մեր միտքը, և ծով
նետուեցանք իրը փրկութեան միջոց ցամոք
եյնալու համար: Ավիքները մերթ մեղի բար-
ձրերը կը հանեին և կը տեսնէինք ընկերոջ մը
մարմինը որ նոյնպէս կը մոքառէր, մերթ ալ
ամէն ինչ մութ կ'երեւար մեր աչքերուն և
կարծես իստարի մէջ թաղուած էինք: Եղեր-
քէն մղոն մը հեռու էինք: Եօթը հոգի մա-
քառելով, 'և ոգի իրախն աշխատելով վայ-
րագ տարրերուն գէմ, հասանք Գրսը Գա-
յա, մինչև մէկ մղոն տեղ լողալով: Միւս
տասը հոգին, որոնց մէջ է նաև նաւապետը,
խեղդուած էն: Ազատարարութեան կայսենին
պաշտօնեաները մեծ մարդառէրութեամբ
վարուեցան մեղի հետ, թէյ և հագուստ
արուեցաւ, և բժշկական գարմաններ եղան:
Մենք եօթը հոգիներս Յաւնաստանի Կալաբ-
րիան քաղաքէն ենք:

«ՀԱՌԱՆ» ՇՈՐԵՆԱԽՈՂԻՆ ԱՂԵՏԻ

Աղետեալ շոգենաւուն նաւազերէն
մէկը, կրունդէք, հետեւեալ կերպով կ'պատմէ
աղետին պարագաները — օՅս ժառայու-
թեան մէջ չէի, և խցիկս պառկած էի, որ
յառաջակողմը կը գտնուէք: Սարսափելի փո-
թորիկ կը տարէք, և սասափի կը ձիւնէք, ահ-
ռելի էք ահսարանը, աշտագնադղորդ ժխոր մը
կը տարէք, ալիքները կը գոռային. յանկարծ
ոհուելի բաղիսում մը տեղի ունեցաւ, որուն
յաջորդեց ըսնի մը քասուելու ձայն մը, կճրո-
տուք մը: Նաւապետ կրէկորի իր օգնակա-
նին հետ նաւուն կամբջակին վրայ կը դպո-
նուէք, և երկուքն ալ կատարելապէս հան-
դարս էին: Հակառակ խոր մը ութեան, խու-
թերու ծայրեր կրնայի տեսնել: Ազատարար
հաւը ծովլ իջեցընել բացարձակապէս անօ-
դուտ պիտի ըլլար, զի պիտի ջախջախուէք առ-
պառաժուուներուն վրայ: Նաւապետը ձայ-
նասու գործիքին մէջէն պոռաց ինձի որ միւս
նաւակները ծովլ իջեցնեմ, բայց ասիկա ան-
կարելի եղաւ, զի շոգենաւը շարունակ կ'ե-
րերար և ամէն մէկ շարժումին ժամանակ կը
ջախջախուէք, ժայռերուն զարնուելով: Այն

առեւն նաւապետն իր բոլոր ձայնովիս հետեւ-
եալը պուռաց իրեն աւելի մօալ գտնուողնե-
րուն. — «Ասսուծոյ սիրոյն, տղա՛քս, նաւակ
մը իջեցուցէք: » Բայց նաւուն երկու կող-
մերէն վեր ցցուող ժայռերն արդեւք եղան
մէր բոլոր ջանքերուն, և հազիւ թէ ձախո-
կողմի մակրյիլ վար իջեցնելու վրայ է ենք,
երբ շոգենաւուն սկսաւ ծովլուն տակն երթալ:
Հոգենաւուն մէջ խուճապ աւագ չեկաւ:
Տղաք և կիները վերն հաւաքրուած էին, և
երկու սենեկապանու հիներ ազատարար գո-
ահներ կը բաշխեին անոնց, կիները ըսն մը
չէին ըսկը: Դմ' մօս պղտիկ աղջիկ մը կ'գըտ-
նուէք որ կուլար:

Ֆրանսացի սոխի վաճառականները կ'օգ-
նէին կիներուն՝ իրենց ազատարար գոտիները
կապելու: Տեսայ այս ամէնքը, մինչ մէկ կող-
մէ շոգենաւը ծովլուն յատակը կ'երթար, և
ոչ շոգենաւը սոմնուն ալ հանդարտիկ երե-
ղարմացայ սոմնուն լնկղմեցաւ, Երբ նաւն լնկղմեցաւ,
ձեան մըրիկի մը մէջ կը զտնուէինք: մէծ
կայրին վրայ մագլեցայ նաւապետի օգնա-
կանին և խոչարարին հետո: Կայրմը կատարե-
կանին մէկ կողմը, կոյմին միւս
լապէս հակեցաւ մէկ կողմը, կոյմին միւս
կողմը շուլլուած ֆրանսացիները քշուեցան

տարուեցան ջուրերեն, ապա կայմը կիսավի՞ն
բարձրացաւ. քսան հոգի կար մեր մօտը, երբ
նաւն ընկղմեցաւ: Նաւապետի օգնականը, որ
ինձմէ վարօք կը դանուէր, ինդրեց որ թղթ
տամշիրեն քիչ մը աւելի վեր բարձրանալու
եթէ կարելի է: Արցածիս չափ վեր ելայ,
ցուրտը կը մեռցներ կոր զիս. նաւն ընկղմելէն
երկու ժամ ետքը, նաւազապետը ձգեց ինք-
զինք և վար ինկաւ. Նաւապետի օգնականը
մինչև վեց ժամ դիմացաւ, բայց անկէ ետքը
վար ինկաւ, և դիման հոն մնաց: Ուրիշ մարդ
մ'ալ մեռաւ, ինկաւ, և առքին կախուած
մնաց: Արշալյուէն քիչ առաջ ֆրանսացի
մ'ալ մեռաւ և ինկաւ, բայց մէկ սորքէն
կախուած մնաց կայմին վրայ: Քուն կար վը-
րաս, և ես ստիպուած էի կոռուիլ քունի
բուռն մարմաջի մը չետ Վերջապէս երբ
լյար ծագեցաւ, տեսանկ այն մաշտարսուռ
ժպյուերը, որոց վրայ նաւաբեկեր էինք, և
տեսանք Ատան, կչո մղոն չեռուէն:



ԲԺՇԿԱԿԱՆ

Տօքր. Ռւիլեամ Պաքներ, Պալթիմորի
Նիւանդանոցը բերուեցաւ և քննուելով տես-
նուեցաւ որ ուղեղին մէկ մասը փտեր է, և
եթէ թողարկի միւս մասն ալ պիտի վարակ-
ուի: Բժիշկը կը իմանալով որ նոյն օրը մանուկ
մ'է մեռած, անոր ուղեղէն մաս մը առաւ և
ոյս մարդուն փտած ուղեղի մասը հանելով
անդը այս մանուկէն առածը դրաւ: Հիւանդը
մի քանի օրէն ապաքինեցաւ:

Նոպէլեան մրցանակը. — Սթոք-
հոմէն կը հեռագրուի թէ 4912ի համար
Նոպէլի բժշկութեան մրցանակը տրուած է
Տոք. Ալէքսի Քառէլի, Նիւ Եորքի կնաքիրիւ
Բարիթիլլուի անդամ, երակներն զօդելու և
մարմնի հիւանդ անդամները կարելով նորէն
փակցնելու մասին իր կատարած աշխատու-
թեանց համար: Մրցանակին ոյս տարրուան
գումարն էր 495,000 ֆրանք: Բաքֆէլլը, որ
յիշեալ բժիշկին համար յատկապէս հաս-
տատութիւն մը հիմնեց Նիւ Եորքի մօտ, առ-

կե առաջ Ամերիկեան թերթերու մէջ պատմած էր ոյն հրաշալի արդիւնքները զորս ձեռք բերած էր երիտասարդ ֆրանսացի բժիշկը, որ չէր գոհանար հիւանդ անդամները կտրելով, այլ անոնց տեղ առողջ անդամները կը զետեղէր: Խոկ Ֆրանսացի Ակադեմիային մէջ Փրոֆ. Բոցցին էր որ զգայացունց տեղեկագլուխեան մէջ բացատրեց կենդանական վերակազմութեան հրաշները, զարս կը գործէր Տօք. Քառել: Արդարեցմարիս վերակենդանութիւն մ'էր որ կուտար հիւանդ մասին, զարմանալի վիրաբայժը եթէ բազուկ մը անդարմանելիօրէն հիւանդ էր, եթէ փայցծախ մը ծանրապէս վլաստուած էր, ինք կը փոխէր բազուկն ալ, փայծախն ալ: Տօքթ. Քառել ինքն խոկ բացատրած է իր հրաշալի մեթոսը: Ապացուցուց որ մարդկային անդամներն ու հիւանդաներն իրենց սեփական կեանքն ունին գործարանական թերթեան անկախարար և հետեւորար կարելի է փոխել մայր երակները և մշակել հիւանդամները մարմնոյն գործարանական կեանքէն անկախարար: Աւելին կայ, սիրտ մը մարմինէն հանուելով ու կոտորակուելով, կը բարախէ՛ աւելի քան երեք ամիս: Ո՞վ

Կ'արգիլէ որ օր մը այսպէտակ կարելի չըլլայ
արուեստականօրէն կենդանի էւակներ յա-
ռաջ բերել : — Աւասիկ այն գիւտերը, առ-
ասիկ այն գիւտունը, որոնց նոպէլեան հաս-
տատութիւնը կոգւայ տալ իր բարձրագոյն
վարձարարութիւնը:

Գինի եւ ալքօլ . — Ալքօլը բնական
վիճակով կը մտնէ արեան մէջ , քիչ քիչ
կ'այլացըլէ այս հեղուկն և հետեւարար այն
լուրջ գործարաններն որ կրնան լիսասուելլ թէ
առանձինն և թէ միասին Սիրան իր ծառալը
կ'ընդարձակէ և կը ստուարանայ մաս մը
ճարպով՝ որ կը նեղէ անոր գործողութիւնն
և կը տկարացնէ զսյն Զարկերը խուե կը ը-
լան և բազկերակը տկար կամ անկանոն
նաև ալքոլամոլին շնչառութիւնը յաճախ
կը նեղութիւ

Եեշերակները կ'ենմթարկուին խանգարու-
մի մը՝ որ իրենց ներքնակողմերուն առաձգա-
կանութիւնը կը նուազեցնէ, և այսպէս կը
կեղեն արեան յառաջիազդութիւնը, որ
արդէն ինքնն այլայտած է։ Կարծրացած ըլ-
պով՝ գիւրաւ կը պատահին անհնքի

Ազդեցութիւն ուղեղին վրայ . —
Ալքոլ կը կուտասկութ ուղեղին մէջ : Յաճախ
կը տեսնուի նաև որ պատառին ուղեղին շնչե-
րակները, որմէ առաջ կուգայ ուղեղի արիւն-
հոսութիւն, որուն վրայ խօսելու առիթը ու-
նեցած ենք : Այս միւնոյն երակները, ու-
րիշ պարագաներու մէջ կը գոցուին թանձ-
րացած արիւնի խիցով մը, որ ուղեղին մէկ
մասին սնանիլն արդիլելով՝ տնոր աւելումն
յառաջ կը բերէ, — ուղեղի թուլացում : Ե-
րիւն հոսութիւն կամ թուլացում միւնոյն
հետեւանքն ունին — մէկ կամ աւելի անդամ-
ներու լուծոտութիւնն եւ աւելի ետքն
աւելումը : Ուղեղի միայն այս հիւն-
դութիւնները չեն որ կը հարուտածեն ալ-
քոլամոնները : Վեհնոտութիւնը, գնդերահա-
սութիւնները յաճախսագեպ են : Յիմարներու
ապաստարաններուն մէջ, ուր միայն ժամը
կերպով հարուտածեալ ջղագարներ կ'լնդան-
ուին, խմողներու գասը՝ հիւնդներու 400ին
20էն աւելի կը ներկայացնէ : Անոնք ենդ ար-
կայ են գողդոջական ցնորսնիք, սակալի
հարուտածներու, որոց միջոցին հիւնդն իր
դլուխը կը զարնէ այն խցիկին պատերուն որ
զինքը կը փակեն :

Յիմարսւթեան այս ձեւը միակը չէ : Սո-
վորաբար պակաս կոչուած անձերու մէջէն
շատեր իրենց թելքին տկարսւթիւնն ալքոլին
կը պարախնի Երկար տաենէ ի վեր հասասա-
ռուածէ որ յիմարներու թիւն ուղիղ համեմա-
տական է գինետուններու թիւին, եւ երկրին
մէջ խմուած ալքոլին քանակութեան հետ

Ս. 6. Ճնասապանութիւն . — Կասարե-
միք պարտականութիւններ ունեցող բոլոր
անձերու մօտ տեսնուած այս վաս գործը
նոյնպէս ուղեղի խանդարում մը կը յայտնէ
և անձնասապանութիւններու առնուազն 400ին
44ը կը կատարուին ալքոլամոններու մօտ :
Դողութիւններու և մորդասապանութիւննե-
րու տա նուազն կէոր գինովներէ կատարուած
են :

Ս. զ. դեցութիւն և նշառութեան գոր-
ծարանին վրայ . — Խռչակին մէջ տեղի
ունեցած հաւաքումի հետեւանքով՝ ձայնը
կըլլոյց խռագոտ, ծուատեալ, և յաճախ կը
մարի առատունները, երբ գժուարին հազ մը
կը յայտնէ շնչափողին գրգռութիւնները :
Ալքոլամոնը թիւնը շատ կը նպաստէ թո-
քախտին:

Ազգիցնուրիւն մարքին վրայ . — Մորթը կը կարմի, այտերուն եւ առունդին վրայ արեան ցանցիկը չափազանց կ'ընդարր ձակուի: Ուունգը կը ծածկուի խաւարաներով և կրնայ ընդարձակուիլ, մորթի ախտ մը յաճախսդէպ կ'ըլլայ: Այս հիւանդութիւնները մասնաւորապէս ծանր և դժուարապսյժ են ալքոլամոլներու մօտ:

—
Ազգիցնուրիւն մարսողական զոր ծարաններու վրայ . — Լեզուն՝ որ կարմիր ճեղք ճեղք կ'ըլլայ և որուն գեղձերուն ծաւալը շատ կը մեծնայ, կը կորսնցնէ ճաշակի զգացումը: Մեծաքանակ զինիի վաճառականները չեն մոռնար այս մասնաւոր պարագան, և խնամք կը տանին որ պահէն իրենց անհրաժեշտ եղած ճաշակի նրբութիւնը, շունչերնին քաշելով քանի մը կաթիլ միայն կը կլեն այն ըմպելիքէն զօր գնահատել կ'ուր զեն: Կակորդը, նոյնպէս զրգուած, կը նպաստէ ձայնի ծուատումին: Ստամոքը, ուր ովքովը կը կենայ՝ ծծուելէ տառաջ, շուտով կը խանդարուի: Ընդարձակուած ըլլայ (գարեջուր խմնղներունը) թէ կծկուած (ալքոլամոլներունը) գեղձերու խանդարումներ կը

ներկայացնէ ան, որ կը յայտնուին առատուան հուզոյին հոսումնալ (մաղսո) և կեղաւորութիւններով, որք կարմիր և սեւորակ արեան փսխումներ յառաջ կը բերեն և ընդհանրապէս շատ օրեր կը կրկնուին շաբունակաբարու Աղիքներու նմանօրինակ խանդարումներ յառաջ կը բերեն փորհարութիւն, արեան ելքեր, և աւելի ետքը՝ հիւանդին նիշարութիւնը: Լեարդին վասա կը պատճառեն, դեղնութիւնն, փորի ուռեցում և արիւնհոսութիւններ:

—
Ազգիցնուրիւն զգայարաններու վրայ . — Միզեւու պէտքը խիստ յաճախակի կ'ըլլայ, և ջրուաեցներ կը տեսնուին մարմինին զանազան կէտերուն վրայ, կոպերուն, սաքերուն և փորին վրայ:

—
Թօլոր հիւանդուրիւններու երուած ծանրուրիւն . — Ողելից ըմպելիներու շարուչար գործածութիւնը կը կնծուատէ այն բուլը հիւանդութիւններն, որ կրնան յառաջ գալ մարդու մը մօտ, եւ անոնց ծանրութիւնը կ'աւելցնէ: Երբ ցուրաի մէկ հարուածին աղդեցութեանը տակ ալքոլամոլը

կուրծքի հիւանդութիւն մը առնէ, կամ երբ անկումի մը հետեւանքով խորսակուի իր մէկ անգամը, իր թողերը, սոկորները, սասնք արդէն գէշ անած, կը բժշկուին, կ'ամրանան շատ աւելի երկայն ժամանակի մը մէջ միսյն, քան թէ ուրիշ մարդերու քով՝ Նաս ան նշան սրտնեղութիւնով կատարի ցնորում մը կրնայ երեւան գալ: Եթէ ուեւ փոխանցիկ հիւանդութիւն մը, մասնաւորապէս քօլէրան երեւան ելէ երկրի մը մէջ, գինովներն անոր առաջին զոհերը կ'ըլլան:

Փառանգականութիւն. — Այս աը խուր պատկերախումբը տակաւին չաւարտեցաւ: Ալքոլամբը միայն իր անձին չվասեր, այլ իր զաւակներուն առազջութեանն ալ: Ոմանց մօտ ժառանգականութիւնը կը յայտնուի, առաջին հասակին մէջ, դնդերահարութիւններու արամադրութիւնով մը, գործերու և մտածումներու չափաղանց փոփոխականութիւնով մը, երիտասարդ ազդիկներու մօտ ջղային հիւանդութիւններով: Վեճակագրութիւնը կը ցացնէ որ վերնաս չորս տղապէներէ երեքը ալքոլամութեաններէ ծնողքներէ ծնած են: Ալքոլամապէս և աւելի յետյ թու-

քախտի կանկատրամադրութիւնը նոյնպէս այս խեղճ աղոց բաժինն է, վերջապէս անոնց մէջէն շատերն անձուկ ինելք մը կ'ունենան: (ապուշներ, պակասամիտներ), ոմանք շատ պղպիկ հտասկի մէջ անդիմադրելի հակամիտութիւն մը կ'ունենան զօրաւոր ըմպելիներու մտան, հակամիտութիւն որմէ զանոնք ուղղութեան բերելն յաճախ շատ գժուար է և որ ուղեղի խանդարում մը կը յայտնէ: Ալքոլէն կործանուած ընտանիքները բալըաթիւն են: Անդիմական օրավելքիթ մը կը նշանակէր ապօւշ և վերնոտ մեռած ալքոլամոլի մը եօթը զաւակներուն ճակատագիրը: և հոգի մեռեալ ծնած է, 2 հոգի դնդերահարութիւններէ մեռած են՝ առաջին հասակի մէջ, և հոգի անբուժելի հիւանդ եղած է, և հոգի թափառականութիւն առաջին դատապարտաւած է, և աղջիկ անձնասպան եղած է՝ իր ամուսինն ու զաւակները սպաննելէ յետոյ, և հոգին մահուան դատապարտաւած է՝ մարդասպանութիւն համար: Ալքոլին չարաշար գործածութիւններն ափուր հետեւանքներուն պատմութիւնը կը սորվեցնէ մեղ որ, պէտք է կանութէն սոտանալ զօրաւոր ըմպելիներէ հրամարելու սովորութիւնը: Նպան իսկ չափաւոր գործութիւնը կ'ըլլան:

ծածութիւնը կ'առաջնորդէ չարաչար գործածութեան, որ հիւանդութիւն կը պատճառէ: Հիւանդանոցին ներքին բժիշկ մը որ մը կ'ըսէր իր պետին՝ զինովին մը դիմիկին առջեւ: «Իր վերջին պղտիկ քաւաթթը ոգաննեց զինքը»: — «Ոչ» պատասխանեց Փրաֆեսորը, «վերջին պղտիկ քաւաթթէն չէ որ մեռաւ ան ոյլ առաջնուն»:

Թարգմ. Ալեղոս Դրիգորեան

Նիւ ձերզի նահանդի նիւարք քաղաք բնակող Տիկին Զարլզ ձենթըր անուն կին մը երկու տարի առաջ նիւ նորքի Աւենթ Մարթինս հիւանդանոցը կը դիմէ՝ զգացած ներքին անհանդասութեան ու ցաւերտուն դարմանի համար: Հիւանդանոցի բժիշկները յետքնութեան ու խորհրդակցութեան, կ'որոշեն դորդողութիւն մը կատարել, և ըստ որում խնդիրը ծանր հանդամանք ունէր, Միացեալ նահանդաց ամէնէն նշանաւոր բժիշկներէն մին եղող և յեշեալ հիւանդանոցին զիմանը վիրաբոյշ-բժիշկ Տափթ. Զարլզ իլ կը կատարէ դործողութիւնը ի ներկայութեան բաւական թուով նշանաւոր բժիշկներու: Հիւանդ կինը իրաւ է որ իր ունեցած անհանդասու-

թիւններէն ու ցաւերէն բժշկուած կը զգար, սակայն քիչ եաքը ուրիշ տեսակ ներքին անհանդասութիւն մը կը սկսի զգաւ, բալըրովին տարրեր իր նախկին վիճակէն: Քանի մը շաբաթ առաջ, կինը իր մարմնոյն վրայ գործողութիւն կատարուած և կալուած տեղին վրայ գերձանի թել մը նշանաւով կը սկսի զգուշութեամբ մը քաշել, և երբ կը տեսնէ որ հետզհետէ թել կ'երկարի, մինչև ութը ոտքքաշելն եաքը սոսկում և սարսափ մը զգալով, կը դադրի այլ ևս թելքաշել, և իսկայն յիշեալ հիւանդանոցը կը դիմէ, ուր երկրորդ գործողութիւն մը անհրաժեշտ համարուելով, հիւանդանոցին գրոշմը (մոլքա) վրան քառակուսի սոտք մը մեծութեամբ անձեռոց մը կը հանեն փորէն: Այդ հիւանդանոցը հաւրաւեալ էր իր մաքրութեան եւ հիւանդապահ կիներաւն զգուշաւորութեան համար, սակայն հիւանդանոցին գրոշմը վրան կրող անձեռոցին գտնուիլը անհերքելի ապացուց մ'է թէ, երկու տարի առաջ կնոջ վրայ գործողութիւն կատարուած ատեն, անուշագրաւթեամբ բժիշկին ձեռքի անձեռոցը մէջ մնալով՝ վերը գոցեր են: Արդ, Տիկին ձէնթըր հիմա գատական իշխանութեան դի-

մելով 40,000 տալոր (առաւելքան 2,000 սակի Անգլ.) հաստացում կը պահանջէ յիշեալ Տոք, Զարլ Խէնն երկու տարի առաջ գործողութիւնը կատարած տաեն, անուշադրութեամբ ձեռքի անձեռոցը փորին մէջ ձգելուն և ոյդ պատճառու զգացած անհանգուածիւնը հետեւանօք երկրորդ անգամ գործողութիւնը մը կատարուելուն համր



ՏՆՏԵՍԱԿԱՆ

—

Առունեզը մինչև կաղանդ թարմ կը մնայ, աղցանի համար, հետեւեալ կերպով՝ վարունգը, քաղուած տաեն ճիշդ մնան պէտք է կտրել այնպէս որ կոթունը վարունգին վրայ մնայ: Աւելորդ է ըսել թէ գեղեցիկ ու յշկուն վարունգները նախընար բեկի են: Ազա պարզ ջուրի մէջ խնամքով ու փափկութեամբ լուալէ եաքը չորցնելու և հաւկիթի ոպիտակուց բաւելու է վասն, որպէս զի անթափանցիկ մորթ մը կաղմուի վրան և

արգելուի օդին հաղորդակցութիւնը: Այսպէս պատրաստուած վարունգները ձգելու և որ օդէն չընան և իրենց կոթերէն թելավ մը կափելու է զանոնք շատ չոր սենեակի մը մէջ լարուած չւունէ մը: Այսպէս պահուած վարունգները մինչև կաղանդ կը մնան աղցանի համար: Գործածելու պահուն վարունգը ստկուած տաեն սպիտակուցէ մորթն ալ միամին կ'ելլէ:

Էկմանի քանի մը ամիս կընայ պահուիլ փայտի սղցուկի մէջ շարելով, և վրան նոյն նիւթէն ծածկելու:

ՊՈՀԱՆՑՈՅ ԲԱՆՁԱՐԵՂԵՆ

1. Ծնարէ լուտ տեսակ և լոււագոյն բանջարեղներն :
2. Քաղզուած օրն պէտք է պատրաստուին որ համը, զօրութիւնը կտրաւած չըլւոյ:
3. Խնամով ստկել, մաքրել և 2-3 վայր կեան եռացած ջուրի մէջ խոթել և հանել և վաղուն ջուրով լուալ:
4. Ցետայ զետեղէ վրայէ վրայ միշերու մէջ.

- առանց Ճնշելու վրան աղջուր լեցնելու և գոցելու է որ օդ չմտնէ ներս :
5. Լեցուած և լու գոցուած շիշերն ջրով լցուան կաթսայի մը մէջ դիր և եռացուր 4, 1½ ժամ, ասով մանրէներն կը ջնջուին :
6. Կաթսային տակը թանձը լաթ մը դիր որ եռացման պահուն չկոտրին շիշերը :
7. Եռացման միջոցին կաթսային բերանը լւա խցել որ ջերմութիւնը չկորուի :
8. Տաքութիւնը մէկէն ի մէկ մի առը կաթսային, աստիճանաբար տաքցուր, որ շիշերը չպայթին :
9. Երբ եռացումը կատարուած է շիշերը գուրս հանէ և սեղանին վրայ շարէ որ պաղին Զգոյշ օդի հոսանքէ որ չճաժին շիշերը :
10. Պաղելէ ետև որբել շիշերը, չորցնել և մութ տեղ մը պահել, և պէտք եղած տակն դործածել :

—

Փաբարէար մինչեւ գարուն թարմ պահ հելու համար չոր տեղ մը գնելու է, և ատեն տակն ծծումիի թիւթ սիւ տալու է:

—

Յանելի սերմերը թաջուններու կեր ըլւ լովէ պահպանելու համար ցանելէ առաջ քարիւղի մէջ թթվելու է. ոյս բնաւ չը վնասեր սերմերուն :

Կովին տարիքը կ'որոշուի նման ծառի տարիքին, առաջին երեք տարիներն անոնց եղիները չքանակ չունի. չորրորդին կը սկսի չքանակ և ամէն տարի նոր չքանակ կը կազմուի Ուստի 4 չքանակ ունեցող կովն 7 տարեկան է:

ՄԵՂՈՒԱԲՈՅԾՆԵՐՈՒՆ ՏԱՍՆԱԲԱՆԵԱՆ

1. Մեղուն իր տէրը չճանչնար. ուստի շատ զբոյշ եղիր, բուռն և արագ շաբժում մի ըներ, երբ անոնց փեթակին մօտենաս :
2. Պէտք չէ մօտենալ միշտ մեղուներուն երբ քրանած էք ու անուշահոսութիւն կը կուքի :
3. Կենդանիներն, ինչ տեսակ որ ալ ըլլան փեթակէն չեւու պահել օրէնք է :
4. Փոթորկալից եղանակին մի փորձեր մեղուներուն մօտենալ, անհնար է այս առանց վնաս կը լու :

5. Նաև անձրեւի ժամանակ ընոււ մի ջանար
մեղոներուն մօտենալ. կը սուժես
ցաւալի կերպով :
6. Թէ սկզնակ ըլլաս և թէ փորձառու, միշտ
փեթակին մօտեցած ատեն գէմքդ և
մարմնոյդ մերկ մասերն խնամով ծած-
կելն կանոն ըրէ :
7. Պայծառ ու գեղեցիկ օրն ընտրէ մեղք
հաւաքելու համար :
8. Ծուխը չափաւոր կերպով տռուր մեղու-
ներուն վրայ, եթէ ոչ կը նեղութին ու
կը յարձակին վրագ:
9. Երբ մեղոներն միահամուռ սկսին թե-
ւերին թոթուել, պէտք է ծուխը
դադրեցնել և սկսիլ մի միայն այն
ատեն երբ անոնք ցաթկելով սպառ-
նական դիրք կը բռնեն :
10. Չափէն տռելի մեղք մի առնեք, եթէ առ-
նեք իսկ, պէտք է շաքար ջուր լցցնեք
անոնց սնունդ ըլլալու համար :



ԲԱՆՔԻ ՄԱՍՆՈՑ

ՄՏԱԾՄԱՆ ՆԻՒԹԵՐ

ՌԱՄԱՆԻ այն աստիճան ընութենէ կախ-
եալ են որ անսառակ զաւակներու կը նմանին,
որը իրենց հօրմէն վախնակնուն համար մօր
կ'ապաստանին :

Լիւպէմի եկեղեցին վրայ գրուած է.
— « Նա որ, ո՛ւր ո՞ր լլլոյ, չէ կարսղ աղօ-
թել, պէտք չէ ո՛ւ և է եկեղեցի մտնել » :

Գողով սմէն այցելու սոտիկան կը կարծէ :

Գլխու տէր մի մարդ ո՛յն տռեն կը
նուաստանայ, երբ այլոց նմանիլ կ'ուզէ :

Ամուսնութիւն, կըսէ Լուտէր, ընտ-
կան բան մը չէ, այլ աստուածային սզրմու-
թիւն, երկու աղասի, անկախ կենաց են քաղց-
րադոյն վիճակ և մաքուր, եթէ լաւ լլլոյ.

սպյն վիճակ դժոխային կըլլայ, եթէ գէլլլայ

Արարչագործութեան զլուխ գործոցն է,
կըսէ Հէրտէր, երկու անքակտելի, յօժար ձեռ-
ոաց միացում. երկու սիրայօժար միացած
որտեր և կեանքեր: —

Ս.մուսնուրիւնը քաղաքակըլթութեան
ոկիզըն ու վախճանն է:

Նա որ հիւանդին կ'այցելէ ժառանգու-
թեան նպատակաւ, ագռաւէն տարբեր չէ,
որ տկար գառնուկին ոյց կուտայ, լոկ աշ-
քերն փորելու համար:

Նախապատիւ կը համարիմ, կըսէ հին
իմաստասէր մը, առիւծին ճիրաններուն զոհ
ըլլալ, քան թէ եղէ մը կից մը ընդունիլ:

Նախանձ կ'եղծանէ դաշնագիր, կը
լուծէ ընկերութիւններ, կը քակէ ամուսնու-
թիւններ, կը մատնէ բարեկամներ:

Ս.նասոււածը կեղծ քաջութիւն ցոյց
կուտայ նման տղայսց, որ մութին մէջ քալած
ատեն վախերնուն կը սուլեն կամ կ'երգեն:

Որբը երեք տեսակ խաղող կուտայ, նախ,
հաճցից ծառայող, ապա արբեցութեան, և
ի վերջոյ ապաշխարութեան:

Ո՛չ ոք կրնայ լաւագոյն բարիք մը ստա-
նալ, քան բարի մի կին, ոչ ալ վատթարա-
գոյն մի բան, քան չար կին:

Գլուխ լուր թեւեր առած կը սլանայ, բա-
յի լուր յամբաքայլ կը քալէ:

Գլուխ բիւն՝ մտաց գանձն է, ասոր բա-
նովին է համեստութիւն:

Կրօնին է երկիւղ Աստուծոյ, ապացոյցն
է բարի գործ, արմանն է հաւատք:

Կենաց ճշմարիտ վախճանն ու նպա-
տակն է ճանաչել անվախճանելի կեանք:

Չարախօսուրեանց թանգարանը բա-
րեկամին ականջն է, հօն միայն անոնք ապա-
հով կը պահուին:

Կենաց հանացաց համար անսարք եր եղողն,

կըսէ Ֆրետէրիք, իրեն նմաններուն համար
ալ անսիրտ մէկը պիտի ըլլոյ:

Նեւառն կ'ըսէ, բարի և աղնիւ մորդուն
պարաքն ոչ թէ միայն սէր առ ընկեր է, այլ
նուե գութ առ անբան արարած:

Ս.նասնոց գէմ՝ անգթութիւն, կ'ըսէ
Հումզովթ, նուաստ և անշահ ժողովրդեան
մը յատկանիշն է:

Ավելապախ կ'ըսէ, ժողովրդի և մոր
գու մը սրտի վիճակի ստոյգ նշանն է դիտել
թէ անասնոց վրայ ի՞նչ աչօք կը նայի, և ար
նոնց հետ ի՞նչպէս կը վարուի:


Խոնարհեար, հեղեր, գթածներ, ար-
դարներ, բարեպաշտներ, աստուածապաշտ-
ներ, ամեն ուր որ ըլլան մի և նոյն կրօնի կը
ծառայեն, և եթէ մաս վար առնէ դիմակ,
յայնժամ կը ճանչնան զիբար, թէ և հոս
կրած զանազան ձեւեր զանոնք միմեանց օ-
տար ցոյց կուտային:

Երօնի մէջ մոլեռանդութիւն նշան է

անկրօն կրօնստիրութեան, լաւագոյն է բնաւ
չկրաքերիւ եկեղեցիի մը, քան ո՛ւ և է եկե-
ղեցիի դէմ դառն գանուիլ:

Կատարեալ յաջողութիւն անհնար է
գտնել գերեզմանէն ասդին, եթէ, սակայն,
խոնարհաբար հետեւինք Յիսուսի օրինակին,
նու խոստացած է բնաւ չթողուլ և չլքանել
զեղ:

Լաւ է թշնամի սւնենալ եթէ ասով
կրնանք մեր թերութիւններ ճանաչել:



ՄԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ

Մարդկանց կենաց միջին տեւողու-
թիւնը 400 տարի առաջ 30, այժմ, գոնե ա-
ռողջապահիկ օրինաց հետեւող երկիրներու
մէջ, 40 է:

Երկու սիրտ ունեցող զինուար մը գըտ-
նուեցաւ Ամերիկայի Քոլոմպիա քաղաքին մէջ:

Ք. ճառագայթին միջոցով զննեց բժիշկը և
դաստի որ միայն մին կը գործեր:

Թուրան մ'է էն թանկագին գիրքը, որ
ձեռադիր վիճակի մէջ խթահանի մէջ պահ-
ուած է. կափարիչները զուտ ոսկի են և
անգին գոհարներով ու մարդարիտներով
զարդարուն, և, ամենանուրը մագալամթի
վրայ գրուած, 40,000 ոսկի կարգէ:

Ամենաքանիշագին շիրիմը Մուհամ-
մէտինն է, ասոր համար գործածուած աղա-
մանդներն ու գոհարներն երկու միլիոն ոսկի
կ'արգէն:

Թեալիոյ թագուհին աշխարհիստմենա-
թանկագին թաշկինակն ունի որ 4000 ոսկի
կարգէ:

Գաղլիա ալ նման Պէլճիդայի և խտա-
լիոյ սկսած է ժամերը 4ին մինչև 24 չումիել.
ուստի ժամը մէկուկէսին պիտի լսեն ատան
երեքուկէսին, ժամը 4 լսելու տեղ պիտի
լսէ ժամը 46ին եւն. ժամը 24ին, 23ին եւն:

Սիպերիոյ երկաթուղիին միջոցով
ոյժմ միայն 44 օրէն ձարսն կրնանք երթալ:

Զուիցերիոյ մէջ 4000ին 40 տմուսնա-
լուծումկը կատարուի, Գաղղիա 4000ին 24,
Դերմանիա 47:

Ֆիլատելիֆիոյ աշտարակին սանդուիլը
598 աստիճան ունի, ուստի աշխարհիս էն
երկայն սանդուին է:

Օռենստանի մէջ օրէնք է որ ամեւս-
նացող այրը 44է և կինը 12է վար չըլլայ:

ԱՐԱԳՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

1. ուղակ	ժամը	2.65	մղոն
Հետեւակ	»	9.44	»
Թիավար	»	42.77	»
Վաղող	»	44.20	»
Զշկող	»	27.49	»
Զի (քալող)	»	30.37	»
Շոգենաւ	»	30.53	»
Զի (վաղող)	»	32.43	»
Նաւակ ինքնաշարժ	»	37.93	»
Սաւանակ	»	49.99	»
Հեծանիւ	»	63.00	»
Հեծանիւ ինքնաշարժ	»	84.50	»

Աղաւնի	Ժամանէ	85.60	Մղբն
Շողեկառք	»	120.00	»
Ելեքտրական կառք	»	128.76	»
Ուժօմնպիլ	»	131.76	»

ЛиГенГ дадр 12 4кн он края штук

Գաղաքան	Կըլլոյ	12.10
Ա. Մալթէրտամ	»	12.20
Պէրլին	»	12.53
Հռոմ	»	12.55
Վիկինիա	»	4.05
Սթոքհոլմ	»	4.42
Աթենք	»	4.35
Պոլիս	»	4.55
Օտէսա	»	2.03
Մուկուս	»	2.30
Պամպէյ	»	4.50
Նիւ Եորք	»	7.04
Փէրին	»	7.45
Սանֆրանչիսկօ	»	8.40
Եօքօէշտմանս	»	9.20
Մէլպուրն	»	9.40
Օբէնստ	»	11.40
Հօնոլուլու (կէս գիշերէ եակ)		13.00

Սարիւնը կազմող՝ գնամիկներուն քառական անհերեւակայիկի է։ Մարդկային արեան մէկ կանգուն խորանարդը 5,000,000ի չափ գնամիկներ կը պարունակէ։

Եթէ այս դնամիկները իրարուն քայլ շարենք՝ 35 քիլոմէթր երկարութիւն մը կ'ունենայ . . . :

Միջին հաշուով 60 քաշ ծանրութիւն ունեցող մարդ մը 5-6 քաշ արիւն կ'ունենայ։ Եթէ բայցը արիւնագնամիկները իրարութարենք 475,000 քիլոմէթր երկարութիւն, այսինքն երկրագունդս գրեթէ 5 անգամ շըրջապատել կարենալու չափ երկար շրմք մը կ'ըլլայ։

Միերոպիներէ ոմանք կլօր, ոմանք շըրժայտաձև, և ոմանք ալ գաւաղանաձև են։ շըմայաձեւք՝ միքրօքակոս, իսկ գաւաղանաձեւք պաքթէրիս (գաւաղան) բառէն ածանցեալ՝ պասիլ անուամբ կը կոչուին, ոմանք կամովին կը շարժին ոմանք ալ տնշարժ են։

Արտավար մը վարդառանեն 30 օրուան մէջ իբր 900 քաշ վարդ կ'ելլէ, գոր-

ծաւոր մը օղը 10-15 քաշ կրնայ հաւաքել։ 3-5 տարեկան վարդենի մը 400 տրամ վարդ կուտայ։ Քաշ մը վարդը թորելով 2 քաշ վարդեջուր կ'առնուի։ 400 քաշ վարդէն 7 մլսգալ վարդիւղ կ'ելլէ։ » » 50 քաշ վարդեջուր կ'ելլէ։ Մէկ մլսգալ վարդիւղը 25 դահնեկան կ'արժէ։ Քաշ վարդեջուրը 2 » » Քըզանլիքի 4 քաշ վարդիւղը 7460 դհկ. » իսկ Անամթոյինը՝ 6260 դահնեկան Ուքան արժեքաւոր է և յարդի։

Հին Կտակարանը հաւաքուեցաւ և Յունարէնի թարգմանուեցաւ ն. Բ. 285 թուականին և այս է որ կը կոչուի Եօթանանից Թարգմանութիւն։

Ամբողջ Ս. Գիբրը առաջին անգամ հաւաքուեցաւ և թարգմանուեցաւ լստիներէնի Ա. Ճերօմի ձեռքով Յ. Տ. 384ին և կոչուեցաւ Վաւկաթ, աշխարհաբար Ս Գիբր։ Հին Կտակարանը ամբողջ գրաւած է Երրոյիցիքին, իսկ Նոր Կտակարանը ամբողջ Յունարէնից բացուալ բացի Մատթէոսիւետարանէն, որ Ելրայեցերէն գրուեցաւ։ Հին Կտակարանը Ժ. Գ. գարուն սկիզբը Կտակարան Հիւկո

գլուխներու բաժնեց և 166 ին Աթիսս Հրեման
Հիւկոյի գլուխները համարներու վերածեց:
Մէկ գար առաջ, 156 ին, Գաղղիացի տպագր-
րիչ մը նոր կտակարանը արդէն գլուխներու
և համարներու բաժնած էր: Հին կտակա-
րանի հնագոյն օրինակը որ գրուած է Ն. Ք.
զբ. 263ին, այժմ կը գտնուի նազլուսի մէջ:
Ատմարիս:

Կօթինկէնի համալսարանի գրասան մէջ
Ս. Գիրք մը կոյ որ 5476 արմատենոյ տերե-
ներու վրայ գրուած է: Կան գեռ հարիւրա-
ւոր լեզուներ որ կը խօսուի առաւելքան 200
միլիոն ժողովրդէ, որոնց լեզուին Ս. Գրոց մի
համարն իսկ թարգմանուած չէ: Գեռ մէկ
գար առաջ միայն 38 լեզուներ ունէին ա-
ռանձնաշնորհը գոնէ անոր մէկ մասը ունենա-
լու: Ժի՞ գարուն մէջ այս թիւը հասաւ
400ի, բայց ասոնց նուազքան 100ն ունին
ամենովը: Եթէ երկիրս 1½ երկիրին ժողո-
վուրդ ունի, և բոլոր տպուած կտարներն այ-
սօր գեռ ողջ են, հինգ հոգւոյ մէկ կտոր բա-
ժին պիտի ենար: Նկատելի է թէ բոլոր Ս.
Գրոց հաստոքներու $\frac{19}{20}$ ը Բոլորական տպագ-
րութեամբ լցո տեսած են: Ուստի Աստուծոյ
Խօսքը իր զաւակաց իւրաքանչիւրին ձեռքը

հատ մը գնելու մեծ և զդալի գործը հաղիւ-
գեռ սկսած է: Բայց կը հաւատանք որ այդ
պատուական Օրը շատ հեռու չէ: Քանիներորդ
գարու Արեւը մարը չպիտի մանէ: մինչեւ այս
մէր հին աշխարհը այդ շարպհաց ևս հասնի....
և փառս ամենասկայ Արարչին և ի պարծանա
Քրիստոնեաթեան ի սփիւռս աշխարհին

Առին հաւատանը՝ միշտ ջերմ աղօթող
Յովսէի Հայկազն



ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Գիւլղացի մը գեղագործին կը հարցնէ
թէ, մաղ բուսցնող գեղ մը ունի՞: Ամենա-
պատուականը ունիմ, կ'ըսէ գեղագործը, որ
24 ժամէն արդէն մաղ կը բուսցնէ: Շատ
լաւ, կ'ըսէ գիւղացին գեղագործին, որ կնդակ
էր գլուխը, նախ գուք փորձեցէք այս գեղը
և 8 օրէն կուգամ, երբ արդիւնքը տեսնեմ
պյտ գեղէն կը գնեմ:

Ազեհարցներու ժաղափի մը մէջ ոյրի
կին մը իր հանդուցեալ ամսւսինին հսդին բե-
րել կուտայ:

Դո՞ւն ես իրաւ Յակոբ.

Այս, ես եմ.

Երջանի՞կ ես.

Այս, շատ.

Աւելի՞ երջանիկ ես հիմա, քան երբ ի
միսախն կ'ապրէինք.

— Շատ, շատ աւելի երջանիկ եմ.

Եհ, ըսէ նայիմ ո՞ւր ես.

— Դժոխքին մէջ:

Հարց. Ինչո՞ւ համար Աստված ամե-
նէն վերջը ստեղծեց մարդը:

Պատ. Որպէս զի իր գործին խառնուող
չդանուի, և ժամ' առաջ գործը լմնայ:

Թժիւլ մը առաւօտուն ոյցելաթեան
գնաց հիւանդ կնոջ մը, որոյ ազջիկն ալ հի-
ւանդ պաւկած էր նոյն սենեակին մէջ:

Ի՞նչպէս ահցուցիք գիշերը տիկին, հար-
ցուց ըժիշկը:

Իոլոր գիշերը աչքս չդոցեցի, ըստու կինը
դառնութեամբ:

Իսկ դո՞ւք, աղջիկս, դո՞ւք ինչպէս էիք
գիշերը, հարցուց ըժիշկը աղջկան:

Բնաւ հանդիսա չկըցի քնանալ, քանզի
մայրիկը շարունակ կը խոկար, պատասխա-
նեց աղջիկը:

Ա.Ա.Է.Ը չարիք, ըստու ոյր մարդ մը կինե-
րէն ծագում կ'առնէն. ոյս է փիլիսոփանե-
րուն կարծիքը:

Շատ շիամակ է պատասխանեց կին մը,
մինչեւ իսկ ոյր մարդիկ կիներէն ծագում են
առած, այնպէս չէ:

Զուիցերիոյ Որիկի լերան գործաթը
կ'ելլէ երկայնահասակ զրօսաշրջիկ մը է շով,
և սոքերը, վար կախած, գետինը քսելով կը
յառաջանայ: Այժմարած առաջ մը զայն աես-
նելով ինդուլ կը սկսի: Խե՛նդ տղայ, ի՞նչ կը
ևսդաս, էշ տեսած չէ՞ս, կ'ըսէ զրօսաշրջիկը:
Շամ'տ, խի՛ստ շատ, կը պատասխանէ տղան
ինդալէ պացըթելով, միայն թէ առաջին ան-
գամ էր որ երկու էշ իրարու վրայ հեծած
կը տեսնեմ:

Ա.Ծխարիիս մէջ գեղեցկագոյն բանը
ի՞նչ է. —

Շուշտական լրագիր մը այս հարցումն
ուղղած է իր ընթերցողներուն, խռուտանալով
որ կարելի եղածին չափ քիչ բառով այդ
հարցման յաջողագիւ պատասխանողին մըր-
ցանակ պիտի որոշուի քննիչ յանձնաժողովի
մը կողմէ: 4025 պատասխանողներէն առաջին
մրցանակը շահեցաւ երիտասարդ մը, որ գրած
էր «Մօր աչքերը», Բ. մրցանակը շահեցաւ
այն՝ որ գրած էր «Երազն այն սիրուհին որ
հեռուն կը գտնուի»: Գ. մրցանակ տրուեցաւ
անոր՝ որ գրած էր «Այն մարդկը՝ որ մերկ
որունքներով՝ խոխողուն գետէ մը կ'անցնի,
զբաննը գրկած»:

Խնչ ճշմարիտ խօսք կրնայ ըսել այն
մարդը, որ չէ թէ միայն սիրալ, այլ գլուխն
ալ կեղծիքով լցուած է, ըստ թագաւոր
մը շատախօս ծեր գեսպանի մը, որ որ մը՝
զարդարուած, և մազերը ներկած, թագաւ-
որին ներկայացաւ ու կը շատախօսէր:

Ցղան, հայրիկ, կափերանմօն ի՞նչ է:
Հայրը, Աշխարհի ընդհանրական լեզուն
Տղան, Ո՞ւ կը խօսի այդ լեզուն.
Հայրը, Ոչ ոք:

Խորամանկ երիտասարդ մը մտավաճա-
ռին խանութին առջին կը կանգնի. դուրս
կախուած են տեսակ տպրանքներ.
Նուե խոզի ապուխտ Ապակիէ գուռնէն կը
տեսնէ որ մարդ չկայ ներու. խոշոր ապուխտ
մը կ'առնէ տեղէն, խոնութին դուռը կը բա-
նայ և ներս կը մտնէ. գրան վրայի զանդակին
ձայնէն կինը գուրս կուգայ սենեակէն. մեր
պարոնը կ'լսէ, խոնդեմ այս ապուխտը կը լ-
ռէիք: Կինը կը կշռէ: Ի՞նչ պիտի վճարեմ կը
հարցնէ երիտասարդը Ոչինչ, կ'լսէ կինը:
ինչ կ'ըլլայ եղեր որ ձեր ապուխտը կշռեր եմ
նատ շնորհակալ եմ կ'լսէ երիտասարդ ա-
պակը և ապուխտը առած տուն կ'երթոյ
ցնծալով ի սրտէ իր կատարած մեծ քաջու-
թ ետան համար:

Շատ մը առակներ գիտեմ որ ամէն մար-
դու կը յարմարի:

Ե, ըսէ նայիմ ինձի յարմարող տուած մը:
Երբ Ալուտած մարդու մը պաշտօն յանձ-
նէ, անոր խելք ալ կուտայ:

Բայց ես ընաւ պաշտօն չունիմ.
Անկէ անդին ալ կուն խորհէ:

Անասեմիո մէջ 40 փարտ շահա՞ծ ես,
ըստ հայրը բարկութ եամբ իր շռայլ որդիին:
— Անշուշտ, ըստ տղան Բաէ նայիմ ե՞րբ,
հարցուց հայրը Անցեալ շարաթ, քեզի նառ
մոկ մը չգրեցի՞ վրան 40 փարտյի փուլ չփակ-
ցուցած, դուն ալ ստիպուեցար 40 փարտ
վճարել:

Ածծի մի մարդ նշանաւոր նկարիչ մը
առաջարկեց իր տան սանդուխին գլուխը նկար
մը շինել, որ Խորայէլի Կարմիր Ծովէն անց-
նիլ և Փարաւառի բանակին հոն բնացինջ ըլ-
լալլ ներկայացնէ: Ի՞նչ որ ալ ըստ նկարիչը
կծծին միայն չնչին գումար մը վճարել կա-
մեցաւ: Նկարիչն ալ կտաւը կարմիր ներկեց
և բերաւ կծծիին: — Ի՞նչ է այս ըստ կծծին,
ո՞ւր են Խորայէլացիք: — Անոնք ծովէն ան-
ցած և արդէն չեւուն են գացած: — Բայց
Եղիպատացիք ուր են, հարցուց մեր կծծին
զայրցիթալ: — Հա՛, անոնք ալ անշուշտ ծո-
վուն յատակն են գացած, պատասխանեց
նկարիչը պաղարեամբ և հանդարտութ եամբ:

ԽՈՇՈՐ ԿԻՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԶԵ

Ուաշինկօթլնի մէջ Տիկին Մարի Թըլ:
պըլ, որ Միացեալ Կահանդաց ամենէն խո-
չը կինն է, վանզի 489 քիլօ կը կշուէ, գլժ-
բախտութիւնը ունեցեր է կորանցնելու իր ա-
մուսինը: Պ. Թըլնպըլ, որ Տիկին Մարիի ու-
թերրորդ ամուսինն էր, չմշկելու հաստատու-
թեան մը մէջ կը չմշկէր և յանկարծ հաւա-
սարակշուռութիւնը կորանցուց: Ճիշտ իր եամին
կը չմշկէր կինը, որ ժամանակ չունեցաւ մէկ
կողմ՝ քաշուելու և իր 489 քիլօ ծանրու-
թեամբը ինկաւ էրկանը վրայ: Խեղճ Պ. Թըլը
կըլ քիչ ետքը մեռաւ այդ ահարկու ընդ-
հարումին հետևանոք: Կ'ըստի թէ Տիկին
Մարիի ութ ամուսիններն ալ ձախող արկած-
ներու զահ գացած են: Եօթներորդը մանա-
ւանդ ատօրինակ արկածի մը հետեանքով
մէռաւ: Գոցուող բացուող անկողին մը,
որուն զապանակը կոտրած էր, կնոջը ծանրու-
թենէն յանկարծ փակուելով, խեղճ մարդը
ծանրապէս վիրաւորուեցաւ և քիչ մը ետքը
մէռաւ:

ԽԳ. ՃԵԿ. ԶՈՐՈՒԹԵՒՆԸ

4. ԱՐՔԱՏ ՄԻ ԸՆՏԱՆԻՔ

Աօնտոնի հին ձեղապարկին մէջ ի միա՛
սին կապրէին հիւանդոս այլին Ուեպ և ի
երկու աղջիկներն, Մարփ և Մարկօթ։ Ասե՛
նագործութեամբ այն երկու քայրերն ա՛յն
քան միայն կը շահէին, որ հազիւ թէ իրենց
և իրենց մօրը օրագահէկը կը ճարէին։ Մար՛
կօթ օրն ի բուն ճէրմանկեղէնի վաճառասա՞ր
մը մէջ կաշխատէր, և Մարփ իրեն ձեռագո՞ր
ծի նիւթերն այն վաճառատունէն կառանա՞ր
և տանը մէջ աշխատելով կրնար իր հիւանդ
մօրն հոգ ու խնամ տանիլ։

Երկու քոյրերը լնութեամբ լուղորսի
տարբեր էին. Մարի հեղ, հանդարասարարոյ
գոհունակ և համեստ, իսկ Մարկօթ անձնա

սէր, հաճոյատէր և պճնասէր էր, նաև միշտ
կը կռուէր իր քրոջ հետ, իր մօրը հետ ալ
դէշ կը վարուէր: Մարկօթ զուարճութեանց
ալ հետամուտ ըլլալով, պարասրածին մէջ
մրանսէշլ թըրնըր անունով երիտասարդի մը
հետ ծանօթացաւ: Սա արհետով առագաս-
տագործ էր և աղքատ ընտանիքի մը կը վե-
րաբերէր: Մարկօթ այս երիտասարդը իր
առնը կը բերէր և ոչ մայրը և ոչ քսորը
կինային արդիւել: Իր յաճախակի այցելու-
թիւններէն ետև երիտասարդը համեստ, հան-
դարտաբարոյ Մարիին աւելի հաւնեցաւ քան
ազմկայոյզ Մարկօթին: Այս թէե իրեն ան-
հաւատալի կը թուէր, սակայն շուտ պիտի
սկանէր թէ թըրնըրի սիրար իրմէ պատաճ էր:

Խումբ մը գաղթականներ դեկտեմբերի
մէջ «Անտոն» նաւով Աւստրալիա պիտի
առարկելին և Թըրնըր անոնց միացաւ։ Նա
խնդրեց որ Մարի իր Տես երթայ. առ վա-
րունեցաւ համամիտ գտնուիլ իրեն, բայց
մոյրը համոզեց զնա, և Մարկօթ բռուռն նա-
խնձով և զայրոյթով ստիպեց եր քայրը որ
կաղթէ. պիտի տեսնենք նպատակը

ՔԳաղթականներուն մէջ շատերը իրենց
բախտը շինեցին, մասնաւանդ կիներն հոն ա-
ւելի յոյս ունին յաջողութեան քան հայրեն-
եաց մէջ։ Այսուես կլուկին մայր և աղջիկ։ Ի-
վերջը Մարի օրոշեց Թըլընըրի հետ Աւստրա-
լիա երթաւալ։ Երկու քայլերն հոգ ատրին որ
մայրերնին հիւանդանոց փոխադրաւի, քանի
Մարկօթ չէր ուզէր զնա գալմաննել։ Մարի
և Թըլընըր թողուցին Լօնսան և Կրինիչ հա-
սան Մարկօթ անոնց հետ գնաց մինչև հոն
Թըլընըր անկէց գրեց իր աղքականներուն թէ
Աւստրալիա կանցնի հոն իր յաջողութիւն
փնտուելու համար։ յորդորեց որ անհոգ ըլ-
լոն, զի նաւել այնքան լու և որ փոթորկալից
ձմրան եղանակին խակ անվասանդ կ'անցնի Ով-
կիանոսին վրայէն։ նաւուն մեկնած ատենը
յայտնելով աւարտեց Թըլընըր իր նամակը։

2. ԳԱՂԹԱԿԱՆԱՅ ՆԱԽՈՒՆ ՎՐԱՅ ՔԱՐՈԶ ՄԸ

Նաւն քանի մը որ պարտաւորեցաւ յէ
տառձգել իր մեկնումը, երկու քայլերը պէտ
եղածներն հոգացին։ Թըլընըր ուրիշ գաղթա-

կաններու հետ պանդոկ գնաց, ուր քարոզիչ
մը հրաւիրեալ էր անոնց իրենց բոլոր կենաց
համար վերջին յորդորներ ու խրամներ տալ,
քանդի Անդզիս եկեղեցականք կը ջանան հո-
գեւոր զգացումներ դնել գաղթող սող ստորնա-
կարգ ճամբարդներու սրտին մէջ, և ամէն ա-
ռիթ կը գործածեն կրօնի հրահանդ և սկըզ-
բուռնքներ դնել անոնց մտաց մէջ։ Ուստի
հանրային տեղեր կ'այցելեն կամ իրենց աշ-
խարհական օգնականները կը խրկին տեսրեր
սաժնելու, եկեղեցի հրաւիրելու և անքարո-
յականաւթեան և անպարկեշտութեան ձեռ-
քէն զանոնք ազատելու։

«Լօնտոն» նաւով գաղթողներն Պատ.
Միլէր իւր շուրջ հաւաքել կուզէր, անոնց
կենաց հացն տալու, թէ նաւուն և թէ նոր
աշխարհին մէջ անով անանելու համար։
Պատուելին նկարագրեց անոնց սպառնացող
վասնգներն որ անոնք ծովային ճամբարդու-
թեան մէջ կրնային ունենալ։ մատնանիշ
ըրտաւ փորձութիւններն որ նաւուն հանդիպած
ուեղերն իրենց գէմ պիտի ելլէին։ ի վերջը
բալոր գժուարութիւնները, որոնց պիտի հան-
դիպէին երբ իրենց նոր հայրենիքը հասնէին,
շոյց տալով լսաւ թէ հազիւ մէկը իր ներկայ

վիճակն պիտի ունենայ հոն որմէ ձանձբացած
է հոս, ուստի խրատեց որ եթէ կան անանկ-
ներ որ այս կարեւոր խնդիրը լաւ չեն ուսում-
նասիրած, վերջին վայրկեանին հայրենիքին
չգեն թիեն Աստուած ամէն տեղ, նաև ծո-
վուն վրայ է, սակայն երբ համնի փոթորիկ և
նո զայն չչունդարտեցնէ, կրնայ իր ունկն-
դիրներուն ալ պատահիլ ահռելի նաւարե-
կութիւն մը, ինչպէս բազմաց պատահած է:
Պատուելին մի առ մի թուեց քանի մը նաւա-
րեկեսւ նաւեր, նկարազրեց ծովամյններուն
սարսափիլի կացութիւնը, ինչպէս մի քանի
ազատեալներ յետոց պատմած և տեղեկագ-
րած են: Ունկնդիրներէն ոմանց վրայ պաշ-
քրտինք մը եկաւ, երբ լսեցին քարողիչին այս
խօսքերը, և սկսոն միտքերնին փոխել: «Բարո-
գիչը իր ուղերձը աւարտեց ըստեղիլ. «Զենէ ո-
մանք հոս կը ձգեն մայր կամ հայր քայլ կամ
սիրելիներ, կին և զաւակներ, որբ մինչ նաւը
ծովանց վրայ կը աւարտ բերուի, մոռահոգու-
թեամբ պիտի տառապին. ի՞նչ պիտի ըլլայ
անոնց զգացումը, երբ լսեր ստանան որ Տ. Յ.
տոնն նաւը հոս կամ հոն ընկզմեր կամ ժամ/
ռերու զարնուելով խորտակուեր է, կամ հիմ-
կիզուեր է Ովկիանոսին մէջ. ի՞նչ անհու

վիշտ: Խոկ դուք, եթէ ապահովապէս հասնիք
ձեր որոշման տեղին, կը յորդորեմ որ չհպար-
տանաք, ձեր Տէր Աստուածը մի՛ մունաք:»
Սյու յորդորակը ոմանց վրայ ապաւորութիւն
ըրաւ, իսկ այլոց վրայ բնաւ չ'աղդեց, շա-
տերն ալ Պատ. Միլլերի խօսքերն խնդարով
մերժեցին:

Նաւը համբայ ելլելէն օր մը առաջ Թըր-
նըրի հայրը որդիին հրածեշտ տալու եկաւ,
սակայն զանի նաւուն վրայ չդասաւ. Հարցուց
եւ ոմանք ըսին թէ իր որդիին օր մ՛առաջ շատ
անհանգիստ ըլլալով և տեսակ մը մոսցին
խանդարում ունենալով, իր գոյքերն առած
հեռացած էր և անկէ ի վեր ոյլ ևս չեր
տեսնուած:

Խեղձ հայրը ստիպուեցաւ տուն դառ-
նալ և Աստուածայ յանձնել որդիին, սպասե-
լով տեղեկութեան. կը վախնար որ, եթէ
մարդոց ըստածը իրաւ էր, իր որդին խելտգա-
րութեան պահուն ծովը նետուած ըլլայ:

Յաջորդ օր «Լոնտոն» վերցուց իր խո-
րիսիը և հարիւրաւոր գաղթ ականներով
համբայ ելաւ:

3. ԿՆՈՉ ԴԻԱԼԻ ՄԲ

«Անտոն» շագեհաւուն մեկնելէն քիչ մը
յետոյ երեկոյին թայցմղ գետին մէջ իրը 20
ամեայ աղջկան մը դիակն տեսնուեցաւ. դիա-
կը ցամաք քաշեցին և դրին քարի սանդուխի
մը վրայ և վաղեցին մօտիկայ սոտիկանական
կոյցանին ծանուցանել: Երկու սոտիկաններ
հեռուէն կը դիակն նաւասարիներն, երբ ա-
նոնք դիակն գետէն կը հանէին և վաղելով
հոն եկան դիակը քննելու: Անոնց կարծիքով
հաղիւ 6 ժամէ ի վեր դիակը ջուրին մէջ ե-
ղած կրնար ըլլալ, քանզի մորթը դեռ սպի-
տակ էր, թարմ և անվասա, աղջկան ճոխ մա-
զերն քակուած կը ծածկէին վիզն ու կուրծ-
քը, որ բացուած էր, բայց գուցէ նաւասարի-
ներն էին ըրած, տեսնելու համար թէ արդ-
եօք գժբազգը ո՛ և է վէրք սւնի՞: Խրենց լսո-
տէրներուն լուսովը սոտիկանք ո՛ և է վէրք մը
գտան: Այս հսկայ քաղաքին մէջ նման դէպ-
քեր շատ պատահած էին, ուստի չէին կրնար
սասցդ դիանալ թէ այս զայը արդեօք բռնի՞
ջուրն էր ձգուած թէ ինքզինքն ծովը էր
նետած:

Ոստիկանք բոլորավին անտորբեր էին այս
մասին: Տասն վայրկեանէն սոտիկաններն ալ
մեկնեցան որ դիազննութեան պատրաստու-
թիւն ընեն և դիտկն պաղ քարին վրայ մնաց:
Անզիս մէջ դիազննութիւնը կը կատարուի
պաշտօնէի մը ձեռամբ, որպէս կընկերանան 42
երդուեալք: Հետեւեալ օրն այս խումբը
դիակին քովին ժողովեցան. նախ նաւազները
քննուեցան, որ դիակն ջուրէն հանած էին,
յետոյ սոտիկանապեսն պատմեց իր հաւա-
քած ծանօթութիւններն մեռելին նկատ-
մամբ, Սա սպրի տիկին Ուէպի աղջիկն էր, ո-
րոյ վրայ պատմութեանն սկիզբը խօսեցանք:
սակայն յայտնի չէր թէ Մարին էր թէ
Մարկօթը Աղջիկը մօտէն ճանչցողներուն
վկայութեան նայելով, աղջկան հասակը և
դիմագիծը Մարին ըլլալ կը հասաւատէին,
սակայն ուրիշներ կը պնդէին թէ երկու քոյ-
րերն միմեանց այնքան նման էին, որ դիա-
կին վրայ չէին կրնար սոտուգել անոնց ո՛րն
ըլլալը. Երկու աղջկանց մոյրը չիւանեղանցին
մէջ հոգեւարը էր, ուստի չէր հնար զնա
դիակին մօտ բերել. ասկէ զատ հոգեւարը
կնոջ իւր աղջկան մահուան ըլւրն հաղոր-
դելն անդութ գործ էր, երդուեալք ալ այս

կարծիքը ունեին, ստկոյն ստոյգ գիտցած ըլւ լուլով որ Մարի և Լոհատն շղինաւով Աւոր տրալիս գացած էր, ուստի երդուեալք վեճ ռեցին որ Մարիօթ է խեղդուած աղջիկը. յայտնի չեր ստկոյն թէ դիպուածով, կամ ազստ կամօք և կամ բանի կատարուած էր ոյս մահը Այսպէս քննութիւնը աւարտելով, աղջկան մարմինը թաղման յանձնուեցւ:

նաւուն կոյմերն բուռն փոթորիկի մէջ, նաև ետեւի մակոյկը, 40ին առաւատեան ժամը 3ին նաւը ետ դարձաւ և Բլիմութ պիտի վերադաւանար, նոյն պահուն ահագին այլիք մը նաւին ղեկն խորտակեց և ուրիշ նաւակ մը ծովը քշեց Աւս օրին ահագին այլիքներու մէջ կը տատանէնիք, որոնք մեքենային սենեակին դաներն խորտակելով ներս խուժեցին և կրակը մարեցին. Իին փոթորիկն սաստկացաւ. ոչ և ձափ այլիքներ կը ծեծէին նաւը Բոլոր առաւու, տմէն աշխատելու կարող եղողներն մեքենաներուն գտնուած մասին մէջ գոյացած ծակը գոյելով զբաղեցան, ստկոյն անհնար էր. ին նաւն սկսաւ ընկզմիւ 2ին 49 հոդի թողուցինք նաւը և 5 վոյրկեան յետոյ տեսանք անոր ընկզմիլ 270 մարդով: Նաւին ջրհաններն մինչև վերջին վայրկեան կը գործէին:

Այս ահուելի լուրին աղդեցութիւնը իմաստ սոսկալի եղաւ, թէ Անդզիոյ, թէ Եւրոպայի և թէ Աւատրալիոյ մէջ, շատերն սուզի մատնուեցան. խիստ քննութիւն մը բացուեցաւ քննելու թէ նաւուն տէրերն ու և յանցանք ունին այս ահուելի արկածին համար: Քննութիւնը հաստատեց որ նաւը ձմբան փոթորիկ ասեն առանց առագաս-

4. 1,0ՆՏՈՒՆ ՆԱԽՈՒՆ ԲՆԿԱԳ.ՄԵԼ.Բ.

Յունուարի մէջ ահուելի լուրին Անգլիա հասաւ թէ Պիստոյեան ծոցին մէջ և Լոհատն շղինաւն 270 մարդոցմով բնկղմեր է. միայն 49 մարդ են ազատեր, {6 նաւաղ և 3 քամբորդ, որք 20 ժամ մակոյկին մէջ այլիքներէն հոս հոն տարուբերուելէ յետոյ, իսաւականն «Մարիանօրը» առագտաստանաւէն ազատուած և Ֆալմարթ ցամաքն հանուեր են: Առաջին հետաքիրն եկաւ Բլիմութէն: մեքենալար ձօն խրկած էր սա բառերով. «Յունուար 6ին մեկնեցանք Բլիմութէ, 7ին փոթորիկ և անձքեւ, 8ին նոյնագես, 9ին կորուսինք

տի մեկնած էր, հակառակ լնդունուած սովորութեան։ Այլք հաստատեցին թէ Մարթէն նաւապեաը, որ կը վարէր նաւը, բնաւ ոյսպիսի առագաստ չէր գործածէր։ Վէճն կը շարունակուէր, մենք սակայն թողունք զայն և անցնիք մեր պատմութեան, և ներկայացնենք դէպի մը որ տեղի ունեցաւ շոգենաւին ընկղմելուն։

5. ԹՈՒԵՍԱԼԻՌԻՄ

Նաւուն ընկղմիլն լսուելէն իօ օր առաջ Փագ Պետի ներկայացաւ աղջիկ մը ու սենեակ մը վարձեց. սա իր ապրուստը կար կարելով կը ճարէր և առանձնացած, հանդարակեանք կանցնիք կանցնիք։ Սակայն շոգենաւին ընկղմելուն լսուն ստանալուն պէս խելագարութեան մատեցող անհանդասութիւն մը, վրդովում մը տեսնաւեցաւ իր վրայ. կուլար, մազերն կը փետտէր և կը գոչէր. ես եմ իր սպաննիչը, ես կրնայի աղատել զնա, այլ ես չեմ կարով ապրիլ։

Առանց տնոր յուստհատական աղաղակներուն և անձը դատապարտելուն պատճառն

գիտնալու, մատ Պետիս կը չանար հանդարատեցնել զնա. և յաջողեցաւ ալ. աղջիկը յանկարծ հանդարատեցաւ, սակայն իր իսելագարական խոռոշութեան սկսելուն երկրորդ օրն նա այլ ևս չերեցաւ և իր սենեակ գոյսւած էր։ Վարձկալը ասկէ կասկածանաց մատնուելով վեր ելաւ և կանչեց աղջիկը. բայց ձայն տուող չկար, ուստի սատիկանութեան լուր տուաւ, ոստիկանը աղջկան դուռն բանալ տուաւ, երբ ներս մտան աղջիկը մեռած գետինը ինկած գտան, սեղմնին վրայ սրուակ մը կար, որոյ վրայ գրած էր «Թոյն» Սրուակին մէջ այս թոյնէն քիչ մը կար. սեղանին վրայ ալ կապար գրչով գրուած թուղթ մը կար. «Ես անձնասպան եղայ. Փանդի քրոջս մահուան ես եմ պատճառ. զի ես համոզեցի զնա «Լօնտոն» շոգենաւով Աւստրալիա երթալ. և խիդն զիս անհանդիս կընէ. Մարկօթ Ռւէպ»։

Բժիշկն դալով ստուգեց թէ թունառումը քանի մը ժամէ ի վեր կատարուած է, և մեծ քանակութեամբ առնուած ըլլալով թոյնէն, այնքան շուտ մեռած է։

Երդուեալք հաեւ ժողուեցան ու ամէն բան քննելէ ետև վճռեցին թէ Մարկօթ.

Ուեպ մտաց խանդարման առթիւ ինքզինք
թունաւորելով մեւած է:

Յղթին ստորագրութենէն աեսնուեցաւ
որ գետէն հանուած դիմակը Մարկօթ Ուեպ
չկրնար ըլլալ և Մարկօթի քած թղթէն
հասկցուեցաւ թէ Մարկ Ուեպ Աւստրալիա
գացած ըլլալով, գետէն հանուած դիմակն ալ
ուրիշ մը ըլլալու էր, Արդ պէտք էր քննել
թէ ո՛վ էր այս, և ի՞նչպէս այդ աղեալ տեղի
ունեցեր էր:

6. ԴԱՏԱՍՏԱՆԻ

Նաւաբեկութենէն աղասառածներն մայ-
րաբազարին մէջ իր դիմացաղուններ կը պատո-
ւէին և անոնց գրամական նուերներ կ'ընէին.
ուսաի ընդհանուր զայրոյթ պատճառեց երբ
լսուեցաւ թէ անոնցմէ մին գողութեան զոհ է
գացեր պանդոկին մէջ: Երբ նա դաստրան
ներկայացաւ իր ամեստանող, դատարանը
լցուած էր հետաքրիներով, որք ծովէն
ալլատուած, և այժմ գողութեան զոհ գացով
մարդը տեսնել կ'ուզէին: Եդուարդ էր անոր
անունը և դատարանին մէջ շատ անհանդիսա-

դքալը յոյտնի էր, ամէն ազք անոր վրայ էր
սեւեւեալ, այս էր որ զինքը կը նեղեր: Ինքը
իր աչքերը ամբաստանեալին վրայ էր ուղած,
իրը թէ նա անանկ մէկը ըլլար, որ իրեն ար-
դէն ժանօթ էր: Մի քանի վկայներ եկած էին.
գատաւորը նախ կողապտուողին ուղեց իր
խօսքը քաղցր ձայնով:

Դո՞ւք էք անանցմէ մին որ «Լօնտոն» շո-
գենաւէն աղասիեցան:

Այս, Տէր գատաւոր:

Պատմեցէ՛ք թէ ո՛ւր և ինչպէս կողոպ-
տուեցաք:

Հա գոլէս յետոյ նաւաստեաց պանդոկը
գացի: Յուն. 23 ին էր: ամբաստանեալը նախ
հոն չ'տեսաց: Երբ մեզի նման մահուան ձի-
րաններէն մէկը աղատի, հարկաւ քիչ մը ու-
րսիստութիւն կ'ընէ: Երբ նորէն պանդոկ եկայ
շուտով անկազին մտայ և վերարկուս վրաս
առի. կարծեմ ձաւնկերուս վրայ առած էր:
հետեւեալ օրը վերարկուս չ'գտայ, երբ գրա-
նապանին ըսի, տեսայ հոն այս ամբաստան-
եալը որ իմ վերարկուս հագած էր: Դռնա-
պանը վկայեց թէ ամբաստանեալը բարկու-
թեամբ յայտնեց թէ վերարկուն իրն է, ուստի
ինքն ալ վար դրաւ զանիկայ, և երբ Եֆուարտ

պնդեց թէ վերարկուն իրն է, սատիկանին
յանձնեց ամբաստանեալը

Սատիկանը հաստատեց այս վկայութիւ-
նը, սակայն իրեն այսպէս թուեցաւ թէ ամ-
բաստանեալը կատարելապէս խելքին տէրը չէ.
ինքնիրեն կը խօսէր:

Դատաւորը խիստ ձայնով խօսքը ամբաս-
տանեալին ուղեց. նա դեղնած և շփոթած
կերպարանիք մ'ունէր, և 20 տարեկան կ'երեւէր:

Ի՞նչ ըսելիք ունիք, Ֆրանսէզ Թըլընըր,
Հարցուց գաստաւորը: Մեր պատմութեան ըս-
կիզբ մեր դէմ ելած անձը ահա հոս նորէն
մեզի կը պատասիք! — :

Թըլնըր փաստաբան մը իրեն փոխանորդ
կարգած ըլլալով, նա սկսաւ այսպէս խօսիլ.
«Պաշապանեալս կ'ըսէ թէ պանդոկին մէջ շա-
տերն իրեն ըսեր են թէ ինք իրաւունք ունի
վերարկուն առնելու, քանզի յառաջազոյն
իրենն էր. Ֆրանսէզ Թըլընըր ընկղմեալ շոգե-
նաւով Աւստրալիա պիտի երթար. նուը մը-
տեր է, սակայն վերջին վայրէնին որոշեր է
դուրս ելլել և չերթալ:» Այս խօսքերն որտ-
հին մէջ եղողներուն վրայ մեծ յուղում բե-
րին, և ամբաստանեալին ի նպաստ ընդհանուր
շարժում մը երեւցաւ: Փաստաբանը շա-

րունտկելով ըստաւ. «Ամբաստանեալին յան-
կարծ միտքը փոխելուն մէջ այնքան կատաւա-
ծային ձեռք պէտք է տեսնենք ինչպէս միւս
ազատեաներուն:»

Դատաւորը այս գիտողութենէն ան-
նպաստ աղդեցութիւն մ'առաւ, քանզի ուն-
կնդրոց և երգուեալներուն համակրութիւնը
ամբաստանեալին անցաւ, ուստի հարցուց
կողապտեալին, դուք տեսա՞ք Ֆրանսէզ Թըլը-
նըրը և օնտօնն շոգենաւին վրայ տնոր մեկնե-
լէն առաջ: Եթուալդ պատասխանեց. «Բնծի
միշտ կը թուիթէ ամբաստանեալը ուրիշ տեղ
տեսած եմ, սակայն չեմ յիշեր թէ օւր. ես
նաւուն նաւուղներէն մին եմ և անհնար է
հարիւրաւոր անձանց գէմիքերն միափս բերել:

Աերարկուն գո՞ւք շինել տուիք թէ ծա-
խու տուիք, հարցուց դատաւորը:

Նաւուն վրայ 12 շիլինի գնեցի սակայն
ծախողն ալ խեղդուած է:

Դատաւորը նորէն Թըլնըրի դարձաւ և
հարցումներ ըրաւ, նա, սակայն, վկայթեցաւ,
մերթ կարմրեցաւ, մերթ գունաթափ եղաւ,
և նաւէն հեռանալուն պատճառը ցոյց տալէ
միշտ խոյս կուտար:

Դատաւորը յարմար սեպեց դատավա-

ուրիշիւնը յետածքել, որպէս զի վկայութիւն
ձեռք բերէ թէ արդեօք Թըլընը վերսիշեալ
ընկղմեալ նուռուն մէջ տեսնուած էր:

Ունկնդիրներէն մին յառաջ եկաւ և
բառ թէ ինք կրնայ վկայել, անունը ձօն էր:
շառառվ երգում լնել առուին «Ես ալ», ըստ,
«ազատեալներէն մին եմ»: Ամէն աճք անոր
ուզուեցան: «Ասկէ տռաջ անգամ մը «Մար-
քորոլո» շագենաւին վրայ այդ տեսակ վտանգ
մ'անցուցեր եմ: Հարաւային ովկիանուին մէջ
սառէ լեռան մը զարդնուելով խորսակուե-
ցանք: Ես մի քանիներու հետ նաւակով մը
ազատեցայ, յետայ Ամերիկայի և Աֆրիկէի
վայրի տեղերն որսորդութեան և երկրախու-
զութեն հետեւեցայ, մանաւանդ Փօրիթ՝ Նո-
թալի վայրի ցեղերոն մէջ: Ամերիկեան պա-
տերազմին ատեն ես միակ Անդիմացին էի, որ
կեալ ագարակի մը մէջ բամբակ կը մշտկէի
ուեւսմորթ դորժաւարներու օգնութեամբ:
ուստի տուին ինձ վկայագիր թէ լքեալ ագա-
րակներն ծաղկեցուցեր եմ: Ասսնք թէ եւ իլնդր-
ոյ հետ վերաբերութիւն չըւնէին, սակայն
դատաւորք և երգուեալք ինչպէս նաև ուն-
կնդիրք մեծ ուշադրութեամբ մտիկ կ'ընէին,
ձօն շարունակեց. «Լօնտոնի» վրայ ես ալ

Ճամբորդ էի և ամբաստանեալն հան տեսայ,
իր յուղեալ և խռավեալ գէմքին պատճառաւ
նա ուշադրութիւնս գրաւեց. տեսայ շատ
անգամ որ աղջկան մը հետ կը խօսակցէր, որ
շարունակ կուլար, և որովհետեւ ո՛չ նա և ո՛չ
ամբաստանեալն ոյլ ես տեսայ կ'երեւի թէ
շոգենաւեւն ելան դեռ նաւը ճամբոյշ չելած:

Այս վկայութենէն ետեւ խնդիրը կրնար
վերջանալ. նախագահը ամէն լածնելն ամ-
փոփեց. յիշեցուց թէ որքան նաւաս բան է
ծովէն աղաստողի մը ստացուածքը իւրացնել:
Երգուեալք գողութեան յանցանքով Թըլընըըը
Գամսուան աշխատութեան գասապարտեցին:

7. ԽԵԼԱԳԱՐԱՊԻԹԻՒՆ

Կախորդ գլխուն մէջի պատմուած դա-
տավարութիւնը ստիկանութեան նոր խու-
զարկութեանց պատճառ տոււաւ. յիշեցին
որ այրի Աւէպի աղջկներէն մին երիտասարդի
մը հետ Աւստրալիա պիտի գաղթեր. ոյն
կնոջ և անոր աղջկանց ընակարանը փնտաե-
լով շուտ յայտնաւեցաւ որ Ֆիրանսեղ Թըլընըը
Մարի Աւէպի հետ նու լ մտաւ և թէ երկուքն
ալ ասմարին մէջ արձանագրուեցան. գըտ-

նուեցաւ նաև որ քիչ յետոյ երկուքն ալ
նաւէն դուրս եւան։

Արդ Մարիի հետքը չգանուելով Թըընըրի
դէմ խիստ քննութիւն մը բացուեցաւ, զի
գէտէն հանուած աղջկան դիմկը Մարիինը
լինելուն արակոյն չէր մնացած, Թըընըր
հարցաքննուեցաւ իւր յարարերութեանց մաս-
ին այս երկու աղջկանց հետ, առաջին մոտա-
յին խանդարման նշաններն այս հարցաքննու-
թեան առեն աւելի զօրացան. մերթ զինքը,
մորթ Մարին և մերթ Մարկօթն կ'ամբաս-
տանէր. մերթ կատաղի կերպով կը գոռար
բանտին մէջ. մերթ լալով ողբալով գետինը
կը նետէր ինքպինքը Յաջրդ. հարցաքննու-
թիւններուն նա առաջինին հակառակ պա-
տասխաններ կուտար. խելագարութեան նը-
շաններ վրան կերեւէին, մանաւանդ իր մե-
նախօսութիւններուն ականջ դնելով հետե-
ւուլ ամբաստանագիւն հնար եղաւ յօրինել։
«Թըաննէլ Թըընըր իրաւ է որ Մարիի
հետ գաղթել կ'ուզէր, և Մարկօթ, երկու-
քին հետ մինչեւ կրինիչ գացած էր Մարկօթ
նաւուն վրայ յանդիմանեց զԹըընըր, թէ նա
նախ իրեն տուած էր իր ուզը և ապա զինքը
լքած և իր քրոջ էր յարած, և դառն ար-

ցունք կը թափէր, Թըընըրի սիրալ կակղացաւ.
և սատանայական որոշման մը եկաւ. ոյ-
սինքն Մարկօթի հետ նաւէն մեկնիլ և Մա-
րին իր բաղդին թողաւը, իր որոշումը յայտնեց
Մարկօթի և սա հաճոյբով ընդունեց զայն
Մարկօթ իր քրոջ ապագայ վիճակին համար
ապահով կ'զգար, խօրհելով թէ նա Աւո-
տալիխայի մէջ իր բաղդ պիտի շինէր; Նաւին
մէջ երկու օր կենալէ յետոյ Թըընըր գաղոնի
կերպով թողուց նաւը և Մարկօթի հետ
հետացաւ կրինիչէ, երկուքը նորին «Լօնտոն»
գային և ի միասին կը կենակցէին; Մարիի
վրայ խօսիլ բնաւ չէր սոզէր, սակայն հարցա-
քննութիւնը այս կէտա ալ պարզէց, Թըընըր
խօսովանեցաւ թէ Մարի, երբ ոչ զինք և
ոչ քայլը գտաւ, նաւը ձգեց և Լօնտոն գնաց.
Հոն Թըընըր գտաւ զանի և իրիկուն մը անոր
հետ Թայյմղ գետին եկերքը պայոսի եւաւ.
երկուքն ալ կամուրջէն կ'անցնէին, և Մարի
ինքպինք գետը նետեր է. անկէ ի վեր Թըընըր
աչ ու սարսափ կ'ազդէր Մարկօթի. լքած էր
զինքը, և այլ ևս ոչինչ գիտէր անոր վրայ։

Դատաւորներ յայտնի տեսան որ իզնի
խայթն էր պատճառ. մտաց խանդարման և
թէ Մարին գետն նետողն ալ ինք էր. որ-

պէս զի նա իր Մարկովի հետ ունեցած յար բարերարվեանց արգելք չունալ

Դաստիարակութեան միջոցին թղթնը կա-
տարելավելու խելագարեցաւ. և խելագար ոճ-
րագործներուն բանալը տառաջնորդուեցաւ, ուր
քիչ տանելուն մեռաւ.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՄԱՏԹԵՈՍՆԱՅ ՅՈՒԼԵԱԿ

Գեղեցիկ, ներշնչու դհանդես մ'եր Տքդ-
Ապաթէռուտնի բժշկական պաշտօնավարու-
թեան յիսնամեայ յոբելեանը, որ կիրակի
տեղի ունեցաւ ֆօքտայեան սրաշին մէջ:
Հայ, Հայ – ըսղոքական և Հայ – կոթողիկ
զարգացեալ դասակարգերուն եղբայրակցու-
թիւնն էր այս, յոբելեան ըլլալով Հայ – ըս-
զաքական հասարակութեան աչքառու անձ-
նաւորութիւններէն մին, Կաքագագիր յանձ-

Նաժողովին նախագահը, Տքթ. Հեթման,
Հայ-կաթողիկ մասնականութեան
կարեւոր գելք մը, և տանենապետը, Տքթ. Պապի
խան, Ալբերելեան Հայութեան ականաւոր
հեթկայացուցիչ մը:

Տոքդոներէ ու գեղագործներէ զատ, ուշ
ըշշ Հայեր, Ամերիկացիներ ու Անգլիացիներ
ալ եկած էին յարգելի յոր լեւարին ինդակ-
ցելու, և մազգելու որ իր Տօքդորութեան
75րդ տարկարձն ալ նոյնչափ քաջողջ առնէ-
օր մը Ներկայից մէջ կ'ոշմարուեին Տ. Մա-
զաքիս Արք. Օրմանեան, Տ. Հմայեակ Արքա-
ղան, Բրօֆ. Ճէճիղեան, Տիկին Մատթէոս-
եան, Տիկին Ճէճիղեան, Արշակ էք. Շմառո-
ւահ Կ'ոն:

Տքդ. Թորդումեան շատ լաւ գրուած
պատմական ծանօթւթիւն մը կարդաց Տքդ.
Մատթէսեանի կեանքին ու գործունեու-
թեան վրայ, թէ ի՞նչպէս Ակնեցի ու շիմ պա-
տմանին իր նախնական ուսումներն այստեղ
ստացաւ, պատճը մը ուսուցչութեան պարապե-
ցաւ, բժիշութիւնն Ամերիկայի մէջ ուսու-
ել. Պոլիս դառնալով շատ լաւ ծառացեց
Ազդ. Հիւանդանցին, որուն առաջին բա-
րեկարգիչներէն մին եղաւ, և նմանապէս

առաջին կիրարկողն եղաւ ի Թուրքիա Լորտ
Լէսթէրի գտած ապանեխական վիրաբուժու-
թեան, որ թանկադին բարիք մը հայթ այժեց
տառապող Մարդկութեան:

Յոյն Տք. Նուլիս, ի գիմաց Կայսերա-
կան Բժշկական Ընկերութեան, որուն նախա-
դահն է, ֆրանսերէն ճառապլ մը շնորհաւորեց
յոբելեարը, որ նոյն Ընկերութեան կողմէ բա-
ցառիկ պատիւի ու գնահատութեան ար-
ժանացած է իր անընդհատ անդամուկցու-
թեան և արդիւնաւոր պաշտօնավարութեան
համար:

Տք. Փաշական Հայ բժշկական մարմ-
նոյն կողմէ, և Պուլութեան էֆ. (Նիկոմիդիա)
Հայ գեղագործներու կողմէ խնդակցեցան
Տք. Մատթէոսեանի, ի վեր հանելով անոր
խղճամիտ և պարտաճանաչ գործունէու-
թիւնը: Յոյն բժիշկ Տք. Քօյիտան անգլիե-
րէն և Տք. Քօքոլադոս ֆրանսերէն խօսեցան:
Այս վերջինն առ Տք. Մատթէոսեան ձռնեց
հին հելեներէն լեզուաւ կարծ ստանաւոր մը,
որով կ'ողջունէ մարդասէր բժիշկը, և երկար
կեանք ու բարօրութիւն կը մաղթէ անոր,
պանծացնելով անոր արուեստը: Տք. Քօքո-
լադոս իր ցեղն առ պանծացուց, յիշեցնելով



ՏՔ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

որ հին Հելլէնք իրենց գիցարամութեան մէջ,
բժշկութեան կ'ընծայէին աստուածային ծա-
գումն Եսկիւլարն աստուածային էակ մը հա-
մարելով : Հանրածանօթ քիմիագէա Մ. Արե-
րի ֆրանսերէն և Ռոպէրդ Քոլէճի նախագահ
Տքդ. Կէյթո անդլիէրէն խօսելով գովեցին
յորելեարը Ակնայ առաջնորդական փոխա-
նորդ Տ. Պետրոս քչնյ. Ակնեցի Գորեան էֆ. ի
հետ գովելով, ոսկի գրիչ մը նուիրեց իրենց
մեծանուն հայրենակցին, խնդակցելով անոր
յաջուղութեան Ոսկի գրիչ մ'ալ Հայ բժիշկ-
ներու կազմէ նուիրունցաւ : Տքդ. Նագաշեան
թուբքերէն խօսեցաւ, հռչակելով թէ նշա-
նուոր բժիշկ մը մեծ զօրապեսի կամ համ-
բաւաւոր ծովակալի մը չափ ո՛չ նուազ իրա-
ւունք ունի հասարակաց ուշադրութեան
առարկայ դառնալու:

Վեր. Ծմաւոնեան կարգաց Հնորհաւո-
րական նամակներ ու հեռագրեր Ա.մերիկեան
դեսպանին կողմէ, ամերիկեան ընդհ. հիւպա-
տավին կողմէ, Գուրեան Արքազանին կողմէ,
և Մխիթարեան Հարց կողմէ, որոնք «իրենց
կամքէն անկախ պատճառուով մը» չեն կըր-
ցած գով անձամբ մասնակցիլ հանդէսին
ձառներն ընդմիջուեցան դաշտակահարու-

թեամբ, և անգլիերէն ու հայերէն երգերով՝
կոմիտաս Վարդ, կրկին և կրկին ծափահար-
ուելով:

ի վերջոյ, Տօքդ. Մատթէոսեան հայեցէն, անգլերէն և ֆրանսերէն ճառախօսելով, ամենուն աղ զատ զատ շնորհակալութիւն յայտնեց, և յիշեցուց թէ գոհութիւն կը պարտինք Աստուծոյ, այնպիսի դարս մը մէջ ապրելնուս համար որ ուրիշ ամէն դարեւեկի բարեւզբաւմ և յառաջդիմութիւն տեսաւ Մարդկութեան վիճակին մէջ։ Այս վերջին հարիւր տարաւան մէջ է որ շոգին ու ելեկտրականութիւնն անհաւատալի քայլեր առնել տուին Մարդկութեան, բժշկական արուեստը կատարելութեան դիմեց, բացարձակ ինքնակալութիւնը վերցաւ աշխարհէն, սահմանադրական վարչութիւնն ընդհանրացաւ, և տարբեր կրօնէ, տարբեր ցեղել մարդոց միջև եղբայրակցութեան ու համերաշխութեան գաղափարն որոշ ձեւեր առաւ։ Մօտէն Ճանչոցած ըլլալով Ազգ. Հիւանդանոցը պարտ դրաւ Ազգին վրայ որ միշտ գուրգուրայ այն Հաստատութեան վրայ, և իր համատար յայն յայտնեց թէ Հայ Ազգը կարող է

միշտ եւրոպական կատարելաւթ եամբ Հիւանդանոց մը պահպանել:

Հանդէսը փակեց Օրմաննեան Սրբազն՝
որ բացատրեց թէ հաւանօքէն անոր համար
զինք հրոս իրած են խօսելու սրով չետև մարմ-
նոյ րժիշկներուն և չոգիի բժիշկներուն կո-
չումները շատ հեռի չեն իրարմէ, և սրով չե-
տեւ յորելեարն ինք, իբր քրիստոնեայ գիտ-
նական մը, իրարու հետ հաշու կ'ըմբռնէ գի-
տութիւնն ու հաւատքը, կրօնն ու կենցաղը,
բնականն ու գերբնականը: Խնք Տոքդ. Մատ-
թէսուանի հետ բարեկամութեան կտպերով
կապուած է 40 տարիի ի վեր, և այս պատ-
ճառով չէ միայն որ ուրախ է յորելեանի
հանդէսին համար, այլ և անոր համար որ
Աղջին մէջ գիտակցութիւնը կը զօրանայ և
կ'ընդհանրանայ, Աղջին բաժանեալ հատ-
ուածներն այստեղ միաբանած, ազգային հա-
մերաշխութեամբ ձեռքի ձեռքի կուտան գո-
վելու և քաջալերելու համար արժանիքն ու
առաքինութիւնը: Յորելեաններ կազմելու
մասին Արեւելեան Հայերը մեղմէ շատ աւելի
առաջ անցած են Մեր մէջ քանի տարիի
ի վեր երեք յորելեան միայն կատարուեց են,
Ուշը էսա Պէրպէլեանի, Մնակեանի և Հիմա

Տօք. Մատթէոսեանի յորելեանները: Խնկառ
առնելով յորելեարին գիտութեան և ար-
ուեստին չափ ալ հաւատքն ու մարդասիրու-
թիւնը, Օրմանեան Արբազան որոտընդպատ-
ծափերու մէջ, ԱՌԱՔԻՒՆԻ ԲԺՇԿԱՊԵՏ տիտ-
ղոսը կը ձօնէ անորու:

Տոք. Պազիլ Խան ծանոյց կարգադիր
յանձնաժողովին կողմէ թէ յորելեարին պա-
տիւ մը ընելու համար բացուած հանգանա-
կութիւնը պիտի շարունակուի ժամանակ
ժամանակ, Տոք. Մատթէոսեան փափաք յայտ-
նած ըլլալով որ հանգէսին ծախքը հան-
ուելէ ետքն ինչ որ աւելնայ, սահմանուի
Հայ որքի մը կամ որբուհի մը դաստիարա-
կութեան, և եթէ տառը չլաւէ, յարմար
գաստուած բարեգործական հաստատութեան
մը նուիրուի:

Աւելի քան երեք ժամու ճառախօսու-
թեամբ և երաժշտութեամբ գերագրգոռուած
չեղերը պահ մը թէցի սեղանին շուրջ կազ-
դուրուելէ ետքը, Հայեր և օտարազգիներ
կրկին անգամ շնորհաւորելով մեծայարդ յո-
րելեարը, լաւագոյն տպաւորութեան մը տակ
մէկնեցան:

—

Թօնօսի մը ողիսականը. — Զար-
մանալի երեւոյթի մը հանգիստես եղանք
ատամնարց խաչիկ էֆ, Ճամկոչեանի գար-
մանաորահին մէջ ի Պողիս Ատամնալոյժը
որ մասնաւենեակ մը տուանձնացած՝ յա-
ճախորդի մը ակուային կաղապարը կ'առ-
նէր, յանկարծ ներս հրաւիրեց մեզ ու ներ-
կայացուց յաճախորդին, խնդրելով ծնութին
պատմութիւնը ընել հաճի մեր ալ ներկա-
յութեան Յաճախորդը գաւառացի պատ-
ուաւոր վաճառական մը՝ առկէ 48 արբի
առաջ Խարբերդի գիւղերէն մէկուն մէջ
սաստիկ ակուայի ցաւի մը կը բռնուի, որուն
չըրնալով գիմանալ, կը ներկայանայ տեղ-
ւայն մէկ խեղճ սափրիչին և ակռան քաշել
կ'առաջարկէ: Յաւած ակռան աջ կողմի
փոքր աղջրատամն էր, սափրիչը՝ աքցանը ձեռ-
քը՝ աջ ամիս կը դարձնէ եւ վերջա-
պէս բացարձակ անճարակութեամբը ակռան
հանած ատեն ծնուտն ալ կը կոտրէ վերէն
վար:

Վաճառականը ըոլսրովին խելայեղան
քաղաք կը փոխադրուի, ուր ծանր թիֆօէ մը
տառապի շաբաթներավ կեանքի ու մահ-
ուան մէջ օրորուելով: Երբ թիֆօն կ'անցնի,

բժիշկները կը տեսնեն որ ստորին ծնօտը քանիլիէն ըլլալու և փառելու աստիճանին հասած է: Հիւանդը՝ ինքզինք Պօլիս կը նէտէ և կը դիմէ Տօքթ. Մատթէսոսեանի, որ ամբողջ մարմինը փառախաչ ազատալու համար՝ առանց ժամանակ կորսնցնելու, անմիջական գործողութեամբ մը՝ երկու վայրկեանի մէջ կը հանէ ստորին ծնօտը, և ոյսպէս մարդը կը սկսի ապրիլ յուսահատ ու առանց ծնօտի, գրեթէ կենդանի մեռեալ մը: Տօքթ. Մատթէսոսեան որ գեռ գարմանու մը չէր ամբողջացուցած, օր մը ուշադիր զնոտութէնէ մը ետք, կ'ըսէ:

— Քեզի աւետիս մը պիտի տամ: բայց արիսթիւն ռանցիքը հըճուանքդ չափաւորելու:

Յուսահատ հիւանդը ար աշխարհքէ վաղանցնելու վիճակին մէջ կը դանուեկը,

— Խօչ աւետիս է Տօքթ. կը հարցնէ.

— Աստուած և ընութիւնը կ'օգնեն քեզ, կ'ըսէ, բժշկական տարեգրութեանց մէջ հազարին մէկ պատահած բախտաւորութիւն մը պիտի վիճակի քեզ, հանած ծնօտիս աեղնորի մը բուսնելուն նշանները կը տեսնեմ, բայց գուշութիւն և չափաւորութիւն

կրնաք երեւակայել հիւանդին խնդութիւնը որ ծշմբատապէս ծնօտի մը բուսնելու որ աւուր զարգանալը կը տեսնայ բերնին մէջ:

Երկու տարի ամիսողը՝ վերջին աստիճան պահեցողութեամբ և մի միայն մսի ջուր, կաթ և այս կարգի կակուղ նիւթեր ուտելով կը սնանի երբ ծնօտը կատարելապէս կը բուսնի:

Յարգելի վաճառականը ոյս պատմութիւնը ընելէ ետք, եկուը շշափէ, ըստու, և ես երբ զգուշութեամբ կը բանէի, սեղմէ՛, սեղմէ՛ մի՛ վախնար, ըստու, իմ ծնօտս ուրիշներու ծնօտէն ալ աւելի զօրաւոր է, որովհետեւ երկրորդ տպագրութիւն է:

Հիմա արհեստական ակասյ գրած է և առանց նեղուելու, երկիւղի, ամէն բան կ'ուտակ տասնը գինդ տարիէ ի վեր:



ՎԵՐ. ԱՅՐԱՎԱՄ ԱՄԻՒԹԻՒԱՆԵԱՆ

Կովկասիան թերթերը կը ծանուցանեն
մոհը Աբրահամ Ամիրխանեանի, որ կ. Պոլսոյ
մէջ ալ նախորդ սերունդին ժանօթ անուն մը
եղած է: Ամիրխանեան վերջին տարիներս
առանձնացած էր Վառնա, ուր մեռած է
Փետք. Ֆիլիպին, յետ երկար ու տաժանելի

Հիւանդութեան: Աբրահամ Ամիրխանեան
մերձաւորապէս 75 տարեկան կը մեռնի, ծնոծ
է Շուշի, և որդին է այդ շրջանակին մէջ
ծանօթ Միրզա Ֆարուխի, որ իր Ամանկութեան
շրջանին գերի տարուած էր Պարսկաստան,
Աբրամ Միրզայի ձեռամբ և իսլամացած:

1828 ին Թիւրքմէնչայի գաշնադրութե-
նէն յետոյ, անիկա գերութենէ ազատեցաւ
և վերադարձաւ իր հայրենիքը՝ Շուշի, և
Քիառասնէութեան գառնալով ամսաւացաւ
և զաւակներ ունեցաւ, որոնցմէ մէկն էր
Աբրահամ:

1830 ական թուականներուն Շուշի եկած
էն Բողոքական քարոզիչներ, որոնք կը հիմնեն
Դպրոց, տպարան, և լու: Միրզա Ֆարուխ՝ իր
Աբրահամ որդին անոնց քով կուտայ աշա-
կերաւութեան: Միսիոնարները նկատի առնե-
լով Աբրահամին ուշիմութիւնը և ընդունա-
կութիւնները՝ կը զիկին զինքը Զուլիցերիա,
Պազէլ քաղաքը, ուր անիկա ուսում կ'ստա-
նայ Բողոքական քարոզիչներու յատակ վար-
ժարանին մէջ: Հօն կը ծանօթ անոյ հին լե-
զուններէն Յունաքէնի, Լատիններէնի և Եբրա-
յիցերէնի և եւբողական խօսւած մի քանի
լեզուններու: Կուսանի նաև Աստուածաբարտ-

Նութիւն, Փիլիսոփայութիւն, Աշանկավայր ժութիւն, և այլն։ Դպրոցէն դուրս յետով ինքնաշխատութեամբ կը սորմի Արաբերէն, Պարսկերէն, Թուրքերէն, և կը դառնայ քաջ արեւելագէտ։

Պաղէլի վարժարանը աւարտելէ յետով Բողօքական միսիոնարներու կողմէ իրք քարոզիչ կը զրկուի և Պալիս, ուր կը գրաւէ ուշագրաւ տեղ մը, իր հմտութեամբ ու լոյն ծանօթութեամբ։

Փամանակին ամենէն փայլուն կը թական հաստատութեան՝ նուպար Շահնազարեան վարժարանին մէջ իրեն յանձնուեցան Ալշեարհադրութեան և Բնական գիտութեանց դասախոսութիւնը և սղագրութիւնը։ Այս միջոցին պարապեցաւ նաև գրական աշխատութիւններով, և մասնաւորապէս երկար ատեն աշխատակցեցաւ Մասիսի, և Հրատարակեց Պէջիթաշի Հայկական Ընկերութեան ծախքով 1872ին Դասագիրք Ընթերցանութեան անուն գիրք մը։ 1872ին Խասդիւղի մէջ բացաւ Ամբրիսանեան երկսեռ վարժարանը, որ սակայն շատ երկար կեանք չունեցաւ։ Վարժարանը փակելէ յետոյ գնաց Դաւրէժ, ուր իրը Բողոքական քարոզիչ մնաց մէկ քանի տարի։

Գէրգ Դ. Գէրգեան ձեմարանին մէջ ուսուցչական պաշտօն աւատջարկեց իրեն, պայմանով որ Հայ Եկեղեցին դառնայ, սակայն Ամիրիսանեան մերժեց և գնաց հաստատութել Թիֆլիս, ուր աշխատակցեցաւ Մշակի։

Դաւրէժ գտնուած միջոցին Աստուածանչան Ընկերութեան յանձնարարութեամբ Արեւելեան աշխարհաբարի կը թարգմանէ Երբայցեցերէնի և Յունարէնի ըաղդասութեամբ Ա. Գիրքը (Հին և Նոր Կտակարան), ինչ որ պիտի բաւեր իր անունը անմահացնելու համար։ Այս մեծ գործը նոյն Ընկերութեան ծախքով կը տպագրուի Թիֆլիսի մէջ։ Միեւնոյն ատեն Ամբրիսանեան շարունակեց իր քարոզչական պաշտօնը և կրօնական բրօւսական ըրտաւ, ու Ուու աղանդաւորներուն մէջ կրցաւ իր քարոզութիւնները տարածել։ Ուու Կառալսրութիւնը միշտ հակակիր գտնուած է Բաղոքական քարոզութեան և ընաւ չէ ուղած որ Բաղոքականութիւնը արմատ բանէ կովկասի մէջ, ինչպէս նաև Ուուսից սահմանակից Երկիրներուն մէջ։ Ասոր համար Շուշիի և Շոմափիի մէջ Զուիցերացի բարսղիչներու բրօրականութեան իսկ

Առևս կառավարութենէն հալածուած է,
Նսյնպէս չպիտի կրնար անտարբերութեամբ
դիտուիլ Ամբրխանեանի կրօնածաւալական
գործունէութիւնը: Կառավարութիւնը զինքը
աքսորեց կավկասէն և Ֆինլանտիա լնակելու
հրաման ըրաւ: Ամբրխանեան հոն կարճ ատեն
մը մնալէ յետոյ անցաւ Շուետ, ուրկէ գնաց
Պուլկարինա, և ստանձնեց Վառնալի Բողոք
քականաց քարոզչութիւնը: Հոն ուզզակի
Արարերէնէ Հայերէնի թարգմանեց Ղուրանը
և անոր վրոյ հրատարակեց փաքրիկ ուսում-
նասիրութիւն մը, որ տպագրուեցաւ 1904ին:
Կովկասի թերթերուն կը գրէր երբեմն թը Շ
թակցութիւններ և Գերման ու Պուլկար
թերթերու մէջ կը գրէր Հայերը ծանօթա-
ցնող ուսումնասիրութիւններ:

Արշակ Ա., Ալպօյանեան

* * *

Փրօք. Պէզնեան. — Այս է անունն
պատկառելի Հայ անձնաւորութեան մը որ
աւելի քան կէս դար Ազգին ու երկրին իր՝
կրթիչ ծառայելէ ետքը Փետր. 9ին իր աշ-
խատութենէն հանգչեցաւ 76 տարեկան հա-
սակին մէջ:



ՀԱՆԳՈՒՑԵԱԼ, ՓՐՕՔ. Ս. ՊԵԶՆԵԱՆ

Փրօֆ. Պէղճեան խոնարհ պարտգաներու
տակ ծնաւ, մայրը գիւղացի կին մ'եր, իսկ
հայրը աղքատիկ կտաւագործ:

Ամերիկ, միսիոնարբ սցն պատանիին բը-
նածին կարողութիւններն տեսնելով 1852 ին
Տոք. Համբանի ձևմարանը զրկեցին ի Պոլիս.
ընթացաւարտ ըլլալէ ետե Կիլիկիա վերա-
դարձաւ և 46 տարի ուսուցչական պաշտօն
վարեց Այնթապ և Մարաշ Այնթապի Գո-
լէճը բացուելուն Ամերիկայ գնաց ուսումը
կատարելագործելու համար, երկու տարիէն
ուսումը տարրատելով Այնթապ վերադարձաւ
1874 ին և 39 տարի շարունակ Գօլէճին ու-
սուցչապետ եղաւ, մինչեւ իր մահուան օրն:
Բնագիտութիւն և տարրագանութիւնիր մաս-
նագիտութիւնն էին թէն աստեղաբաշխու-
թիւն ալ կ'ուսուցանէր, Քաջ տեղեակ էր
Անգլիերէնի, Թրքերէնի, և Հայերէնի Հա-
յերէն և Հայատառ թրքերէն ընագիտու-
թեան իր դասազիրքը երկու անգամ՝ տպա-
գրուեցաւ. Փրօֆ. Պէղճեան դաստիարակ էր
ի ծննդէ, եւ իրը դասախոսուու բանախոս ժա-
մերով իր յատակ բարբառով և զուարձա-
խոս ոճով կը հետաքրքրէր ունկնդիրներն երբ
գիտաւթեան դադանիքներն կը լուսաբանէր:

Ուստի Փրօֆ. Պէղճեան Կիլիկիոյ Հանրութեան միայն «Ալիքոսն խօճա» անունով կը ճանչցուէր: Ճշմարիս գիտունը կրօնասէր, սատուածապաշտ կըլլայ. Փրօֆ. Պէղճեան քրիստոնեայ մարդ էր, գիտութիւնը փոխանակ հաւատքը խախտելու այլ ևս հաստատած էր զնա ի քրիստոնէական հաւատոյ: Քրիստոնէութիւնը կը դաւանէր և կը քարոզէր Կեանքին վերջին օրն Կիրակի էր. Նոյն օրուան առաւասուն կիրակնօրեայ դպրոցին մէջ իր կաբդին դաստիօնեց, միջօրէն ետե քարոզութեան ներկայ գանուեցաւ, և եկեղեցւոյ ժողովին մասնակցեցաւ. ապա զոհ և խաղաղ սրտով անկողին մտաւ. կէս զիշերէն քիչ ետքը արթնցաւ անհանգիստ զգալով՝ կէս ժամ յետոյ սիրաը արդէն դադրած էր բարախելէ:

Անոր մահով Թուրքիայէն անուանի գէմք մը կ'անհետանայ և Հայ դաստիարակութեան պատմութեան վրայ փառք մը կ'աւելնայ:

Մ. Կ. Փափազեան



Աւսուցապես Արմենիակ Տէր Յա-
կաբեան (30 ամեայ Յորելեամը). — Պար-
տիզակի բարձրագոյն վարժարանի սկզբնաւո-
րութենէն ի վեր Արմենակ Էֆ. Տէր Յակոբ-
եան Նոյնացած է գպուցին դործին հետ: Իր
ներկայութիւնը եղած է, թերեւս, մեծագոյն
ազդեցութիւնը, որ յառաջ բերած է այն
անշօշափելի, սակայն ուժեղ բանը, զոր
«Պարտիզակի բարձրագոյն վարժարանի սգին»
կանուանենք: Երեսուն ու մէկ տարիանըդ հաստ
ինքը վարժարանին նույիրած է իր ֆիզիքակոն
ու իմացական ուժերը և իր հոգիովը ազդած
է անոր: Մօտաւորապէս 2000 ուսանողներ
եկած գացած են, և ամէնքն ալ, քիչ թէ
շատ, ստացած են ազդեցութիւնը իր հեղե-
նակաւոր ուսուցումնն, անկեղծութեան ու
եռանդին: Այժմ մենք կը տօնենք վարժարա-
նին հետ իր ունեցած կապակցութեան Յիդ-
տարեգարձը և փառք կտաւանք Աստուծոյ իր
անցեալ դործին համար, և յոյսին համար
զոր ունինք ապագայ ծառայութեան, քանզի
անիկա դեռ երիտասարդ է, աշխայժ և եռան-
դուն կերպով նույիրուած է դործին, զոր եր-
կար ատենէ ի վեր սիրած է: Կը մազթեմ որ
Աստուծ երկար պահէ իր կեանքը:

Տօղ. Ռ. Զէմարտ

Ա. Արքունի Տօնիկեան. — Ննած
է ի Կէմէրիկ 1852 ին. Նախնական վարժու-
թիւն առած է ծննդավայրին սովորական
վարժարաններուն մէջ, յետոյ կարճ ժամա-
նակի մը համար Մունճուսուն գործելէ վերջի
կեսարից նախապատրաստական գպրոցը և
ասարի, մէկ տարի ալ Սունկուրլու ուսուցչու-
թեան պաշտօն վարելէ վերջ, 1873 ին Մար-
զուանի Աստուածաբանական ճեմարանը կը
մնիէ, արձակուրդի ժամանակ 3½ ամիսներ
քարտզի պաշտօն վարած է Տէնտիլ, Զիլէ և
Պօղապլայան, Աստուածաբանական և տար-
ուան ըրջանը 1877 նոյ. ին լմնցնելով, ամսւա-
նանալէ յետոյ, պաշտօնավարած է 1877—
1884 Պոր, 1884—1894 Ազիզիյէ, 9 ամիսներ,
Հայկական խնդրի պատուակաւ, Սեբաստիայ
բանալը, 1895—1896 Նէվշէհիր, 1898—1902
Ստանօղ և 1902 ին ծննդավայրէն հրաւեր
ընդունելով մէկ տարի պաշտօնավարելէ
վերջ, ուրդյն եկեղեցի կաղմաւելով, Հօվիւ-
ձեռնադրուելով, մինչև 1908 ին նոյն եկե-
ղեցոյն մէջ գործած է, 1908 է ի վեր նիկ-
ակյի մէջ կը պաշտօնավարէ:



Ա. Արքունի, Տօնիկեան




ԳԵՐ. Ա. Պ. ԱՏՈՎԱՆԻԵԽԱՆ, ՀՕԳԻԻ ՊՐՈՒՍՑԻ

Այս. Կարապետ Պ. Առանձիւան.
— Ծնած է կեսարիա: 45 տարեկան հասակին
կառավարանան մէջ գրադիր է եղած. երկու
տարի վերջ փախաւ անկէ և 4 տարի ուսուց-
չութիւն ըրաւ կեսարիա. նոյն ատեն բարձ-
րագոյն դպրոցէն դասեր կ'առներ: 1889ին
Մարզուանի գոլէճը մտաւ, 1890ին աստուա-
ծաբանական Ճեմարանէն, 1891ին գոլէճէն
ընթացաւարա կ'ըլլայ: 4 տարի Հերեքի մէջ
քարոզեց, որու միջոցին տարի մը անկէ հե-
ռացաւ կառավարական սպառնալիքներու
պատճառաւ, և Ա. գոլէճի մէջ մնաց իրը
ուսուցիչ: 95ին Թալասի եկեղեցին հրաւել
ընդունեց, 98ին Մարզուանի հօվուութիւնը
ստանձնեց ու հոն ձեռնադրուեցաւ, ուր պաշ-
տօնավարեց 6 տարի. երիտասարդներն ալ
Ք. Ընկ. Նախագահութիւնը իրեն յանձնեցին:

1904ին Ամերիկա գնաց ուսումը կատա-
րելագործելու. Հարթֆըթի աստուածաբա-
նական Ճեմարանը ընդունուեցաւ իրը ընթա-
ցաւարտ աշակերտ. 1906ին պսակաւոր կրօ-
նական մանկավարժութեան տիպումը առա-
ւարտ 1907ին Նիւեօրքի համալսարանէն վարդապետ
մանկավարժութեան տիպումը ընթացա-
ւարտ կ'ըլլայ: Այս ամենը ինքնօգնութեամբ

միայն։ 1908 մարտին Ճամփայ ելաւ գեղի հայրենիք անցաւ Աթլանթիքէ Անգղիա, Գաղիա, և Խոպիայ. երբ Յունաստան հասաւ Հեռագիր մը ընդունեց որ կ'ազդարարէր քիչ մը սպասել հոն, քանզի Տաճկաստան երկունքի մէջ էր. ուստի $3\frac{1}{2}$ ամիս շրջեցաւ հին փիլիսոփաներու հայրենիքին մէջ, Աթէնքի հնութիւնները և նոր աշխարհէն բերած զերքերը ուսումնասիրելով։ Վերջապէս երկաթեայ գոները խորտակուեցան, ու 1908 Յուլիս 3 կին մոտաւ Տաճկաստան, Զմիւռնիայ Հայ Աւետ. Եկեղեցւոյն հավուութիւնը ըստանձնեց, և պետական վարժապետանոցի 150 Մահմետական երիտասարդներու շաբաթը 2 անդամ՝ մանկավարժութիւն կը գտնախօսէր։ Երկու տարի պաշտօնավարելէ վերջը, Ատարազար եղած է իր այժմեան աշխատութեան դաշտը։



Աւր. Թ. Ա. Ալանիեան (Խուլագիւդ)։
— Բնիկ Զնքուցի և ընթացաւարտ Եփրատ Գոլէճի և Աստուածալանական վարժարանի ի Խարբերդ։ Նստի Տիգրանակերտի մէջ պաշտօնավարած է իր ուսուցիչ և օդնական քարտղիչ։ 1894 ի աշռելի կատրածին



Աւր. Թ. Ա. Ալանիեան



ՎԵՐ. Ա. ԳՐԱԼԵԱՆ


Նախախնամաքար հբաւիբուած Եղէզի գիւղի
քարոզչութեան, տեղւցն բարեսիրտ պէկեբու
շնորհիւ տմբողջ զիւղավ պաշտպանուեցան
և զերծ մնացին ջարդէ և թալանէ: Եղիս
տարիէն Խարբերդի արեւմտեան թաղի եկե-
ղեցին հբաւէր ստանալով Յ տարի ալ հռն
պաշտօնավալ ելէ ետե ձեռնադրուած է .
Դ տարի ալ իրը հովիւ հռն ծառայելէ ետե
Փերչէնճի եկեղեցիին հովիւ եզաւ ուր 15 ա-
միս աշխատելէ ետե Յ տարի ալ Մարզուանի
եկեղեցիին մէջ պաշտօնավարած է: Այժմ
Խուլաղիւ զի եկեղեցւոյ հովիւ է:

↔↔↔

Ա. Ա. Կրալեան. — Խարբերդի
իջմէ գիւղին մէջ ծնած 1874 ին, որմնագիրի
մը զաւակն՝ նախնական ուսումնական մը տո-
րոցին մէջ տատած է: Հիւանդութեան մը տո-
թիւ հօրը կողմէ Տերողը նուիրուած ըլլալով
1888 ին Եփրատ գոլէճ կը զրկուի: Յ տարի
կարգւալով 2 տարի ալ ուսուցչութիւն ընե-
լով 1896 ին Եփրատ գոլէճէն շրջանաւարտ
կ'ըլլայ: Մոյն տարին իբրքաբաղիչ ուսուցիչը,
Տիարգերիր կուսակալութեան մէջ գանուսող
Հոյնի գիւղաքաղաքը կը զրկուի: Յ տարիի
շաբաթ պաշտօնավարելէ յետոյ 1902 ին Մարտու-

Աստուածաբանական դպրոցը ուսանելու կ'երթայ, Յ տարի կարգալէ յետոյ նորէն նոյն պաշտօնասաեղին վերադառնալով տարի մը իբր քարոզիչ պաշտօնավարելէ յետոյ, 1906 Տիարքէքիրի եկեղեցւոյ Յորելեանքն տալթիւ երէց կը ձեռնադրութ. տարի մը ևս հանգուցեալ Պատ. Մարտիրոս Շմաւոնեանի ծննդավայրին մէջ (Հայինի) իբր երէց պաշտօնավարելէ վերջ 1907 էն ի վեր Արտօվկիրի մէջ կը պաշտօնավարէ:

Անր. Խ. Կիւլպէնկեան (Սամսոն). — Ծնած 1838ին, 1859ին Պոլս Տօք. Համբինի աշակերտած է. 1862ին Պետքիրի ճեմարանը փակուելով Զարշամպա կը դրկուի իբր քարոզիչ, 1865ին Սամսոնի մէջ պաշտօնավարած է և տարի, յետոյ Մարզուանի Աստուածաբանական վարժարանի աշակերտած է, 1870ին ընթացաւարտ է եղոծ և Եօզզատ զրկուած է քարոզելու, յետոյ Ամսոխոյ մէջ պաշտօնավարած է 6½ տարի, անկէ ելլելով Երպատ, յետոյ 2 տարի Վէզիր Քէօփրիւ, 3 տարի Ոիմ Հաճի Քէզոյ, ապա 3 տարի Սամսոն, յետոյ Մարզուան, Զարսւմ, Կիւմիւշ, Գամփու Գայյա, Զարշամպա, Սամսոն պաշտօնավարած է: Ներկայիս հոն է գեռ:




Անր. Խ. Կիւլպէնկեան

ԵԿՐՈՊԱՅԻ ՏԱՐԻԸ
ԹՈՒՐՔԻՈՅ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵՍՆ ՄԵԶ
Փրօփ. կ. ԹՌՈՒՆԱԿԱՆ

Ենչ զարմանալի երեւյթ։ Միթէ բարենորոգում ըստածն այդշափ դժուար է որ չի յաջողիր Աշխարհի վրայ չբարեկարգուած տեղ չմնաց։ Ափրիկէի խաւար վայրերը բարեկարգութեան լցուալ տեսան։ գեռ երեկ մեզմէ բաժնուած ազգեր ու երկիրներ բարեկարգութեան շնորհիւ զարգացան, զքրացան, և այսօր քաղաքակիրթ ազգաց կարգը դասուեցան ու մենք տակաւին մեր եղած տեղը գամուած մնացեր ենք, ոչ միայն նոյն անբարեկարգ, այլև և կարծես անբարեկարգելի երկիրը։ Կարժէ որ այս ձախողուածին պատճառը փնտառուի, որ պիտի ըլլայ նաև անորդարմանը որոշել։

* * * Թուրքիոյ բարեկարգութեան ձախող զիւաւոր պատճառն է, ըստ իս, գործածուած սիսալ միջոցը։ Երբէք գեշ գրեշով մաքուր գիր գրել փորձած էք, և չյաջողելով վերջապէս ստիպուած զայն նետել ու նոր մը տանել։ Ահա՝ Թուրքիոյ բարեկարգութեան

բոլոր պատմութիւնը Բարեկարգութիւն
կ'ուզու ի մացնել ու գործադրել հոն այնպի-
սիներու ձեռքով որ անոր պէտքը տեսած ու
համոզուած չեն, մինչեւ իսկ եթէ արտաքուստ
չէ, ներքուստ հակառակ ու թշնամի են անոր.
և եթէ չեն ալ, գոնէ հասկցած չեն բարեկար-
գութիւնը, ոչ ալ ատակ են զայն գործադրե-
լոււ Ո՞չ ապաքէն ցարդ եղած բոլոր ջոնքերն
ու փորձերը կ'ուզուի ներկայիս գործի վասյ
գոմնուող պաշտօնեաներու ձեռքով գործու-
դրել, — պաշտօնեաներ որ ոչ միայն շահ մը
չեն ահաներ այդ իսլահարին մէջ, այլ մինչեւ
իսկ իրենց շահած յրէկսրիծին և հանգստու-
թեանը վնասակար կը համարին, առ առա-
ւելն իսլահարին շանակութենէն, նպատակէն
պիխապէր են: Արդ, այս յետագէմ խելքե-
րով, այս հինցած ու մաշած գործիներով
ի՞նչպէս հնար է իսլահար գործադրել: Միթէ
նոր գինին հին տիկերու մէջ կը գոսւի: Կ'ը-
սեն թէ օր մը առաւուը ծառի մը ճիւղին
վրայ թառած՝ կը լսէ իր սոխակ եղբօր հիս-
նալի դայլապլիկը և իր ալ խելքին կուզայ այդ
քերսէէն երգել, սակայն ինչ որ կ'ընէ, առ-
ռաւի կռկուցէն անդին չանցնիր: Խե՛ղճթը ըս-
տուն, յանցանքն իրը չէ. ի՞նչ ընէ, կոկորդը



ԱՆԲ. ԱՐՅՈՅ. և. ԹՈՒՄԱՆԵԱՆ

տարբեր կազմութիւն ունի. սոխակի ձայն
հանել չի կրնար, վերջապէս ագռաւ է ։ Նոյն-
պէս ալ երսժշտութեան սիրահար մէկը դաշ-
նակի վրայ պքանչելի կարը մը լսելով հան-
գեսի մը մէջ, չետեւեալ օրն իսկ նոյն բիա-
նոյին տեսակէն հատ մը գնելով կը զրկէ տուն,
և իրիկուան կ'սափէ իր աղջիկն որ երեկուան
արդիսին պէս զարնէ, ու մեծ կ'ըլլայ զար-
մանքը, երբ չի յաջողիր, և սակայն յանցանքը
բիանոյինը չէ, այլ աղջկանը, որ այնքան
վարժուած չէր դաշնակի ։ Կը պատմեմի թէ
մարդուն մէկը ակնոցավաճախ մը խանութը
մտնելով մին միւսն ետեւէն շատ մը ակնոց-
ներ փարձելով ոչ մին կը հաւանի, առարկելով
թէ ատոնց ոչ մէկով կրնոյ կարդալ ։ Աեր-
ջապէս, կ'ստուգութի որ մարդու կը կարդալ
չի գիտեր, և կը կարծէ եղեք թէ ակնոց մը
անցընելով կրնոյ կարդալ ։

Նոյն բանն է որ կը պատահի Թուրքիոյ
իսլահարի գործին մէջ. իսլահար մոցնել և
գործադրել առաջութիւն կ'ուղղուի իսլահարէ Հաս-
կող իսլահարի անյարմար, մինչև իսկ գըժ-
կամուկ անձանց միջոցաւ, բարեկարգութիւն
անբարեկարգ պաշտօնէից ձեռքբով ։

բարեկարգութիւն մացնելու Թուրքիա, Ներկայ պաշտօնեաերաւն մեծագոյն մասին ձեռքով, և անհրաժեշտ պէտք է որ Եւրոպացի կարող ու փորձառու անձնաւորութիւններ բերուելով անոնց յանձնուի գործը, թէ՛ օրինագիծը պատրաստելու և գործադրելու: Ուրիշ ճար ու միջոց չեմ գիտեր եւս Եւրոպացին միայն կարող է անաշառ, անկաշկանդ, յարատեն ու միօրինակ հսկել և գործադրել տալ: Եւ անգամ մը որ բարեկարգութիւնները մեր՝ թէ՛ ժաղաքրդեան և թէ պաշտօնէից սովորութիւններաւն, բարքերաւն մէջ մտնեն, մենք կը նանք անկէ եաբը շարունակել մեզմավ, ժաղովուրդ և պաշտօնէութիւն դիրար հակակշռելով, երարու յօնքրոյ ըլլալով, ինչպէս արեւմնեան երկիրներուն մէջ:

Այս մասին զարմանալի երեւոյթ մը կայտ
Մինչդեռ Յուղբիոյ ամէն շրջաններուն մէջ
Երբոպացի տարրին մնաւաքն ընդունուած է ու
լայնօրէն գործադրուելով՝ անկէ օգտաւած
ենք, առանց ո՛ւ և է առարկութեան, կառ-
կածի կամ նախապաշտման, լոկ կառավալա-
րսկան շրջանակներուն մէջ կը յամառինք
առարկ գործադրումը մերժել, ու Եւրոպացի
չգործածելու նախանձախնդիր կը հանդիսա-

նանք Ատիկա անսփորմ կուգոյ մեր քիմբին,
ումոնեան հայրենասիրութեան հակառակ
կը ուեպուի, մինչև իսկ դաւաճանութիւն կը
չեցէ ուսոնց համար: Եւրոպացի կարող
բժիշկներու առարկութիւն չունինք, մասնա-
ւանդ թէ կը փնտուենք զանոնք: Երբ հիւանդ
մը ունենանք, շօվլնութեան կարգը չէ: Ամե-
նէն նպատակայարմար միջացին, ամէնէն փոր-
ձառու բժիշկին կը դիմենք, առանց աղջն ու
երկիրը հարցնելու: Երբ Սուլլան Զամիտ
ինքն ալ հիւանդացաւ, Եւրոպայէն բժիշկ
բերել ապէ չվարանեցու: Երբ բարձրագոյն
կրթական վայրի մը Զամալսարան, Լիսէ,
եւայլն գասառու կամ մասնագէտ փնտուենք,
չենք վարանիր մինչև Եւրոպա դիմել: ազգն
ու երկիրը խնդրոյ առարկայ չենք ըներ. կա-
րողութիւն և փորձառութիւն կը պահան-
ջենք ամենայն իրաւմամբ: Երբ մեծածախ
չենք մը կառուցանել ուզենք, եւրոպացի
չենք մը կառուցանել ուզենք, թէ պէտ մեր
ճարտարապետը չենք անարգեր, թէ պէտ մեր
երկրին մէջ ալ կարողներ չպակսին: Երբ եր-
կաթուզիի դիմ մը շինել կ'ուզենք, հանք մը
բանալ և շահագործել, Եւրոպացին կը յանձ-
նենք գործը և չենք զջար: Եւրոպական մե-
քենաները մեր հնօրինյ գործիքներէն նախա-

պատիւ կը համարենք ու բարձր գիներով կը գնենք: Եւրոպական հագուստն ու ներածեռութիւնն ամէն տուն անարդել մոտած են, կայսերական, իշխանական, փաշայական պալտաներէն սկսեալ: Թէրուանէ, Թօփիչանէ են. ևն. ունենալով հանդերձ, մեր թէ՛ վաճառականական թէ՛ պատերազմուկան նուռերն Եւրոպայէն կը գնենք, մինչև իսկ անոնց հիները սուղ գիներով կը գնենք, մեր թնդանօժները, զէնկերը, ուազմամթերքը Եւրոպայէն բերել կուտանք: և գեռ ո՞ր մին ըսեմ կամ թուեմ: Հաշիւի չեն գար Եւրոպայէն ստացած մարահնիս: Ու միայն նախապաշտում կայ կառավարական շրջանի մէջ Եւրոպացի գործածելու դէմ:

Զարմանալի և հակասական չէ՞ք գտներ ասիկա, որ երբ անձի մը կեանքը վասնդի մէջ է, վարպետ եւրոպացի բժիշկ մը գործածելու դէմ առարկութիւն չկայ, ու երբ լոլոր երկիրը հիւանդ է վարչական հիւտնդութեամբ, կը տառապի, յօռի վարչութեամբ, առականեալ պաշտօնէութեամբ, կը վարանինք այս որոշ հիւանդութեան մասնագետ վարպետներուն դիմել, վարպետներ որ փորձով ցցուցած են իրենց հմտութիւնը, բարեկարգած,

վարդացուցած են մերինին չափ և աւելի վաս գրաւթեան հասած երկիրներ, հարստացուցած ու երջանկացուցած են ազգեր, որոնց պարագան անյօյս նկատուելով, իրը կորլստեան մատնուած ձեռքէ ձգուած էին: Ինչու չենք հրաւիրեր ու բերեր այս վարչական վարպետ բժիշկներէն մէկը, մէկ քանին և ըսեր. Ա.Ման, Տոֆ. կժէնիսի, սա մեր մահամերձ հիւանդ երկրին նաւզին նայէ, եւ յեղ ու դարման մը ընելով մահուան ճանկէն ազատ զայն»:

Ուստի, միակ ճարը Եւրոպացիներուն ձեռքով և հակակլախն տակ բարեկարգելն է: Եւրոպացի կարող, փորձառու վարչագէտ մը բերել և իրը ներքին վարչութեան զլուխ նստեցնելու է Պազլ Ալին, տալով իրեն պէտք եղած գործելու ազատութիւնը, և գործադրելու զօրութիւնը, և թող տեսնուի թէ ի'նչպէս շուտ և ի'նչպէս դիւրաւ կը լարեկարգուի երկիրը, իրը թէ մնդական գաւառ նպատակով կ'առաջարկեմ: երբ մնի Եղիպատոսի անգլիացի քօմիսէր Լօրա Քրօմըլը Եղիպատոսի անգլիացի քօմիսէր Լօրա Քրօմըլը բերել իշխանութեան գլուխ անցընել, իրը բերել իշխանութեան գլուխ անցընել, իրը Օսմ. բարձրագոյն պաշտօնեան Օսմ. օրինաց

Ա Ս Թ Ի Լ Մ Ը

Փրօփ. Ա. Կ. Կիւլպէնկիւան

Կաթիւ մը ցող

Դոհար վարդին՝ չքնաղագեղ ու բուրեղ՝
Տոտակին մէջ կը պազըզայ գերդ բիւրեղ
Ու երկինքէն թաշող շողի մ'ալ սոկի
Ցուշիկ, փափուկ թերթերուն մէջ

սողոսկի . . .

Շաղն համինյրո՛վը տաք շողին կը հալի՛.
Անկեղծ սիրոյ ցոլացիկ ջինջ հայելի . . .

Կաթիւ մ'անձրեւ

Հեք մը շակին տչքերուն մէջ տրտմագին՝
— Ար անքըթիթ յառած են մաւթ երկենքին,
Կը կայլտկի վերէն՝ բնդ համ, մեղմ ու զով:
Տագնապայոյզ կը լեցուի սի՞րտը, յուսալ . . .
Կ'արծարծի՛ բոցն իր աննըկուն եռանդին,
Ու կ'երազէ՛ հասկերն սոկի՛, գերտն-
դին . . .

Կաթիւ մ'արցունք

Կը լը ճանայ մօր աչքերուն մէջ փարփառ,

Մինչ իր նայուածքը սեւեռած անբարբառ
Հեռուն, անծիր հորիզոնէն ալ անդին՝
Զո՞ւր կ'ըսպասէ ցուքտ երեկօն կաղանդին,
Տեսնել լսառւե՛րը գէթ որդւոյն իր
նժդեհ . . .

Կը բորբոքի՛ անլոց՝ սրտին մէջ՝ հրդեհ . . .

Կաթիւ մը գեղ *

Կապոյտ, կարմիր, և կամ ոքսիտ երկաթի
Գիրդ փետուրին խոցուած սրտէն կը
կաթի՛ . . .

Աղնի՛ւ, բարի՛, վէ՛հ խորհուրդի վրայ
խորի՛ն . . .

Եւ հազարնե՛ր, բիւրաւորնե՛ր կը խորհին
Սոսկ մէ՛կ բառի սոկեզօծած հըմայուն
Նըկարին վրայ՝ երկրի, երկնի կամ
ծովուն . . .

Կաթիւ մը Աէր


Կեանքի անհամ ու դառնութեամի
թաթակին մէջ կը կայլակի՛ երկնադոյն . . .
Կը փարատին անյուսութեան սեւ ամպեր.

* մանաք, մելան:



ԿԱՐԱՊԵՏ Գ. ԳՈՃԱՆՈՎ

ԱՌ չիք անէծք թշուառ կետնքին
իստալեր-
Ծիծզուն հըելտակը ցոյց կուտայ ապագան,
—Պատ' կն՝ երազոց սակի՞ վաղ կամ ա-
նագան



ՀԱՅՈՂԻՆ ՊԱՏԻՒՔ

Կ. Դ. Դօճակեան

Արեւ աշխարհ ձեղ թող ըլլան, ո'վ վատեր,
Գէթ մի՛ դպչիք Հայուն անբիծ պատիւին.
Զարդ ու թալան դուք ձեղ հէլալ եք ըրեր,
Գէթ մի՛ դպչիք Հայուն անբիծ պատիւին:

Արեւ-Աշխարհ ձեղ թող ըլլան, ո'վ
վատեր . . .
Ճակատագրի բիրտ, վիթխարի գերանդին
Կորդեց Հայուն փողփողուն փառքն պերճ
ու հին.

Ազգեր ելան, ազգեր իջան գահերէն.
Տագնապումի թոհուբոհին մեջ նորէն

Հայուն պատիւն անբիծ զծ վճռեց
սէդ Երկին:

Փարեցաւ Հայն իր պատիւին հոգեւին
Արեւ-Աշխարհ ձեզ թող ըլլան, ով վատեր:

Գէթ մի՛ դպչիք Հայուն անբիծ պա-
տիւին.

Սիրով շնորհեց գոնէ ոյդ փառքը Երկին
Գողգոթներուն նորերն կանգնեց հազար
բիւր.

Տաժանքի հոծ լեռնացումի հետ արդէն
Զուլուած Հայուն սեւ-բաղդ ցաւերն ահ
առթեն:

Փարեցաւ Հայն իր պատիւին հոգեւին
Գէթ մի՛ դպչիք Հայուն անբիծ պատիւին:

Զարդ ու թալան դուք ձեզ հելաւ
եք ըրեր.

Արդարութեան ձայն կը լռէ անարտունջ,
ինչպէս առիւծ մերթ կը լռէ անմռունջ.
Լըռութիւնն է մերթ սոսկալի պատախազ,
Լուծէ վրբէժ ահեղարկու, անկասկած:
Մէկ Արելի արիւն ցնցեց Մեծ Եահվէն,
Բիւր Արելներ է՞ր չ'իջեցնեն զԱյն Գահէն:



ՊԱՏ. ՀԱՅԿԱԶՈՒՆ Ս. ԽԱՆԴԱՄՈՒՐԵԱՆ

Զարդ ու թալան դուք ձեզ հետեւ,
Եք ըստեւ,

Գեթ մի՛ դպչեք Հայուն անբիծ պատիւին.
Արեւ-Աշխարհ ձեզ թող ըլլան, ով վատեր,
Գեթ մի՛ դպչեք Հայուն անբիծ պատիւին:

Օ Ր Բ Ե Ր Պ

Պեր. Հ. Խանկամուրեան

1. Քնացիր հռդիս մուշիկ, մուշիկ,
Փակէ աշերդ յուշիկ, յուշիկ.
Մինչ մայրդ զուարթ՝ արթուն աչքով
Կը հսկէ քեզ օրբանիդ քովլ.
Քնացիր, աղուորս լուիկ, հանգարս,
Մինչ մօրլդ հետ, աչքովլ անթարթ,
Ծաղիկ, թռչուն, երկինք, սար, ձոր,
Զեփիւու, աղբիւր, անտառ ծործոր,
Կերդեն անուշ օրօր:

2. Ննջէ, ննջէ, անուշ հռդեակ
Մինչ քունդ խաղա՛ղ, անմեղունակ.

- Եւ մինչ ժխոր, ալիք կեանքին,
Զեն խռովեր հոգիդ անգին:
Քնացիր, աղուորս, լոիկ, հանդարտ,
Մինչ մօրըդ հետ՝ աչքով անթարի՛,
Ծաղիկ, թռչուն, երկինք, սար, ձոր
Զեփիւռ, աղբիւր, անտառ, ծործոր,
Կերգեն անուշ օրօր . . . :
3. Քնացիր մանկիկ մինչ քեզ համար,
Կեանք և երազ գեռ նոյն, հաւ՛սար.
Գոռն քուն, իսկ ես աչքով արթուն,
Աղըինք, ապրինք կեանքն երազուն:
Քնացիր մանկիկ, և լուն.
4. Նիրհէ, նիրհէ իմ նօնոշիկ,
Երբ կը շարժեմ օրօրոցդ գողարիկ.
Տաք յոյսերով սիրտս ալ օրոր,
Աշխարհ շարժի կարծես ըոլոբ:
Քնացիր, մանկիկ, և լուն.
5. Փակէ աչքերդ, ո՛չ, մինինիկ
Լուռ: Ծառ, երկինք, թռչուն, ալիք:
Քնացիր, մինչեւ իմ հեղանազ
Համբոյլներէս ա՛լ արթնաս:

ՄՐՑԱՆԱԿԱԽՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Խնդիրներ, զորս լուծողը կ'ստանայ Զէ-
նիթ ժամացայց մը արծաթեայ: Բազմաց մէ-
ջւն բուեն կորուէ մրցանակին սրութ տըր-
ուփիլ: Պատասխաններն մեր ձեռք գտնուելու-
նն մինչեւ 1914 Զատկի երկուշարթի օրը,
2 դրուշի նամակադրոշըն:

1. Թաէն պէտք եմ եկեղեցւոյ սուրբ պաշ-
տաման,
Ստկայն կ'ըլլամ անմեղ մանկան վայր
հանդստեան,
Եթէ գլխուս մի մահցու բուռն հար-
ուած տան:
2. Հայրը ներկայիս 40 տարեկան է իսկ որ-
դին 9 տարեկան. արդ քանի՛ տարիեն
հայրը որդիին տարիեին կրկինը պիտի
ունենայ:

3. Թուէ 40 Հայ զօրավարներ և պատմէ
անոնց քաջագործութիւններն միայն 400
բառ գործածելով:

—

4. Զորս լրւցկի առ, մէկ հատը մէջտեղէն
կտրէ և անոնցմավ թիւեր ձեւացուր .
ո՞րն է էն մեծ և ո՞րն է էն փոքր թիւը:

—

4. Տասն Հայ լանաստեղծներէ մէյմէկ տող
քաղելով 40 առղէ բաղկացեալ նոր լա-
նաստեղծութիւն մը կազմէ որ կտառը-
եալ իմաստ մը արտայայտէ:

—

5. Կերկայիս որդիս ինձմէ 4 անդամ՝ փոքրէ,
4 տարիէն, սոկայն, ես որդիէս 3 անդամ՝
մեծ պիտի ըլլամ. քանի՞ տարեկան է որ-
դիս և քանի՞ տարեկան եմես Ճիշտ հիմա:

—

6. Օրն ի բուն զիս, նաև գիշերն,
Անգիծաբար կախեն կիներն,

- Առառուն միոյն զիս վար կ'առնեն,
Որպէս զի զիս ի գործ ածեն:

—

- 7 Յիշէ տասն Հայ վաճառականներ և անոնց
բարենպատակ նուելներն, միայն 25-30
տող պարսնակող գրութեամբ:

—

8. Տարօրինակ փղսոկրի մի կտոր, որ եթէ
ծակելու ըլլայ բուռն ցաւ կը պատճառէ:

—

9. Մէկ տասն մէջ հինգ եղբայր ենք մենք,
իւրաքանչիւրս թաղակիր ենք:

—

10. Շատ թոշաք թիւ մ'է այն, որ եթէ 7ու-
բազմապատկես, կարծես թէ վրան 7 գու-
մարեր ես:

Հայոց առաջնորդության պատճեն

ԹՈՒԱՆՇԱՄԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՎԿՄԸ

$1 \times 8 + 1 =$	9
$12 \times 8 + 2 =$	98
$123 \times 8 + 3 =$	987
$1.234 \times 8 + 4 =$	9.876
$12.345 \times 8 + 5 =$	98.765
$123.456 \times 8 + 6 =$	987.654
$1.234.567 \times 8 + 7 =$	9.876.543
$12.345.678 \times 8 + 8 =$	98.765.432
$123.456.789 \times 8 + 9 =$	987.654.321

$1 \times 9 + 2 =$	11
$12 \times 9 + 3 =$	111
$123 \times 9 + 4 =$	1.111
$1.234 \times 9 + 5 =$	11.111
$12.345 \times 9 + 6 =$	111.111
$123.456 \times 9 + 7 =$	1.111.111
$1.234.567 \times 9 + 8 =$	11.111.111
$12.345.678 \times 9 + 9 =$	111.111.111
$123.456.789 \times 9 + 10 =$	1.111.111.111



ՍՐՅՑՄԱՆ ՏԱՐԱՄԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑԻ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑԻ

2
Պահեկան

4 9 1 4

Այս տոմսը կտրելով ու վրան երկու դանեկանի օրուանեան
համակարգությունը կը խրկեմ խնդիրներուն լրջման հիմ:

Անուն

Հասցէ

Zurh

Ի ՆՊԱՍ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՅԻՆ

Ուր կը պատսպարուին, եւ կը դաստիա
րակուին Հայրենեաց իբր 25 զանազան կող
մերէն հաւաքուած ՀԱՅ ՈՐԲՈՒՀԻՆԵՐ:

ԳԻՆ 3½ ԴՀԿ.

14164